Հիմա քու զով կանաչին դէմ հոգիս դո՛ղ մ՚է երկար ու թաց,
Ցուզման պահն է որ կը հրպի իմ ճակտիս լո՛յն եղբայրութեան.
Ծառերուն մէջ դուն կ՚օրօրուիս զեփիւռի մեղմ թեւի նըման,
Ու չես գիտեր որ լոկ ես եմ այսօր ցաւով մը պարտասած։

Հիւղակներ կան քու ծոցին մէջ որ կը սեղմեն սի՛րտն իմ յոյզով,
Ու փայտաշէն պատուհաններ որոնց ետեւ կ՚ապրէին լըռին
Իմ շողակերտ երազանքներս և յուզումներս լեցուն յոյսով,
Որոնք այլեւս չեն ճանչնար զիս և ոչ ալ տա՛ղն իմ թախծագին։

Հեռո՛ւ, հեռո՛ւ փախաւ ինծմէ չքնաղ տարիքն իմ զուներփեան,
Հիմա ճակատն է իմ լայնցած, ուրկէ խոհեր են անցած յար,
Հոն մեռելներն են զետեղած իրենց վերջին ակնարկն երկար,
Ես տեսած եմ նոյն իսկ մեռնիլն իմ հոգիիս քո՛յր աղջըկան։

Ո՜, սեղմէ՛ զիս քու մայր կուրծքին անդորր գիւղակն իմ երազիս,
Ու հանգչեցո՛ւր իմ անհանդարտ սրտիս զարկերն անդաստական.
Բա՛ց քայլերուս դէմ ամէն ինչ, ամէն ճամբայ որ տանի զիս՝
Հո՛ն ուր ճանչցայ սէրն առաջին իմ առաջի՛ն անմեղութեան։

Դուն մի՛ ըսեր որ եկած եմ ես քեզ այցի, անո՛յշ գիւղակ,
Ու թող ոչ ոք գիտնայ որ ես տարիներ վերջ քու մօտ կըկին
Գըտայ հանգի՛ստ և օրհնութիւն, թէ տրտմութիւնն իսկ անպարփակ՝
Հոս բարութի՛ւն մ՚է անսովոր տըւայտանքին ո՛րբ հոգիին։

Կ՚իջնէ գիշերն, ես մինակ եմ, ես առանձի՛ն լուսնին դիմաց,
Կը բարձրանայ խաւարն երկրէն ծովուն շաչին պէս խօլական.
Դուն կը թաղուիս քու նինջին մէջ, մինչ կը սկըսին իմ տիրական
Քայլերս հընչել բարձունքներուդ լըռութեան մէջ համատարած։

1936

Բժ. ԱՐԱՄԱՅԻՍ ՄՐԱՊԵԱՆ

## ԲԱՐԵՄԱՂԹՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔ

## ՆԱՄԱԿՆԵՐ, ՈՒՂԵՐՁՆԵՐ
## ԵՒ
## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

SEGRETERIA DI STATO
DI S. SANTITÀ

*dal Vaticano, die 28 Maii 1936*

N. 155631

Rev. Patri
P. GARABED AMADUNI
Procuratori Generali
Congregationis Mechitaristarum Venetiarum
ROMAM

*Rev.me Pater,*

Augustus Pontifex nuntium percepit, Cui suavis fuit Ei delectationis causa, scilicet duo meritis clara Instituta alterum Venetiis «Moorat-Raphaël», alterum Lutetiae Parisiorum «Samuel Moorat» appellatum, a Congregatione Mechitarista iuventutis educandae causa condita, saecularia sollemnia mox actura esse.

Juvat Beatissimum Patrem iucunda et grata memoria utilitatum cumulum recensere, quem diuturno temporis spatio utrumque peperit Institutum, ubi Armenorum adolescentium flos in dilectae spem patriae succrescens disciplinis et artibus instrui litteris imbui contendit atque catholici nominis maiestatem vereri et pie Deum colere et in ardua molienda prosilire discit.

Dum fauste adhuc acta lauro redimit, Augustus Pontifex paterno studio motus faustissima admovet vota, ut geminum Institutum ad amplius nobilissimae Armenorum gentis decus et gaudium vigescat, splendeat virtutis ornamentis doctrinae laudibus floreat.

Haec praesagia Apostolica Benedictio fulcit, quae in duabus memoratis domibus degentibus coelestia lumina et auxilia salutaria precatur.

Interea qua par est observantia me profiteor

tibi
addictissimum
E. Card. PACELLI





ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹԻՒՆ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ

*Վատիկան*, 28 *Մայիս* 1936

Թ. 155631

Առ Վեր. Հայր
Հ. ԿԱՐԱՊԵՏ ԱՄԱՏՈՒՆԻ
Ընդհանուր Գործակալ
Վենետկոյ Մխիթարեան Միաբանութեան
ի ՀՌՈՄ

*Մեծարգոյ Հայր*

Սրբազան Քահանայապետը լուրն առաւ, եւ իրեն քաղցր եղաւ եւ բերկրութեան առիթ, թէ երկու արդիւնաշատ Հաստատութիւններ՝ մին Վենետկոյ մէջ «Մուրատ-Ռափայէլ» եւ միւսն ի Բարիզ «Սամուէլ Մուրատեան» կոչուած՝ Մխիթարեան Միաբանութենէն հիմնուած՝ երիտասարդութեան կրթութեան համար, ի մօտոյ իրենց հանդիսաւոր հարիւրամեակը պիտի տօնախմբեն։

Մեծապէս հաճոյ է Ս. Քահանայապետին թուել մի առ մի բերկրական եւ սիրելի յիշատակաւ այն ամբողջ բարիքը զոր պտղաբերեցին այնքան երկար ժամանակ՝ երկու Հաստատութիւնները՝ որոնց մէջ Հայ ազգին երիտասարդ ծաղիկը հեռզհետէ փթթելով ի յոյս սիրելի հայրենեաց, կը ջանայ զարգանալ ուսումներով եւ գեղարուեստով եւ գրականութեամբ յագենալ, եւ կը սորվի կաթողիկէ անուան վեհութիւնն յարգել, բարեպաշտութեամբ զԱստուած պաշտել, դժուարութիւններն հարթելու դիմագրաւել։

Մինչ բարեբախտութեամբ դափնիով կը պսակէ կատարած գործերը, Գերագոյն Քահանայապետը շարժած հայրական սիրով, խնդագին մաղթանքներ կ'ընէ, որպէս զի զոյգ Հաստատութիւնները յաւաւելագոյն պարծանս եւ յուրախութիւն ազնուագոյն Հայ ազգին տեւեն տոկան, փայլին առաքինութեան պերճանքով եւ ծաղկին գիտութեան գովեստներով։

Այս բարեմաղթութիւնները կը հաստատէ Առաքելական օրհնութիւնը, որ կը հայցէ յիշեալ երկու հաստատութեանց մէջ բնակողներուն երկային լոյս եւ փրկական օժանդակութիւն.

Այս առթիւ խորին յարգանօք կը մնամ Ձեզ անձնուէր

Եւգինիոս Քարտինալ ՊԱՉԵԼԼԻ

digitised by A.R.A.R.@

# ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ

# ԱԻԵՏԻՍ ՊԵՏՐՈՍ ԺԴ. ԱՐՓԻԱՐԵԱՆ

## ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

## ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ՍՈՒՐԲ ԳԱՀԷՆ ՀՌՈՎՄԱՅ

*Սիրեցեալ Որդւոյ Մերում Վեր. և Գեր. Հօր*

*Սրապիոն Վ. Ի Ուղուրլեանն ընդհ. Աբբահօր Միաբանութեանն*

*Մխիթարեանց որ ի Վիեննայի*

*Ողջոյն և Առաքելական Օրհնութիւն.*

Յերկարամեայ պաշտօնատարութեան Մերում ի վիճակս վիճակս Հայ Կաթողիկէ նուիրապետութեանս, բազում այն է զի ականատես եղեաք աւերածոյ քան շինութեան. այնպէս զի, յամբառնալն մեր յաստիճան Հայրապետութեան Տանն Կիլիկիոյ, համարեաց համեալ եւ առ մեզ գոյժ աւերի, որ երբեմն առ Յոբ Նահապետ եհաս «անկաւ տունն ի վերայ որդւոց քոց եւ վախճանեցան» (Ա. 19):

Օրհնեալ լիցին կամք Տեառն, որ եթէ թոյլատու լինի զի խորտակեսցին ազգք եւ քաղաքք, նոյնն կարող է եւ զաւերեալսն յարուցանել եւ զկործանեալսն անդրէն հաստատել: Այլ մեք առաւել ինչ քան զխրախոյս ակնկալութեանս ունիմք առ աւօր, եւ ընդ այս խայտամք ի սրտէ եւ գամք հրճուիլ ընդ Ձեզ, Վեր. Հայր, եւ ընդ համօրէն ուխտակիցս քո: Քանզի ի դառնաթախիծ տեսլեան աւերակաց որք թաղեալ խորեցին զամենայն հաստատութիւնս Հայաբնակ գաւառացս, արդարեւ ուրախարար իմն է եւ արժանի համդխութեան մնացականութիւն ընդ ամս հարիւր վարժարանիդ, որ յորջորջեալն է «Մուրատ-Ռափայէլեան» զուգաւորեալ անուամբք անմահանուն բարերարաց: Չէ՞ ապաքէն նկատել յայս դէպս հանդիսական տարեկանացդ նշանակ իմն բարեխնամ Տեսչութեան Տեառն զՏանէ Հայաստանեայց եւ զազգէ՝ եթէ ունի Տէր շինել անդրէն եւ բարձրացուցանել զվայրանկեալսն: Հաւատք մեր յայամ արծարծին յուսով՝ այնր աղագաւ մանաւանդ զի զմանկանց եւ զերիտասարդաց տօնեմք զինամեայ հաստատութիւնն, իբրեւ զորդի հարիւրամեայ, որ խտացեալ բերէ յինքեան եւ պահէ գոգցես զառյապայ



ԳԵՐՊ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՔԵՊՍ. ՆԱՃԼԵԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՆՈՒԻՐԱԿ

digitised by A.R.A.R.@

կեանս անմահ ազգիս մերոյ եւ Հայրենեաց։ Քանզի նորոգումն երիտասարդի, ըստ իմաստնոյն, եթէ յանձին եւ եթէ մանուանդ ի մանկամունսդ հաստատութիւնս երաշխաւորէ զճանապարհս ծերութեան, եւ ծերութիւն պատուական ի ձէթ պարարտութեան է լապտերի կենաց մանկութեան եւ պսակ պարծանաց որդւոց եւ թոռանց, այնպէս զի «փոխանակ հարց եղիցին որդիքն»։ (Առակ. ԻԲ. 6, ԺԶ. 31, Սաղմ. ՃԺԸ. 9)»։

Այպա վարժարանդ «Մուրատ-Ռափայէլեան» իրաւամբք բերկրեալ հրճուի այսօր որպէս մայր որդւովքն (Սաղմ. ԺՃԲ. 9.), զորս յընթացս հարիւր ամաց վերստին ծնեալս ի հոգի եւ Ազգի եւ Եկեղեցւոյ, արս արդարեւ հանճարեղս, ականաւորս յամենայն մարզս գիտութեանց, արուեստից եւ գրոց, նոյնպէս եւ առաւել եւս խոստանայ զնոյն աճումն հոգեծնունդ աճել։ Զի Հարքդ Մխիթարեան Միաբանութեան յայդ ինչ կարգեալ եւ կայք ըստ ուխտի մեծի Հիմնադրիդ Մխիթարայ, զի շաւիղ հորդեսջիք ի դերբուկ եւ յաւերեալ անցս աշխարհիս Հայոց. ջահս մտաց վառեսջիք որոց ի խաւարի են, եւ ուր պէտք կարեաց յաճախեն պնդագոյնս հասջիք առաքելական խոյանօք յօճան մանուանդ եւ յառաջնորդութիւն ուսումնատենչ մանկտւոյն։

Խեղամուտ այսմ ամենայնի եղեալ չկամեցաք անմասն եւ մեկուսի մնալ ի Ցոբելինական հանդիսութենէդ. այպա եւ առաքեցաք այդր զընդհանուր փոխանորդ Պատրիարքութեանս զԱրհի. Նազլեան Յովհաննէս Արքեպիսկոպոս Տարսոնի, զի ընդ մեր առաջիկայ գտանիցի եւ ընդ թղթոյս բերցէ զխնդակցութիւն մեր ընդ յայս դէպս հարիւրամեայ շրջանի հոյակապն եւ բազմահռչակ վարժարանիդ, որ պսակ է պարծանաց Միաբանութեանդ եւ Բարերարաց նորին, որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի։

Այպա թողեալ Արհի. փոխանորդին մերում լնուլ զոր ինչ միանգամայն չէր հնար հակիրճ թղթովս բովանդակել ի մի բան, եւ զորս տածեմք ի սրտիս եւ ի միտս, մանաւանդ ի խնդրուածս մեր առ Աստուած՝ վասն ամենայն աշխատաւոր մշակաց յայգւոջ Տեառն, զմաղթանս եւ զիղձս մեր վասն հանդերձելոց արդեանց, որոց ակն ունիմք ի բազմաբեղուն գործոցդ ընդ յամայր ամս, ցորքան կեցցէ անմահ ազգն Հայոց։ Եւ ի կնիք այսոցիկ մաղթանացս եւ ըղձից սրտիս եւ ի հաւաստիս առանձինն սիրոյս շնորհեմք Քեզ, Սիրեցեալ Որդեակդ ի Քրիստոս, Աբբահայր Մխիթարեան ուխտիդ, Միաբանակցացդ եւ համօրէն Սանուց հնոց եւ նորոց «Մուրատ-Ռափայէլեան» վարժարանիդ զհայրապետական օրհնութիւն։

Տուեալ ի Պատրիարքարանէս որ ի Վերիտոն, յառաջնում աւուր ամսեանն Օգոստոսի 1936 ամի։

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

† ԱՒԵՏԻՍ ՊԵՏՐՈՍ ԺԴ. ԱՐՓԻԱՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

*Beyrout, 22 Août 1936*

T. R. Père Sérapion Uluhogian
Abbé Gén. de la Congrégation Méchitariste
S. Lazzaro, Venezia, Italia

*Mon Très Révérend Père Supérieur Général,*

Nous avons reçu avec plaisir votre aimable lettre du 5 ct, qui nous annonce pour le 16 le centenaire de votre Collège de Mrs. Mourad et Raphaël, ses fondateurs.

Tout d'abord, laissez-nous vous assurer combien nous partageons votre joie si légitime à cette occasion, et, avec vous, quelles ferventes actions de grâces nous élevons aux pieds du Très Haut pour les multiples bienfaits que Sa Bonté vous a donné de réaliser en un long siècle, à tous points de vue.

Ensuite nous vous félicitons de cette excellente activité de votre pieuse Congrégation, et nous lui souhaitons l'abondance des faveurs divines pour continuer cet Apostolat si méritoire, et surtout pour que votre belle Nation Arménienne sache en retirer tout le profit que l'Eglise est en droit d'en attendre, devant vos sacrifices.

Veuillez agréer, mon Très Révérend Père Général, nos meilleurs sentiments en NSJC

I. G. Cardinal Tappouni
Patriarche Syrien d'Antioche

*Պէյրութ, 23 Օգոստոս 1936*

Գեր. Հ. Սրապիոն Ուլուհոճեան
Ընդհ. Աբբայ Մխիթարեան Միաբանութեան
Ս. Ղազար – Վենետիկ – Իտալիա

*Գեր. Հ. Սրապիոն Ընդհ. Մեծաւոր*

*Հաճոյքով ստացանք ընթացիկ ամսուս 5 թուակիր Ձեր սիրելի նամակը որ մեզի կ'աւետէր 16ին հարիւրամեակը Ձեր վարժարանին «Մուրատ և Ռափայէլ»ի որոնք իր հիմնադիրներն են։*

*Նախ թոյլ տուէք մեզի Ձեզ վստահացնել թէ որքան հաղորդ ենք Ձեր այնքան օրինաւոր ուրախութեան այս առթիւ, և Ձեզի հետ ուրկիսի ջերմեռանդն գոհութիւն կը բարձրացնենք յոտս Բարձրելոյն այն բազմապատիկ բարեաց համար զորս իր Բարութիւնը իրագործել տուած է Ձեզի դարու մը երկար շրջանին, ամէն տեսակէտով։*

*Յետոյ Ձեզ կը շնորհաւորենք Ձեր աստուածանուէր Միաբանութեան սքանչելի գործունէութեան համար և կը մաղթենք աստուածային պարգևներուն առատութիւնը շարունակելու համար այդ մեծապէս արդիւնալից Առաքելութիւնը և մասնաւորապէս անոր համար որ Ձեր ազնիւ Հայ Ազգը գիտնայ քաղել բոլոր օգուտը՝ զոր Եկեղեցին իրաւամբ կ'ակնկալէ ի տես ձեր զոհողութեանց։*

*Հաճեցէք ընդունիլ, Գերյարգելի Ընդհանրական Հայր, մեր լաւագոյն զգացումներն ի Քրիստոս Յիսուս Տէրն մեր.*

*Ի. Գ. Քարտինալ Թափփունի*
*կաթողիկոս Ասորւոց Անտիոքի*



IL PREFETTO DI VENEZIA

*Venezia, 30 Agosto 1936 XIV*

Reverendo Padre
Dott. Serapion Uluhogian
Abate Generale della Congregazione Mechitarista
Collegio Armeno — Venezia

*Reverendo Padre,*

Per incarico ricevuto, sono lieto de rendermi interprete dei vivi ringraziamenti per il telegramma di omaggio inviato dalla S. V. Rev.ma a S. E. il Capo del Governo.

Con i più distinti saluti.

Catalano

ԳԱՒԱՌԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՎԵՆԵՏԻԿՈՅ

*Վենետիկ, 30 Օգոստոս 1936 ԺԴ*

*Գերյարգելի Հայր*
*Հ. Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան*
*Ընդհ. Աբբայ Մխիթարեան Միաբանութեան*
*Հայ Վարժարան — Վենետիկ*

*Գեր. Հայր*

*Համեմատ ընդունած հրահանգիս ուրախ՝ եմ թարգմանն ըլլալու ջերմագին շնորհակալութիւններուն՝ փոխարէն այն յարգանաց հեռագրին զոր Ձեր Գերպ. Տէրութիւնը ղրկած էր Ն. Վսեմութեան (Իտալիոյ) Պետական Վարչապետին։*

*Ամենայարգալիր ողջոյններով*

*Քաթալանոյ*

IL MINISTRO DEGLI AFFARI
ESTERI

*Roma, 18 Lug. 1936 Anno XIV*

Padre Serapione Uluhogian
Abate Generale della Congregazione Mechitarista
San Lazzaro - Venezia

*Molto Reverendo Padre,*

Ricevo, con la gradita Sua del 10 corrente, il gentile invito ad assistere alla solenne celebrazione centenaria della fondazione del Collegio Armeno Morat-Raphaël di Venezia, che avrà luogo il 16 agosto prossimo.

Sono davvero spiacente che gli impegni del mio ufficio non mi consentono di intervenirvi, ma desidero farle giungere i miei migliori auguri di successo per la manifestazione ed i miei fervidi voti per l'avvenire del Collegio e dell'intera Congregazione Mechitarista.

Voglia gradire con l'occasione, i miei più distinti saluti.

Ciano

digitised by A.R.A.R.@

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ
ՆԱԽԱՐԱՐ

Հռոմ, 18 Յուլիս 1936 – ԺԴ

Առ Հայր Սերապիոն Ուլուհոճեան
Ընդհ. Աբբայ Մխիթարեան Միաբանութեան
Ս. Ղազար – Վենետիկ

Գերապայծառ Հայր,

Ընթացիկ ամսոյս 10ին ինծի ուղղուած հաճելի նամակով կ'ընդունիմ ազնիւ հրաւէրը ներկայ գտնուելու հանդիսաւոր տօնախմբութեան հարիւրամեայ հաստատութեան Վենետկոյ Մուրատ-Ռափայելեան Վարժարանին, որ տեղի պիտի ունենայ մերձաւոր Օգոստոս ամսու 16ին։

Իսկապէս կը ցաւիմ որ պաշտօնիս պարտականութիւնները ինծի չեն թոյլատրեր ներկայ ըլլալու, բայց կը տենչամ Ձեզի հասցնելու լաւագոյն մաղթանքներս տօնախմբութեան յաջողութեան, և իմ ջերմագին իղձերս Վարժարանին և ամբողջ Մխիթարեան Միաբանութեան ապագային համար։

Հաճեցէք ընդունիլ այս առթիւ իմ ամէնէն յարգալիր ողջոյններս։ . . . . . . .

BRITISH EMBASSY
ROME
248 - 13 - 36

*7th September, 1936.*

The Reverend Father General Abbot,
Mekhitariste Congregation,
St. Lazarus - Venice

*Reverend Father,*

The Secretary of State for Foreign Affairs has instructed me to inform you of the great pleasure which it gave him to receive your kind telegram regarding the centenary celebrations of the Moorat - Raphaël College and to convey to you his congratulations on this event.

In these felicitations I am glad to be able to participate in the name of His Majesty's Embassy.

I beg to remain, Reverend Father,
Yours faithfully,
. . . . . .
(Chargé d'Affaires)

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ
ՀՌՈՄ
248 - 13 - 36

7 Սեպտեմբեր, 1936

Գեր. Հայր Ընդհանրական Աբբայ
Մխիթարեան Միաբանութեան
Ս. Ղազար – Վենետիկ

Գերյարգելի Հայր,

Արտաքին գործոց Պետական Նախարարը հրահանգ տուած է ինձ Ձեզ տեղեկացնելու մեծ հաճոյքը զոր ունեցած է ընդունելով Ձեր ազնիւ հեռագիրը նկատմամբ հարիւրամեայ տօնախմբութեանց Մուրատ-Ռափայէլեան Վարժարանի և հաղորդելու Ձեզի իր ուրախակցութիւններն այս առթիւ։

Երջանիկ եմ որ այս շնորհաւորութեանց կրնամ մասնակցիլ յանուն Նորին Վեհափառութեան դեսպանատան։

Մնամ յարգանօք, Վերապատուեալ Հայր,
Ձերդ հաւատարիմ
. . . . . . .
(Գործակատար)



# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ - ՔԱՐԴԻՆԱԼՆԵՐ

*Roma, 2 Agosto 1936*

Al Reverendissimo
P. Serapione Uluhogian
Abate Generale della Congr. Mechitarista
Venezia

*Reverendissimo Padre Abate,*

La ringrazio di avere voluto portare a mia conoscenza il motivo del giusto compiacimento e esultanza della Congregazione Mechitarista per vedere compiersi il secolo dalla fondazione del Collegio «Moorat e Raphaël» Istituto di educazione per la gioventù Armena la quale ha trovato in questa ispirata Opera il mezzo per formare la mente e il cuore religiosamente, moralmente e scientificamente secondo i veri principi cristiani.

Rendendo grazie a Dio, vi è anche da ringraziare il Servo di Dio Mechitar, Vostro Venerato Fondatore per la protezione che dal Cielo dà ad un'Opera che risponde al suo spirito e affetto che sempre ha avuto per la benemerita popolazione Armena.

Ai figli di Mechitar anche vi è da dare lode, perchè con pietà, studio e sacrifici in questo primo secolo si sono dedicati all'educazione della gioventù Armena, alto mantenendo il prestigio del Collegio Moorat e Raphaël.

Con le benedizioni del Cielo auguro alla Congregazione Mechitarista, e al Collegio Moorat e Raphaël vita sempre più feconda di sante opere, con l'augurio della glorificazione in terra del Venerato Fondatore Mechitar.

Con ossequi mi raccomando alle loro orazioni e mi dico
di Vostra Paternità Rev.ma
dev.mo
† G. Card. Granito Pignatelli di Belmonte
Vescovo di Ostia e di Albano
Decano del S. Collegio

Հռոմ, 2 Օգոստոս 1936

Առ Գերապայծառ
Հ. Սերապիոն Ուլուհոճեան
Ընդհ. Աբբահայր Մխիթարեան Միաբանութեան
Վենետիկ

Գերապայծառ Աբբահայր

Շնորհակալ եմ Ձեզի որ ուզած էիք ինձ տեղեկացնել արդար ցնծութեան և գոհունակութեան շարժառիթը Մխիթարեան Միաբանութեանդ որ կը տեսնէ դարու մը բոլորումը «Մուրատ-Ռափայէլեան» Վարժարանի հիմնարկութեան, կրթական Հաստատութիւն Հայ երիտասարդութեան՝ որ այդ ներշնչեալ տան մէջ գտած է միջոցը կազմելու համար իր միտքն ու սիրտը կրօնքով, բարոյականով և գիտութեամբ՝ քրիստոնէական ճշմարիտ սկզբունքներուն համեմատ։

Երբ Աստուծոյ գոհութիւն կը մատուցանենք, հարկ է շնորհակալ ըլլալ նաեւ Աստուծոյ ծառային Մխիթարայ, Ձեր Երանաշնորհ Հիմնադրին՝ այն պաշտպանութեան համար զոր երկնքէն

digitised by A.R.A.R.@

կը շնորհէ այս Գործին համար որ կը համապատասխանէ իր հոգւոյն և իր սիրոյն՝ զոր ունեցած է հանդէպ երախտաւոր Հայ ժողովրդեան։

Մխիթարայ զաւակներուն ալ գովութիւն տալու է, որովհետեւ այս առաջին դարու ընթացքին բարեպաշտութեամբ, ջանքով և զոհողութիւններով նուիրուեցան Հայ երիտասարդութեան կրթութեան՝ բարձր բռնելով «Մուրատ-Ռափայէլեան» վարժարանի վարկը։

Երկնքի օրհնութիւններով կը մաղթեմ Մխիթարեան Միաբանութեան և «Մուրատ-Ռափայէլեան» վարժարանին՝ միշտ աւելի բեղուն կեանք և սրբանուէր գործեր, մաղթանքով Երանաշնորհ Հիմնադրին՝ Մխիթարայ ամբողջական փառաւորութեան երկրիս վրայ։

Ցարգանքներով զիս ձեր աղօթից կը յանձնեմ և կը մնամ

Ձեր Գերապայծառ Հայրութեան
անձնուէր
Ճ. Քարտինալ Կրանիթոյ փիննաթելլի տի Պէլմոնթէ
Եպիսկոպոս Ոստիայ և Ալպանոյի
Երիցագոյն (Տիրանաւորաց) Ս. Ժողովին

ARCIVESCOVADO
DI
MILANO

*Milano, 4 Agosto 1936*

Rev. P. Serapione Ulohogian
Abb. Gen. Congr. Mechitarista

*Rev.mo Padre*

«Omni tempore diligit qui amicus est», dice la S. Scrittura, e perciò prende spiritualmente parte alla santa gioia del I° centenario dei due loro istituti di educazione Moorat e Raphaël.

Mi unisco alle loro sante preghiere, affinchè la famiglia spirituale del grande Abbate Mechitar, per mezzo dell'ascesi monastica, dello studio e dell'apostolato cattolico si mantenga sempre degna da sì grande e santo Istitutore

Raccomandandomi alle loro sante orazioni, me le confermo in X°.

dev. servo
† Ildefonso Card. Schuster Arcivesc.

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆ
ՄԻԼԱՆՈՒ

*Միլան, 4 Օգոստոս 1936*

Գեր. Հ. Սրապիոն Ուլուհոճեան
Ընդհ. Աբբահայր Մխիթարեանց

«Ցամենայն ժամանակի սիրէ՝ որ բարեկամն իցէ» կ'ըսէ Ս. Գիրքը, և հետեւաբար հոգեւորապէս կը մասնակցի սրբազան ուրախութեան Ա. Հարիւրամեակին ձեր կրթական երկու հաստատութեանց՝ «Մուրատ» և «Ռափայէլ»։

Կը զուգակցիմ ձեր սրբանուէր աղօթքներուն, որպէս զի Մեծն Մխիթար Աբբահօր հոգեւոր գերդաստանը՝ շնորհիւ միայնակեցական ճգնութեան, ուսումնասիրութեան, և կաթողիկէ առաքելութեան միշտ արժանաւոր մնայ այնպիսի մեծ և սուրբ Հիմնադրին։

Ցանձնելով զիս Ձեր սրբամաքուր աղօթից,

Մնամ Ձեզ ի Քրիստոս
անձնուէր ծառայ
† Իլտէֆոնս Քարտինալ Շուստէր
Արքեպիսկոպոս



*Roma, 4 Agosto 1936*

Rev. P. Serapione Uluhogian
Abate Gen. della Congr. Mechitarista
Venezia

*Rev.mo P. Abbate*

La vicina Commemorazione del I° Centenario della fondazione dei benemeriti Collegi Armeni Moorat-Raphaël in Venezia, mi porge gradita occasione per esprimere la mia cordiale simpatia per l'opera di educazione religiosa, scientifica e civile svolta dai Monaci Mechitaristi Armeni a profitto della gioventù della loro nazione. Voglia Dio benedire questo grande popolo martire, voglia portarlo tutto alla Santa Madre Chiesa Cattolica. Possa l'arco della salvezza posarsi un altra volta pacifica sulle sue montagne. Rispetti.

Dev. C. Card. Laurenti

*Հռոմ, 4 Օգոստոս 1936*

Գեր. Հ. Սրապիոն Ուլուհոճեան
Ընդհ. Աբբահայր Մխիթարեան Միաբանութեան
Վենետիկ

Մերձաւոր տօնակատարութիւնը Ա. Հարիւրամեակին հիմնարկութեան «Մուրատ» և «Ռափայէլ» արդիւնաւոր վարժարաններուն ի Վենետիկ, հաճելի առիթը կ'ընծայէ ինձ արտայայտելու համար իմ սրտագին համակրանքս Մխիթարեան Հայ վանականներուն՝ իրենց կրօնական, գիտական և քաղաքային կրթական գործին համար՝ ի նպաստ իրենց համազգի երիտասարդութեան։

Թող բարեհաճի Աստուած օրհնել մարտիրոս այս մեծ ժողովուրդը, թող հաճի զայն առաջնորդել առ մայրն սուրբ Կաթողիկէ Եկեղեցի։

Ո՜ւր էր թէ կարենար փրկութեան տապանը անգամ մ'ալ հանգչիլ խաղաղութեամբ իր լեռներուն վրայ։

Ցարգանօք՝ անձնուէր
Կ. Քարտինալ Լաւրենթի

*12 Agosto 1936*

Al Rev. P. Serapione Uluhogian
Abate Generale della Congregazione Mechitarista
Venezia

*Rev.mo P. Abate Generale*

La ringrazio di avermi informato che codesta benemeritissima Congregazione Mechitarista festeggierà al 16 prossimo venturo il primo centenario della fondazione de'suoi collegi Moorat-Raphaël, da cui sono usciti tanti figli alla Chiesa devoti e tanti ottimi cittadini e valenti scienziati. Godo, e mi rallegro con la Congregazione, del fatto che gli ex allievi stessi e i connazionali hanno voluto essi festeggiare il centenario ed esprimere così la loro gratitudine ai benefat-

digitised by A.R.A.R.@

tori e alla Congregazione. E fo voti che così avvenga, colla benedizione di Dio, nei secoli avvenire e anzi meglio ancora, se possibile, a gloria di Dio, per l'amore della Chiesa Cattolica e per il bene della nazione Armena.

La riverisco e la prego di ricordarmi nelle preghiere.

Dev.mo
Giovanni Card. Mercati

12 Օգոստոս 1936

Գերպ. Հ. Սրապիոն Ուլուհոճեան
Ընդհանրական Աբբահայր Մխիթ. Միաբանութեան
Վենետիկ

Շնորհակալ եմ Ձեզի որ զիս տեղեկացուցիք թէ այդ մեծապէս արդիւնալից Մխիթարեան Միաբանութիւնը մերձաւոր 16ին պիտի տօնէ Առաջին հարիւրամեակը հիմնարկութեան Մուրատ-Ռափայէլեան Վարժարաններուն որոնցմէ ելած են այդքան նուիրուած զաւակներ Եկեղեցւոյ և այդքան բարի քաղաքացիներ ու քաջ գիտնականներ։ Ուրախ եմ ու կը խնդակցիմ Միաբանութեան հետ անոր համար որ նոյն ինքն նախկին աշակերտներն ու ազգայինները ուզած են տօնել հարիւրամեակը և այսպէս արտայայտել իրենց երախտագիտութիւնը Բարերարներուն և Միաբանութեանդ հանդէպ։ Եւ կ'ըղձամ որ այսպէս ալ ըլլայ Աստուծոյ օրհնութեամբ գալիք դարերուն և մանաւանդ թէ լաւագոյնը՝ եթէ կարելի է, Աստուծոյ փառաց, կաթողիկէ Եկեղեցւոյ պատուոյն և Հայ ազգին բարւոյն համար։

Ցարգանքներս Ձեզի և խնդրանքս զիս յիշելու Ձեր աղօթքներուն մէջ։

Անձնանուէր
Ցովհաննէս Քարտինալ Մերքադի

ARCIVESCOVADO
DI FIRENZE

*13 Agosto 1936*

A S. Ecc. Rev.ma
Il R. P. Serapione Uluhogian
Abate Generale della Congr. Mechitarista
Venezia

*Rev.mo P. Abate*

Presento felicitazioni, invocando grazie celesti.

Dev.mo
† Elia Card. Dalla Costa
Arcivescovo di Firenze

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆ
ՖԻՐԵՆՑԷԻ

13 Օգոստոս 1936

Առ Գերպ. Տէր.
Գեր. Հ. Սրապիոն Ուլուհոճեան
Ընդհ. Աբբայ Մխիթ. Միաբանութեան
Վենետիկ

Գերպ. Աբբահայր

Ձեզի կը ներկայացնեմ շնորհաւորութիւններս հայցելով երկնային շնորհքներ։

Ձերդ անձնուէր
Եղիա Քարտինալ տալլա Քոսթա
Արքեպիսկոպոս Ֆիրենցէի

digitised by A.R.A.R.@



Ն. ՇԱՀԻՆ — Վենետկեան Պալատ ու կոնտոլ–նուէր առ Հ. Դանիէլ Վ. Սոմեխանեան



# ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐ

MINISTERO DEGLI AFFARI ESTERI
D. I. E. 3°

*Roma, addì 29 Lug. 1936 XIV*

Telespresso N. 862845

Indirizzato a
P. Cherubino Dr. Cerakian
Direttore del Collegio Armeno
Venezia

Posizione
(Oggetto) Primo centenario Fondazione Collegio Armeno
(Riferimento)
(Testo)

Nel ringraziare vivamente la S. V. per la cortese comunicazione relativa al primo Centenario della Fondazione del Collegio Armeno Moorat-Raphaël, si ha il pregio di portare a conoscenza che questa Direzione Generale sarà rappresentata alla cerimonia del 16 Agosto dal Prof. Umberto Biscottini, R. Provveditore agli studi.

Per il Ministro
. . . . . .

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

*Հռոմ*, 29 *Յուլիս* 1936-ԺԴ

*Վ. Հ. Քերոբէ. Վրդ. Չրաքեան*
*Տեսուչ Հայ Վարժարանին*
*Վենետիկ*

*Մինչ ջերմապէս շնորհակալ կ'ըլլանք Ձեր Տէրութեան այն ազնիւ զեկուցման համար նկատմամբ Մուրատ–Ռափայէլեան Հայ Վարժարանին Հիմնարկութեան Ա. Հարիւրամեակին, պատիւ ունինք հաղորդելու Ձեզի ի գիտութիւն թէ մեր ընդհանուր վարչութեան ներկայացուցիչ պիտի ըլլայ* 16 *Օգոստոսի տօնախմբութեան մէջ փրոֆ. Ումպերթոյ Պիսքոթթինի, Պետական Վերատեսուչ Ուսմանց։*

*փոխանակ Նախարարին*
. . . . . . . .

MINISTERO PER LA STAMPA E LA PROPAGANDA
Ufficio I
N. E. 10-6145

*Roma, 23 Giugno 1936 A. XIV*

Al Rev.mo Sig. Direttore del Collegio
Armeno Moorat-Raphaël — Venezia

Aderendo alle premure fatte dalla S. V. Rev.ma con lettera in data I Giugno corrente indirizzata a S. E. Ciano, questo Ministero ebbe ad interessare vivamente la Presidenza dell'Istituto Nazionale L.U.C.E. a voler disporre la ri-

digitised by A.R.A.R.@

presa cinematografica delle manifestazioni che avranno luogo nel prossimo Agosto per la celebrazione del primo centenario della fondazione di codesto collegio.

È gradito ora comunicare la seguente lettera pervenuta dall'Istituto L.U.C.E.

«Con riferimento al foglio E. 10-5458 del 9 c. m, concernente la celebrazione « del I° centenario della fondazione del Collegio Armeno Moorat-Rafaël di Ve- « nezia; si ringrazia per la gentile segnalazione.

« Si comunica che è stato disposto in merito che un operatore di questo « Istituto provveda a riprendere cinematograficamente le manifestazioni cele- « brative anzidette, nel contempo si prega voler gentilmente indicare in qual « giorno del mese di agosto esse avranno luogo ».

La S. V. Rev.ma vorrà pertanto cortesemente fornire l'indicazione richiesta dall'Istituto L. U. C. E.

per Il Ministro

. . . . . . .

ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼԻ ԵՒ ԾԱՒԱԼՄԱՆ

ՊԱՇՏՕՆԱԳԻՐ Ա.

10-6145

Հռոմ, 23 Յունիս 1936-ԺԴ

Առ Վեր. Հ. Տեսուչ
Մուրատ-Ռափայէլեան Վարժարանին
Վենետիկ

Հաւանելով Ձեր Վեր. Հայրութեան փափաքին Յունիս 1 թուակիր նամակով ուղղուած առ Ն. Վ. Զիանոյ, այս Նախարարութիւնը ջերմապէս շահագրգռել տուաւ «L. U. C. E.» ազգային շարժանկարի Հաստատութեան Վարչութիւնը որպէս զի հաճի տրամադրել շարժանկարի առնելու այն հանդիսաւորութիւնները որ տեղի պիտի ունենան մերձաւոր Օգոստոս ամսուն՝ այդ Վարժարանի հիմնարկութեան Առաջին հարիւրամեակի տօնախմբութեան առթիւ։

Այժմ ուրախ ենք հաղորդելու Ձեզի հետագայ նամակը որ մեզի հասաւ «L. U. C. E.» Հաստատութեան կողմէն։

«Նկատմամբ Ձեր E.10-5458, Յունիս 9 թուակիր թուղթին՝ Վենետկոյ Մուրատ-Ռափայէլեան Հայ Վարժարանի հիմնարկութեան Ա. Հարիւրամեակին խնդրով՝ կը յայտնենք շնորհակալութիւնիս ազնիւ յուշագրին համար։

Կը հաղորդենք թէ այդ նկատմամբ տրամադրած ենք Հաստատութեան պաշտօնեայ մը որ հոգայ շարժանկարի առնելու վերոյիշեալ տօնակատարութեան հանդիսաւորութիւնները, միեւնոյն միջոց կը խնդրենք որ հաճիք ազնուօրէն մեզի նշանակել թէ Օգոստոս ամսոյ ո՛ր օրուան մէջ տեղի պիտի ունենան անոնք։

Ձեր Վեր. Հայրութիւնը ուրեմն պիտի հաճի ազնուօրէն հայթայթել «L. U. C. E.» Հաստատութեանը կողմէն եղած խնդրանքը»։

փոխան Նախարարին

. . . . . .

MINISTERO DELL'AGRICOLTURA

E DELLE FORESTE

*Roma, 20 Agosto, 1936-XIV*

M. R. P. Garabed Amaduni
Proc. Gen. Congreg. Mechitaristi

Trovo a Roma, dopo breve assenza, il cortese invito per la celebrazione del Centenario del Collegio Armeno Moorat-Raphaël tenutasi a Venezia il 16 scorso.

Nel ringraziare del cortese pensiero, formulo i migliori auguri per l'avvenire del Collegio stesso.

Con ogni considerazione

Giovanni Nicotra



ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՆՏԱՌԱՑ

Հռոմ, 20 Օգոստոս 1936-ԺԴ

Վ. Հ. Կարապետ Ամատունի
Ընդհ. Գործակալ Մխիթարեան Միաբանութեան

Յետ կարճատեւ բացակայութեանս՝ Հռոմի մէջ գտայ Ձեր ազնիւ հրաւէրը Մուրատ-Ռափայէլեան Հայ Վարժարանին Հարիւրամեակին տօնախմբութեան համար՝ որ տեղի ունեցած է Վենետկոյ մէջ անցեալ 16ին։

Շնորհակալութիւն յայտնածատեն ազնիւ հրաւէրին համար, իմ լաւագոյն մաղթանքներս կ'ընեմ նոյն Վարժարանին ապագային համար։

Ամենայն յարգանօք

Յովհաննէս Նիքոթրա

SOCIETÀ NAZIONALE
DANTE ALIGHIERI

*Roma, 25 Luglio 1936-XIV*

Il Presidente

On. Direzione del Collegio Armeno
Venezia

On. Direzione

Il Comitato locale della « Dante Alighieri » si fa interprete presso questa Presidenza del cordiale saluto e delle espressioni di viva simpatia di codesto On. Collegio verso la «Dante Alighieri».

Mentre sentitamente ringrazio del gentile pensiero, le assicuro che la Sede Centrale della «Dante» si associa con la più viva cordialità ai festeggiamenti destinati a celebrare il I° Centenario della fondazione del Collegio Armeno.

Desidero inoltre formulare i migliori auguri per l'opera tanto benemerita che il Collegio medesimo svolge.

Sono lieto nel contempo di comunicare a codesta On. Direzione che oggi stesso ho deliberato di assegnare un diploma di benemerenza al Collegio Armeno per la sua fervida opera di italianità.

Distinti saluti.

Il Presidente

. . . . . .

«ՏԱՆԴԷ ԱԼԻԿԻԵՐԻ»
ԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հռոմ, 25 Յուլիս 1936 - XIV

ՆԱԽԱԳԱՀ

Պատուարժան Տեսչութիւն Հայ Վարժարանին
Վենետիկ

Տեղական «Տանդէ Ալիկիէրի» Մասնաժողովը թարգման կ'ըլլայ այս Նախագահութեան մօտ այն սրտագին ողջոյնին և համակրական ջերմ արտայայտութեանց զոր Ձեր պատ. Վարժարանը կ'ուղղէ «Տանդէ Ալիկիէրի» ի։

Մինչ ջերմագին շնորհակալութիւն կը յայտնեմ Ձեր ազնիւ մտածութեան համար, Ձեզ կը վստահացնեմ թէ «Տանդէ»ի կեդրոնական Տունն ալ կը մասնակցի ամենաջերմ սիրով այն հանդէսներուն որ սահմանուած են տօնախմբելու Հայ Վարժարանի հիմնարկութեան Ա. Հարիւրամեակը։

Բաց աստի կը փափաքիմ հիւսել լաւագոյն մաղթանքներ այն արդիւնալից գործունէութեան համար զոր Վարժարանդ կը կատարէ։

Ուրախ եմ միեւնոյն միջոց հաղորդելու Ձերդ Պատ. Տեսչութեան թէ այսօր իսկ վճռեցի սահմանելով Արժանեաց վկայական մը Հայ Վարժարանին իտալական մշակոյթին համար ունեցած իր եռանդուն գործունէութեան։

Յարգալից ողջոյններ։

Նախագահ

. . . .

digitised by A.R.A.R.@

COMITATI D'AZIONE PER LA
UNIVERSALITÀ DI ROMA
SEZIONE DI VENEZIA

*Venezia, 14 Agosto 1936 - XIV*

Al M.to Rev.mo Padre Cherubino
Direttore del Collegio Armeno «Moorat-Raphaël»
Venezia

Il Consiglio Direttivo e la Consulta del C.A.U.R. riuniti nell'ultima assemblea, hanno stabilito con gesto spontaneo e all'unanimità, di dare la piena adesione e di prendere viva parte alla solenne celebrazione del Centenario del Collegio Armeno.

Nel renderLe ciò noto, formulo le espressioni augurali più vive, che il Collegio Armeno possa continuare ancora per moltissimi e moltissimi anni a svolgere la sua fraterna opera di bene, che si diparte da Venezia per tutto il mondo.

Scorgiamo in ciò ancora una volta il segno della universalità di Roma, nella cui luce spirituale tutti i popoli dovranno trovare la via della resurrezione.

Il nostro augurio più sincero sia quello che anche l'Armenia martire possa trovare alfine questa via.

Nel rinnovarLe a nome del Presidente Conte Lorenzo Donà dalle Rose, forzatamente assente da Venezia, del Consiglio direttivo, della Consulta e di tutti i Soci del C. A. U. R. l'augurio più fervido, in questi giorni di esultanza per Lei e per tutta la comunità Armena, voglia gradire i miei rispettosi e deferenti omaggi.

Il V. Presidente
Avv. Manganiello

ԳՈՐԾՕՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ
ՀՌՈՄԻ ՏԻԵԶԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
ՎԵՆԵՏԿԵԱՆ ԲԱԺԻՆ

*Վենետիկ*, 14 *Օգոստոս* 1936–XIV

*Մեծարգոյ Հ. Քերովբէ Չրաքեան*
*Տեսուչ Հայ «Մուրատ–Ռափայէլեան» Վարժարանին*
*Վենետիկ*

*Հռոմի տիեզերականութեան համար Գործօն Յանձնաժողովներու Վարչական ժողովն և խորհուրդը ի միասին գումարուած վերջին նիստին մէջ, ինքնաբերական շարժումով մը և լիագոյն սահմանեցին լիովին հաւանելու և գործօն մասնակցութիւն բերելու Հայ Վարժարանի Հարիւրամեակին հանդիսաւոր տօնախմբութեան։*

*Երբ այս բանս Ձեզի կը յայտնեմ, մաղթողական ամենաջերմ արտայայտութիւններս կ'ընեմ, որպէս զի Հայ Վարժարանը կարենայ դեռ շատ ու շատ տարիներ կատարել իր եղբայրսիրական բարեգործութիւնը որ Վենետկէն կը մեկնի դէպի ամբողջ աշխարհ։*

*Ատոր մէջ մենք անգամ մ'ալ կը նկատենք տիեզերականութեան նշանը Հռոմի՝ որուն հոգեկան լոյսին մէջ է որ ժողովուրդները պիտի կարենան գտնել իրենց յարութեան շաւիղը։*

*Մեր ամէնէն անկեղծ մաղթանքը թող ըլլայ որ Մարտիրոս Հայաստանն ալ վերջապէս կարենայ գտնել այս ճամբան։*

*Կրկնելով Ձեզի յանուն Նախագահին՝ Կոմս Լորէնցոյ Տոնա տելլէ Ռոզէի որ ակամայ կը բացակայի Վենետկէն, յանուն այս ընկերութեան Վարչական ժողովին և խորհուրդի ատեանին, անոր բոլոր անդամներուն՝ ամենաջերմ մաղթանքս, ներկայիս ուր ցնծութեան օրեր են Ձեզի և ամբողջ Հայ Հասարակութեան համար, հաճեցէք ընդունիլ իմ խոնարհ յարգանացս հաւաստին։*

*փոխ–Նախագահ*
*Փաստաբան Մանկանիէլլոյ*



CHMBRES DES DEPUTES
COMMISSION
DES AFFAIRES ÉTRANGÈRES

*Paris, le 17 Août 1936*

Très Rév. Père
P. Serapion Dr. Oulouhodjian
Abbé Général des PP. Mékhitaristes à Venise

Je suis profondément touché par votre si bienveillant télégramme.

Il m'est une occasion de m'associer du fond du cœur à votre commémoration et d'avoir avec vous des pensées infiniment reconnaissantes pour la mémoire de votre inspirateur Moorat.

Je me garde d'oublier l'accueil, touchant et édifiant, que vous m'avez fait l'honneur de me réserver à Venise et le haut intérêt que j'ai pris à visiter votre couvent de Saint Lazare et votre Collège, si bien installé.

Pour vous mêmes, pour vos Frères, pour vos œuvres de Venise et de Sèvres, je forme les vœux les plus fervents.

Veuillez, mon Très Révérend Père, croire toujours à mes sentiments les plus respectueux et les plus devoués.

Edouard Soulier

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐՈՒ

17 *Օգոստոս* 1936

ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ

*Գեր. Հ. Սրապիոն Ուլուհոճեան*
*Ընդ. Աբբայ Մխիթ. Միաբանութեան – Վենետիկ*

*Խորապէս զգածուած եմ Ձեր այնքան բարեացակամ հեռագրին համար։*

*Առիթ մ'է ինձ բոլոր սրտովս մասնակցելու Ձեր տօնակատարութեան և ունենալու Ձեզի հետ անհունապէս երախտագիտական մտածութիւններ յիշատակին համար Մուրատի՝ Ձեր ներշնչողին։*

*Չեմ կրնար մոռնալ այն ընդունելութիւնը, յուզիչ և շինիչ, զոր ինծի վերապահելու պատիւն ըրած էիք ի Վենետիկ, և այն մեծ շահագրգռութիւնը զոր ունեցայ՝ երբ այցելեցի Ս. Ղազարու Վանքը և Ձեր Վարժարանը այնքան լաւ տեղաւորուած։*

*Ձեզի, Ձեր Հայրերուն, Վենետկոյ և Սեւրի Ձեր ձեռնարկներուն համար իմ ամէնէն ջերմագին մաղթանքներս կ'ընեմ։*

*Հաճեցէք, Գեր. Հայր, հաւատալ յաւէտ իմ ամէնէն յարգալից և ամէնէն անձնուէր զգացումներուս։*

*Եդուարդ Սուլիէ (Երեսփոխան)*

*Bernay*, 16-VIII-36

Très Rév. Père
P. Sérapion Dr. Oulouhodjian
Abbé Général des PP. Méchitaristes - Venise

Ma dépêche vous a dit la part que je prenais à l'émouvant centenaire, et mon remerciement pour votre si gracieux télégramme.

Voici l'article par lequel, dans le *Figaro* j'ai tenu à m'associer a la solennité.

Veuillez agréer, Mon Révérendissime Père, l'hommage très-dévoué de mon profond respect.

Georges Goyau



digitised by A.R.A.R.@

Պէրնէյ, 16 Օգոստոս, 1396

Գերյարգելի Հայր
Հ. Սրապիոն Ուլուհոճեան
Ընդհ. Աբբայ Մխիթարեան Միաբանութեան – Վենետիկ

Հեռագիրս Ձեզի ծանոյց մասնակցութիւնը զոր կը բերէի սրտայոյզ հարիւրամեակին, և շնորհակալութիւնս Ձեր այնքան գեղեցիկ հեռագրին։
Ահա յօդուածը որով ջանացի «Ֆիկարոյ»ի մէջ մասնակցիլ տօնախմբութեան։
Հաճեցէք ընդունիլ, Գերապայծառ Հայր, խորին ակնածանքիս անձնուէր հաւաստիքը։

Գէորգ Կոյոյ

COMVNE DI VENEZIA

IL PODESTÀ

*Venezia*, 13 *Agosto* 1936-XIV

On. Comitato pel I° Centenario
della Fondazione del Collegio Armeno Moorat-Raphaël - Venezia

Molto grato per il cortese invito rivoltomi ad intervenire alla solenne commemorazione del Centenario di codesto On. Collegio e spiacente che non mi sia dato, come sarebbe stato mio desiderio, di assistervi, porgo vivi ringraziamenti bene augurando alle sempre migliori fortune del Collegio e della Congregazione Armena che Venezia si onora di ospitare.

Con l'occasione prego di tenere per giustificata anche l'assenza del Podestà, il quale dopo il lutto gravissimo che Lo ha colpito, non ha ancora regolarmente riprese le sue normali funzioni.

Alla cerimonia inaugurale di domenica prossima interverrà, in rappresentanza del Comune, il Dr. Ing. Mario Nono, Consultore Municipale.

Con ogni osservanza,

Il Vice Podestà
Casella

ՎԵՆԵՏԿՈՅ ՆԱՀԱՆԳ

ՔԱՂԱՔԱՊԵՏ

Վենետիկ, 13 Օգոստոս 1936 XIV

Պատուարժան Յանձնախումբ Ա. Հարիւրամեակի
Հիմնարկութեան Մուրատ-Ռափայէլեան Վարժարանին – Վենետիկ

Մեծապէս երախտապարտ՝ ինծի ուղղուած ազնիւ հրաւէրին համար մասնակցելու հանդիսաւոր տօնակատարութեան այդ պատուական վարժարանի Հարիւրամեակին, կը ցաւիմ որ... կարելի պիտի չըլլայ, հակառակ իմ փափաքիս, ներկայ ըլլալու անոր, ջերմագին շնորհակալութիւններ կը մատուցանեմ մաղթելով միշտ լաւագոյն յաջողութիւններ Վարժարանին և Հայ Միաբանութեան զոր հիւրընկալելու պատիւն ունի Վենետիկ։

Այս առթիւ կը խնդրեմ որ ներողամիտ գտնուիք բացակայութեան համար ալ Քաղաքապետին, որ յետ այն ծանր սուգին որ զինքն հարուածեց, դեռ կանոնաւորապէս ձեռնարկած չէ իր պաշտօնի սովորական գործերուն։

Մերձակայ կիրակի օրուան հարիւրամեակի նաւակատիքի հանդէսին պիտի ներկայ ըլլայ, իբրեւ ներկայացուցիչ Նահանգին կողմէ, Ճրտ. Մարիոյ Նոնոյ, քաղաքապետական խորհրդականը։

Խորին յարգանօք

Փոխ-Քաղաքապետ
Քազելլա



R. SOPRINTENDENZA BIBLIOGRAFICA
PER LE VENEZIE
BIBLIOTECA NAZIONALE MARCIANA - VENEZIA
IL SOPRINTENDENTE

*Canazei di Fassa*, 13 *Agosto* 1936

Ecc. P. Serapione Dr. Uluhogian
Abate Generale dei RR. PP. Mechitaristi - Venezia

In questo recesso alpino, nel quale passo la mia licenza, leggo il programma della solenne celebrazione centenaria di avvenimenti altretanto importanti per la Nazione Armena quanto cari a Venezia.

Mi duole che la distanza mi impedisca di recare personalmente la fervida adesione della Biblioteca Naz. Marciana e di questa Soprintendenza Bibliografica in omaggio all'E. V. Rev.ma, alle personalità della Congregazione e alle rappresentanze degli antichi fedeli alunni. Un particolare omaggio di devozione mi sia permesso di rivolgere, per il benevolo tramite dell' E. V., a Sua Eminenza il Card. Tisserant, ospite di Venezia, e che sarebbe stato per me sommo onore e piacere di accompagnare nelle sale della Marciana, se avesse potuto dedicarLe qualche minuto.

Prego di gradire per iscritto la parola della più viva partecipazione, accompagnata dal sincero plauso e dai voti più rispettosi.

Con profondo ossequio mi rassegno dell' E. V.

Dev.mo

Luigi Ferrari
direttore della Biblioteca Marciana

ՎԵՐԱՏԵՍՉՈՒԹԻՒՆ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ
ՎԵՆԵՏԿԵԱՆ ԳԱՒԱՌՆԵՐՈՒ

ԱԶԳ. ՄՏՆԴՐՆ. Ս. ՄԱՐԿՈՍԻ – ՎԵՆԵՏԻԿ
ՎԵՐԱՏԵՍՈՒՉ

Քանածէյ տի Ֆասսա 13 Օգ. 1936

Գերպ. Հ. Սրապիոն Վ. Ուլուհոճեան
Ընդհ. Աբբայ Մխիթ. Միաբանութեան – Վենետիկ

Այս ալպեան թաքստոցիս մէջ, որ արձակուրդս կ'անցընեմ, կը կարդամ յայտագիրը հանդիսաւոր հարիւրամեայ տօնակատարութեանց որոնք նոյնքան հետաքրքրական և կարեւոր են Հայ Ազգին որքան սիրելի՝ Վենետկոյ։

Կը ցաւիմ որ հեռաւորութիւնը կ'արգիլէ զիս անձամբ բերելու ջերմագին մասնակցութիւնը Ազգային Մարկոսեան Մատենադարանի և Մատենագիտական վերին տեսչութեան յարգանքը Ձեր Գերապայծառութեանը, Միաբանութեանդ պատկառելի անձնաւորութեանց, և հաւատարիմ Նախկին սաներու ներկայացուցիչներուն։

Յատուկ անձնուէր յարգանք մը թոյլ տրուի ինձ ուղղելու Ձեր Գերպ. բարեացակամութեան միջոցով առ Վսեմափառ ծիրանաւոր Թիսսըրան, հիւրը Վենետկոյ, և ինծի համար գերագոյն պատիւ և հաճոյք պիտի ըլլար ընկերել Անոր Ս. Մարկոսի մատենադարանին սրահները՝ եթէ ժամանակ ունենար անոր յատկացնելու։

Կը խնդրեմ որ հաճիք ընդունել գրաւոր կերպով խօսքերը ամենաջերմ մասնակցութեանս, հանդերձ ամէնէն անկեղծ գովասանքով և յարգալիր մաղթանքներով։

Խորին մեծարանօք կը մնամ

Ձերդ Գերապայծառութեան
անձնուէր
Լուիճի Ֆերրարի
Վարիչ Ս. Մարկոսեան Մատենադարանին։

digitised by A.R.A.R.@

DIREZIONE PROVINCIALE
DELLE POSTE E DEI TELEGRAFI
VENEZIA

IL DIRETTORE

*Montecatini*, 7-8-36

Ill. Sig. Presidente del Comitato
Fond. Collegio Armeno Moorat-Raphaël - Venezia

*Ill. Sig. Presidente,*

Avendo ricevuto quì il loro gentile Invito per la Solenne Commemorazione del Centenario del Collegio, porgo vivi ringraziamenti, bene augurando per il felice esito delle feste di codesto benemerito Istituto.

Con distinti saluti

Dr. Giacinto Matteucci

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԵՒ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ
ԳԱՒԱՌԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ՎԵՆԵՏԿՈՅ

*Մոնթէքաթինի*, 7-8-36

*Արժանապատիւ Նախագահ*

*Մուրատ-Ռափ. Վարժարանի Հար. Հիմն. տօներու Յանձնախումբին – Վենետիկ*

*Ստանալով հոս Ձեր ազնիւ հրաւիրատոմսը հանդիսաւոր տօնախմբութեան Վարժարանի Հարիւրամեակին, ջերմագին շնորհակալութիւններ կը յայտնեմ, բարեմաղթութիւններ ընելով որ յաջող ելք ունենան այս արդիւնաւոր Հաստատութեան տօնախմբութիւնները։*

*Յարգալիր ողջոյններով*
*Դոկտ. Ճիաչինթոյ Մաթէուչչի*



## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
## ԿԱՃԱՌՆԵՐ ԵՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐ

REALE ACCADEMIA D'ITALIA

IL PRESIDENTE

11109

*Roma, 13 luglio 1936-XIV*

Rev. Padre Serapione Dr. Uluhogian
Abate Generale della Congr. Mechitarista
S. Lazzaro - Venezia

*Reverendo Padre,*

Anche a nome di S. E. il Presidente Marconi, assente da Roma, ho il piacere di comunicare alla S. V. l'adesione della Reale Accademia d'Italia ai festeggiamenti per la centenaria ricorrenza della fondazione del Collegio Armeno Moorat-Raphaël.

La Reale Accademia prega, oggi stesso, S. E. Ettore Tito (S. Barnaba, Fondamenta Gherardini, 2827 - Telefono 9-13) di volerla rappresentare alla cerimonia del 16 agosto prossimo, e comunicherò alla S. V. la risposta non appena perverrà.

Con l'espressione della massima considerazione.

p. Il Presidente
Il Vice Presidente Anziano
Carlo Formichi

ԱՐՔԱՅԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ ԻՏԱԼԻՈՅ
ՆԱԽԱԳԱՀ
11109

*Հռոմ*, 13 *Յուլիս* 1936-XIV

*Գեր. Հայր Սերապիոն, Ուլուհօճեան*
*Ընդհ. Աբբայ Մխիթարեան Միաբանութեան*
*Ս. Ղազար – Վենետիկ*

*Գերյարգելի Հայր*

*Նաեւ յանուն Ն. Վ. Նախագահ Մարգոնիի, որ Հռոմէն կը բացակայի, հաճոյքն ունիմ հաղորդելու Ձեր Տէրութեան՝ հաճութիւնը Իտալիոյ Արքայական Ճեմարանին՝ մասնակցելու տօնախմբութեանց Մուրատ-Ռափայէլեան Հայ Վարժարանի հաստատութեան հարիւրամեայ տարեդարձին։*

*Արքայական Ճեմարանը կը խնդրէ, այսօր իսկ, Ն. Վ. Էտտորէ Թիթոյին որ հաճի զինքը ներկայացնել մերձաւոր* 16 *Օգոստոսի հանդիսին, և իսկոյն պիտի հաղորդեմ Ձերդ Տէրութեան երբ պատասխան ընդունիմ։*

*Խորին յարգանաց հաւաստեօք*

*Փոխանակ Նախագահին*
*Երիցագոյն փոխ-Նախագահ*
*Գարլոյ Ֆորմիքի*

digitised by A.R.A.R.@

SACRA CONGREGATIO
DE SEMINARIIS
ET STUDIORUM UNIVERSITATIBUS

*Romae, die 7 Augusti 1936*

N. Protoc. 1135-36

Reverendissimo Domino
D. Serapioni Uluhogian
Abbati Generali Congregationis Mechitaristarum

*Reverendissime Pater,*

Laetum accepimus nuntium sexto ac decimo die huius mensis Augusti annum expletum iri centesimum, ex quo bina tua Instituta, in iuventutem ex Armena Natione instituendam erecta ac egregiae memoriae Moorat et Raphaël, clarorum virorum, dicata, ortum habuerunt.

Haud sane miramur faustitate huius eventus et eos, qui olim alumni fuerunt, et alios bene multos Armeniae cives, vehementer laetari, dum insignia communis gaudii et amoris erga cum Collegia tum perillustrem Mechitaristarum Congregationem testimonia exhibent. In aperto enim sunt beneficia plurima, quae, centum annorum decursu, ex laudatis Institutis in utilitatem Armenae Nationis provenerunt; in aperto curae et sollicitudines, quas ista optime merita Congregatio in iuvenes, studiis religionis, artium ac patriae imbuendos, iugiter impendit.

Quoniam vero in partem huius legitimae laetitiae grandis existimatio, qua cum Collegia tum Congregationem, cui praees, prosequimur, et nos vocat; ex animo votum depromimus ut, Deo benigne favente, utraque vivant, crescant, floreant in aevum!

Quod votum dum Immaculatae Deiparae, Quam Armena Natio, saecula ante multa, per Gregorium Narechensem, pulcherrimis extulit laudibus, fidenter concredimus, sensus obsequentis animi nostri pandimus.

Tibi addictissimus in Domino
Caietanus Card. Bisleti
Præfectus
Ernestus Ruffini, Secretarius

ՍՐԲԱԶԱՆ ԺՈՂՈՎ

ՎԱՍՆ ԿՂԵՐԱՆՈՑԱՑ ԵՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱՑ

*ի Հռոմ, 7 Օգոստոս 1936*

Առ Գերապայծառ Տէր
Տէր Սրապիոն Ուլուհոճեան
Ընդհ. Աբբայ Մխիթարեան Միաբանութեան

*Գերապատուեալ Հայր*

Ընդունեցանք աւետիսը թէ այս Օգոստոս ամսոյ 16ին կը լրանայ հարիւրամեակը՝ յորմէհետէ ծնունդ առին Ձեր երկու Հաստատութիւնները, կանգնուած Հայ Ազգի երիտասարդութեան կրթութեան համար և նուիրուած ազնիւ յիշատակին Մուրատ և Ռափայէլ երեւելի (բարերար) անձերուն։

Անշուշտ չենք զարմանար որ այս բարենշան դէպքէն մեծապէս կ'ուրախանան նաեւ անոնք որ երբեմն աշակերտ եղած են և ուրիշ շատ մը Հայաստանի քաղաքացիներ, քանի որ հասարակաց ուրախութեան և սիրոյ նշանակները վկայ կը կանգնին թէ՛ հանդէպ վարժարաններուն և թէ համբաւաւոր Մխիթարեան Միաբանութեան։



Վասն զի ակն յայտնի են այն բազմաթիւ բարիքները որոնք եղան ի նպաստ Հայ ազգին՝ հարիւրամեայ շրջանի ընթացքին՝ յիշեալ Հաստատութեանց ձեռքով. յայտնի են այն խնամքներն ու ջանքերը զոր այս երախտաւոր Միաբանութիւնը յարատեւ կը ցուցնէ Հայ երիտասարդութեան վրայ, ջամբելու համար անոնց կրօնքի, Գեղարուեստի և Հայրենասիրութեան սէրը։

Եւ որովհետեւ մասամբ այս արդար բերկրութեան մեծ գնահատութիւն մը – զոր ունինք թէ վարժարաններուն հանդէպ և թէ Միաբանութեան որուն գլուխն ես – զմեզ ալ կը հրաւիրէ, ի սրտէ կը մաղթենք որ Աստուծոյ բարերարութեամբ երկուքն ալ ապրին, աճին ու ծաղկին առ յաւէտ։

Եւ մինչ այդ մեր մաղթանքն և ուխտը խորին վստահութեամբ կ'աւանդենք Անարատ Տիրամօր, զոր Հայ Ազգը, այնքան դարեր առաջ, Գրիգոր Նարեկացւոյն ձեռքով՝ ամենագեղեցիկ դրուատիքներով փառաբանեց, կը յայտնենք մեր սրտին յարգանաց զգացումները։

Քեզ անձնուէր ի Տէր
Կայեթանոս Քարտինալ Պիզլեթի
Նախագահ

Էրնէստ Ռուֆինի, Ատենադպիր

INSTITUT CATHOLIQUE DE PARIS

*Le* 18 *Août* 1936

Très Révérend Père Abbé
Sérapion Dr. Oulouhodjian
Abbé Général des RR. PP. Mèchitaristes - Venise

La lettre par laquelle vous avez bien voulu me faire part du centenaire de votre glorieuse Congrégation ne m'est arrivée que le 15 août, la veille même de cette célébration; je n'ai donc pu vous faire pervenir à temps, en mon nom et au nom de l'Institut catholique de Paris, les félicitations et les vœux qui vous sont si largement dues.

Veuillez cependant, Très Révérend Père Abbé, les agréer et laissez-moi vous dire toute l'admiration que je ressens pour l'œuvre si utile et si féconde que vous accomplissez. Vous êtes un des flambeaux de l'Eglise catholique en Orient. Que Dieu vous donne de poursuivre cette noble mission! Nous Le lui demandons tous avec vous et je vous envoie de tout cœur ma plus fervente bénédiction.

Daignez agréer, Très Révérendissime Père, l'hommage de mon plus religieux dévouement.

Alfred Card. Baudrillart

ՓԱՐԻԶԻ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

18 *Օգոստոս* 1936

Մեծ. Հ. Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան
Ընդհ. Աբբահայր Մխիթ. Միաբանութեան – Վենետիկ

Նամակը որով բարեհաճեցաք ինծի տեղեկացնել Ձեր փառապանծ Միաբանութեան հարիւրա-
մեակը՝ ինծի 15 Օգոստոսին հասաւ, նախօրեակը նոյն հանդէսին. հետեւաբար չկրցայ ժամանակին
Ձեզի հասցնել իմ և Փարիզի Կաթողիկէ Վարժարանին անունով բարեմաղթութիւններն և իղձերը
որոնց մեծապէս արժանի էք։

Հաճեցէք, սակայն, Գեր. Աբբահայր, ընդունիլ զանոնք և թոյլ տուէք ինձ Ձեզի յայտնել այն
բոլոր հիացումը զոր կը զգամ այնքան օգտակար և բեղուն գործին համար զոր դուք կը կատարէք։
Դուք մին էք Կաթողիկէ Եկեղեցւոյ ջահերէն Արեւելքի մէջ։ Աստուած տայ որ միշտ շարու-
նակէք այս ազնուական առաքելութիւնը։ Մենք ամէնքս զայդ Իրմէ կը խնդրենք Ձեզի հետ և ես
Ձեզի կը ղրկեմ բոլոր սրտով իմ ջերմագին օրհնութիւնս.

Հաճեցէք ընդունիլ, Գերյ. Հայր, իմ սրտագին անձնուիրութեան ամէնէն խորին յարգանքս։

Ալֆրէ Քարտինալ Պոտրիյեար

digitised by A.R.A.R.@

PONTIFICIA UNIVERSITÀ
GREGORIANA
ROMA

Roma, 14 *Agosto* 1936

*Reverenda Congr. Mechitarista*

Con il più vivo compiacimento ho letto la lettera al nostro P. Rettore, con cui Lo si invita a prendere parte ai Festegiamenti che la vostra Congregazione fa in occasione del I° Centenario della Fondazione dei Collegi «Moorat-Raphaël» per l'educazione della gioventù Armena.

Mi dispiace che il nostro P. Rettore, presentemente in America, non possa intervenire a così solenne cerimonia. Sento doveroso, purtuttavia, di esprimere, a suo nome, tutta l'ammirazione verso la vostra Congregazione, che ha tanto giustamente benemeritato la riconoscenza e il plauso di tutto il popolo Armeno per l'opera solerte d'instancabile apostolato da essa svolta, sapientemente congiungendo ai profondi insegnamenti delle verità religiose, quelli delle verità scientifiche.

L'ambito e giusto premio per l'opera da Voi compiuta, con nobile spirito d'abnegazione, è nella paterna benevolenza del Sommo Pontefice, nell'adesione spontanea di tanti Eminenti Prelati ed alte Autorità religiose e civili, nell'espressione sincera di gratitudine di un'eletta schiera di ex-allievi che da Voi appresero ad amare la Fede e la Scienza.

Questa commemorazione centenaria, epilogo di un lungo periodo di vita bene spesa, può a buon diritto, ritenersi come il prologo di un assai più lungo e fulgido avvenire.

Tale è l'augurio che, a mio mezzo, viene formulato dalla Pontificia Università Gregoriana.

Vogliate accogliere i miei più profondi ossequi e le mie più vive felicitazioni.

il P. Ministro
Raphaël M. Martinelli, S. J.

ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԱԿԱՆ
ԳՐԻԳՈՐԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հռոմ, 14 Օգոստոս 1936

*Պատուական Մխիթարեան Միաբանութիւն*

*Ամենամեծ հաճութեամբ կարդացի մեր (Համալսարանի) Տեսուչ Հօր ուղղուած նամակը, որով նա կը հրաւիրուի մասնակցելու այն տօնախմբութեան զոր Ձեր Միաբանութիւնը կը կատարէ, Հայ երիտասարդութեան կրթութեան համար հիմնարկուած Մուրատ-Ռափայէլեան Վարժարաններու առաջին հարիւրամեակին առթիւ:*

*Կը ցաւիմ որ մեր Տեսուչ Հայրը, ներկայիս Ամերիկայի մէջ, պիտի չկարենայ ներկայ գտնուիլ այդպիսի հանդիսաւոր տօնախմբութեան: Այնուհանդերձ, պարտաւոր կը զգամ, իր անուամբ արտայայտելու՝ բոլոր հիացումս Ձեր Միաբանութեան հանդէպ՝ որ իսկապէս արդար կերպով արժանացած է բովանդակ Հայ ազգին երախտագիտութեան և գովասանքին, իր կատարած ժրաջան և անխոնջ առաքելական գործովը, իմաստութեամբ զուգելով կրօնական ճշմարտութիւններու խորին ուսուցումներուն՝ նաեւ գիտական ճշմարտութիւնները:*

*Ցանկալի և արդար մրցանակը, անձնուրացութեան ազնուական հոգւով Ձեր կողմէն կատարուած գործին համար՝ արդէն կը գտնէք Գերագոյն Քահանայապետին հայրական հաճութեան, բազմաթիւ Ծիրանաւորներու և եկեղեցական ու քաղաքական բարձր իշխանութիւններու ինքնայօժար մասնակցութեան մէջ, ինչպէս նաեւ անկեղծ երախտագիտութեան արտայայտութեան մէջ նախկին սաներուն ընտիր լեգէոնի մը որոնք՝ Ձեզմէ՝ սորվեցան սիրել Հաւատքը և Գիտութիւնը:*
*Այս հարիւրամեայ տօնախմբութիւնը օգտակար անցուցած կեանքի՝ երկար շրջանի մը եզրա-*
*փակութիւնը՝ իրաւամբ կրնայ համարուիլ նախերգանքը շատ աւելի երկար ու փայլուն ապագայի մը:*
*Այս է մաղթանքը զոր՝ իմ միջոցաւ Քահանայապետական Գրիգորեան համալսարանը կ'ուղ-*
*ղէ Ձեզի:*

*Հաճեցէք ընդունիլ իմ ամենախորին յարգանքներս և ամենաջերմ շնորհաւորութիւններս:*

*Փոխան Տնօրէնի*
*Ռափայէլ Մ. Մարթինելլի, Յ.Ը.*



R. UNIVERSITÀ DI PADOVA
IL RETTORE

*Padova,* 13 *Agosto* 1936 - XIV

Ill.mo Sig. Presidente
del Comitato pel centenario del Collegio Moorat-Raphaël
Palazzo Zenobio ai Carmini - Venezia

*Ill.mo Sig. Presidente,*

Sono spiacente di non poter intervenire alla solenne commemorazione del Centenario del codesto benemerito Collegio, che avrà luogo domenica 16 corrente, per precedenti impegni d'ufficio.

Colgo l'occasione per formulare i più vivi auguri di sempre maggiore sviluppo dell'Istituto.

Nel ringraziarLa per l'invito rivoltomi, porgo vivi ossequi.

Il Rettore
Anti Carlo

ԱՐՔՈՒՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՈՒԱՅԻ

Փատուա, 13 Օգ. 1936 - ԺԴ

*Ազնուամեծար Նախագահ*
*Մուրատ-Ռափայէլեան Վարժարանի Հարիւրամեայ, տօնախմբութեան*
*Յանձնախումբի*
*Զենոբեան պալատ ի Գարմինի - Վենետիկ*

*Ազնուամեծար Տէր Նախագահ*

*Կը ցաւիմ որ պաշտօնիս բերումով կանխապէս յանձն առած պարտականութեանց պատճառաւ չեմ կրնար մասնակցիլ Ձեր հանդիսաւոր հարիւրամեայ տօնախմբութեան արդիւնաւոր վարժարանին, որ տեղի պիտի ունենայ կիրակի, ընթացիկ ամսոյս 16ին:*

*Աւիթէն կ'օգտուիմ հիւսելու համար ամենաջերմագին մաղթանքներ Ձեր Վարժարանին միշտ աւելի մեծագոյն զարգացման:*

*Շնորհակալութեամբ ինծի եղած հրաւէրին՝ կը մատուցանեմ ջերմագին յարգանքներս:*

*Տեսուչ*
*Անդի Քարլոյ*

digitised by A.R.A.R.@

## ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ, ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ ԵՒ ԳԵՐՊ.ներ

ԱԹՈՌ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
ԵՐՈՒՍԱՂԷՄ

5 *Օգոստոս* 1936

*Գերամեծար*
*Հ. Սրապիոն Վրդպտ. Ուլուհոճեան*
*Ընդհ. Աբբայ Մխիթ. Միաբանութեան – ի Ս. Ղազար*

*Այժմ իսկ ընդունեցի Ձեր Յուլիս 23ի պատուականը, որով հաճած էք զեկուցագրել մեզ թէ Մխիթարեան Ուխտիդ հովանւոյն ներքեւ բարգաւաճած Մուրատ – Ռափայէլեան զոյգ Հաստատութեանց առաջին դարադարձի յոբելինական տօնը պիտի խմբուի ի Վենետիկ, ներկայ ամսոյ 16ին:*

*Մօտէն ծանօթ իրապէս գնահատելի ծառայութեանց՝ զորս այդ երկուքին կրթարանք, առանձնապէս կամ միասնաբար, մատուցած են և կը մատուցանեն տակաւին Ազգին լրութեան, Ադրիականի դշխոյին գրկաց վրայ, այդտեղ, և լուսոյ քաղաքին մէջ՝ ի փարիզ, անխառն հրճուանքով կը լցուի մեր սիրտը, մտածութեամբը սիրոյ և մեծարանաց պսակին՝ զոր վստահ եմ թէ ազգն համօրէն կը պատրաստուի բոլորել անոնց ճակատին շուրջ, հարիւրամեայ գեղեցիկ և բարի արդիւնաւորութենէ մը վերջ:*

*Այնպիսի նուիրական առիթի՛ մը մէջ մանաւանդ՝ ամէն Հայ շնորհապարտ միայն պարտի զգալ ինքզինք լուսոյ այդ ճշմարիտ փառարաններուն հանդէպ, որոնցմէ դուրս եկան Պէշիկթաշլեաններ և Վարուժաններ, որոնք ոգեցին «ի բիւր ձայնից»ը և անմահացուցին «Ցեղին սիրտ»ը, և որոնց մէջ թխուեցան Ամուրեանի, Տէրենցի, Թէրզեանի, Միքայէլ Փորթուգալի և Նմաններու հայրենանուէր հոգիները:*

*Վստահ եմ թէ ամէնուն իղձն և մաղթանքն այն պիտի լինի յոբելինական հանդիսութեանց պահուն մանաւանդ՝ որ զոյգ Վարժարանք շարունակեն դեռ երկար տարիներ, միեւնոյն հայրենաշունչ ոգւով և բարձր դաստիարակութեամբ կրթուած նոր սերունդներ պարգեւելով ազգին, յօրհնութիւն յիշատակի իրենց հիմնադիր հանգուցեալ բարերարաց, ի պայծառութիւն պատուական Ուխտիդ Մխիթարեան, և յուրախութիւն բովանդակ Հայութեան:*

*Թէեւ ի հեռուստ, բայց ջերմագին զգացմամբք կը մասնակցինք և մենք այդ ըղձից և մաղթանաց, և մասնաւորապէս շնորհաւորելով զՁեր գերամեծար Հայրութիւնն և զհամօրէն արգոյ Միաբանութիւնդ, կ'աղօթենք ի խորոց սրտի որ Բարութեանց երկնային աղբիւրն ամէնուդ շնորհէ հոգի իմաստութեան և զօրութիւն կամաց, Ձեր հովանաւորած այդ ազգանուէր գործն արդիւնաւորելու այնպէս ինչպէս եղած է ցարդ, և նոյն ուղղութեամբ յանձնելու համար զայն ի ձեռս ապագայից:*

*Երջանիկ ենք այժմ ամէնքս, ողջունել կարենալով այս առաջին դարադարձն: Տա՛յր երկինք որ երկիցս և երիցս և աւելի երջանկագոյն լինէին յաջորդ և հեռաւոր հայ սերունդներ, կարենալով տօնել երկրորդ և երրորդ և յետագայ բազում դարադարձներ:*

*Ողջո՛յն սիրոյ և օրհնութի՛ւն ի սուրբ Սիոնէս*

*Աղօթարար*
*Պատրիարք Երուսաղէմի*
*Թորգոմ արքեպս.*

*Ց. Գ. Խնդրած եմ Միլանաբնակ մեր բարեկամ Մեծ. Պ. Թորոս Ծամանեանէ՝ անձամբ զմեզ ներկայացնել յոբելինական հանդիսից մէջ: Շատ ուրախ պիտի լինիմ, եթէ արգելիչ պարագայ չունենայ առ այդ:*

*Նոյն*



NUNZIATURA APOSTOLICA
D'ITALIA

*Loreto*, 12 *Agosto* 1936

Rev.mo P. Serapione
Abate Generale della Congr. Mechitarista – Venezia

*Carissimo P. Serapione,*

Apprendo con viva soddisfazione che i miei buoni e antichi amici, i Padri Mechitaristi (quanto tempo è passato da quando ci conoscevamo sulle colline di Torri in Sabina!) stanno per celebrare il primo centenario dei loro due maggiori Istituti di educazione.

Non voglio essere assente alla festa, che riunirà in S. Lazzaro, con gli ex alunni, tanti vostri amici ed ammiratori; e, benchè lontano di persona, mi unisco in ispirito all'inno di ringraziamento a Dio per la grazia ricevuta e il bene compiuto in questo secolo di vita. Qui, nella S. Casa della Vergine Maria, Regina del Cielo e Madre degli Armeni, come è Madre, particolarmente benevola, di tutti i popoli che sono più provati dal dolore, invoco per la Congregazione Mechitarista e per i due gloriosi Collegi le benedizioni più elette del Signore, per nuove glorie, nuove corone, nuovi centenari. – Mi creda, caro Padre, con speciale ossequio

Suo Aff.mo
Mons. F. Borgongini Duca
Arciv. di Eraclea, Nunzio Apostolico
presso il Regno d'Italia

ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ
ԻՏԱԼԻՈՅ

*Լորէթօյ*, 12 *Օգոստոս* 1936

*Ամենապատուելի Հ. Սրապիոն Վրդ. Ընդհ. Աբբայ Մխիթ. Միաբ. եւն.*

*Խորին գոհունակութեամբ կ'իմանամ թէ իմ բարի և հին բարեկամներս, Մխիթարեան Հայրերը (որքա՜ն ժամանակ անցած է յորմէհետէ զիրար ճանչցանք Սաբինեան Թորրիի բլուրներուն վրայ) տօնելու վրայ են առաջին հարիւրամեակը իրենց կրթական երկու մեծ Հաստատութեանց:*

*Չեմ ուզեր բացակայ գտնուիլ տօնէն՝ որ Ս. Ղազարու մէջ պիտի հաւաքէ Նախկին սաներուն հետ բազմութիւն մը ձեր բարեկամներէն ու ձեր վրայ զմայլողներէն. և թէպէտ անձամբ հեռու՝ հոգւովս կը միանամ առ Աստուած գոհաբանական երգին ընդունուած շնորհքներուն և կատարուած բարիքին համար այս դարաւոր կեանքի ընթացքին: Հոս սրբազան Տան մէջ Տիրամօր, Թագուհի երկնից և Մայր Հայոց, ինչպէս որ բարեգութ Մայր է յատկապէս այն բոլոր ժողովուրդներուն որ ամէնէն շատ տառապած են և փորձուած ցաւին մէջ, կը հայցեմ Մխիթարեան Միաբանութեան և երկու փառապանծ Վարժարաններուն համար Աստուծոյ ամէնէն թանկագին օրհնութիւնները, նոր փառքերու, նոր պսակներու, նոր հարիւրամեակներու համար:*

*Հաւատա՛ զիս, սիրեցեալ Հայր, յատուկ յարգանքով*

*զՁեզ սիրող ի Քրիստոս*
*† Փ. Պորկոնճինի Տուգա, Արքեպս. Հերակլէայի*
*Առաք. Նուիրակ Իտալիոյ Պետութեան մօտ*

*Roma, li* 11 *Agosto* 1936

Al Reverendissimo Padre Abate
della Congregazione Mechitarista di Venezia

*Rev.mo Padre Abate,*

Mi è pervenuto il graditissimo invito di partecipare alla solennità che si celebrerà il 16 corr. per il I° centenario dell'Istituto armeno Moorat e Raphaël di Venezia. Sarebbe stato per me grande consolazione di peter intervenire per-

digitised by A.R.A.R.@

sonalmente a tale cerimonia, ma le mie occupazioni mi rendono impossibile allontanarmi da Roma. Non voglio però mancare di unirmi in spirito a quanti in questa occasione si troveranno intorno a Lei per ringraziare il Signore del bene fatto in questi primi cento anni e per formulare l'augurio di uno sviluppo sempre maggiore dell'Istituto a bene della Chiesa e della Società.

RingraziandoLa d'avermi tenuto presente in questa circostanza ed ossequiandoLa mi professo

di Vostra P. Rev.ma
Francesco Can. Pascucci
Segr. del Vicariato

*Հռոմ*, 11 *Օգոստոս* 1936

*Գերպ. Արքաhայր Մխիթարեանց – Վենետիկ*

*Ընդունած եմ մեծապէս հաճելի հրաւէրը մասնակցելու համար տօնախմբութեան որ պիտի կատարուի ընթացիկ ամսուն*16*ին Վենետկոյ Մուրատ – Ռափայէլ Հայ Հաստատութեան Ա. Հարիւրամեակին համար: ինծի համար մեծ մխիթարութիւն պիտի ըլլար անձամբ ներկայ ըլլալ այդ տօնախմբութեան, բայց զբաղմունքներս անկարելի կ'ընեն ինծ հեռանալ Հռոմէն: Ձեմ ուզեր սակայն պակսիլ հոգեպէս միանալու բոլոր անոնց որ այս առթիւ Ձեր շուրջը պիտի գտնուին շնորհակալ ըլլալու Աստուծոյ այս առաջին հարիւրամեակին ընթացքին կատարած բարիքին համար և միանգամայն հիւսելու մաղթանքներ Վարժարանին յարաճուն զարգացման համար յօգուտ Եկեղեցւոյ և Ընկերութեան:*

*Շնորհակալ եմ որ այս առթիւ զիս յիշեցիք, յարգանօք կը մնամ*

*Ձերդ Գերպ. Հայրութեան*
*Ֆրանչիսկոս Կանոնիկոս Բասքուչչի*
*Ատենադպիր (Հռոմայ) փոխանորդարանին*

SEGRETERIA DI STATO
DI SUA SANTITÀ

*dal Vaticano, 9 Agosto* 1936

Rev.mo Padre Elia Pecikian
Segretario Generale della Congr. Mechitarista – Venezia

*Rev.mo Padre,*

La ringrazio di tutto cuore del gentile invito per le feste del 16 agosto p.v.

Se le mie occupazioni mi obbligano a non abbandonare in quei giorni il mio ufficio, sarò presente in spirito alla celebrazione solenne.

La doppia ricorrenza centenaria che codesta illustre Congregazione si accinge festeggiare, mentre ricorda tanti meriti così degnamente acquistati, è promessa e auspicio di un lavoro sempre più largo e fecondo per il bene delle anime e per la gloria della Chiesa.

Per tali insigni memorie e per così sicure speranze v'è ben ragione di rallegrarsi con cotesta Congregazione Mechitarista, che un'attività sapiente e perseverante ha reso sommamente benemerita della religione e della patria.

Profitto volentieri dell'opportunità per comfermarmi con sensi di sincera stima,

della P. V. Rev.ma
aff.mo nel Signore
Domenico Mons. Tardini



ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹԻՒՆ

*Վատիկան*, 9 *Օգոստոս* 1936

*Վեր. Հ. Եղիա Փէչիկեան*
*Ընդհ. Ատենադպիր Մխիթարեան Միաբանութեան – Վենետիկ*

*Բոլոր սրտով շնորհակալ եմ ազնիւ հրաւէրին համար Օգոստոս 16ի հանդէսներուն:*

*Եթէ իմ զբաղմունքներս կը պարտադրեն զիս չլքելու այդ օրերուն իմ պաշտօնս, ներկայ պիտի ըլլամ հոգւով այդ հանդիսաւոր տօնախմբութեան:*

*Հարիւրամեայ կրկին հանդէսը որուն կը ձեռնարկէ տօնելու այդ պանծալի Միաբանութիւնը, մինչ կը վերյիշէ այնքան արդիւնքներ արժանապէս շահած, խոստում մ'է և նշան աշխատութեան մը միշտ աւելի ընդարձակ և բեղուն՝ հոգիներու օգտին և Եկեղեցւոյ պայծառութեան համար:*

*Այսպիսի պանծալի յիշատակներով և այսպիսի հաստատուն յոյսերու համար իրաւացի է հըրճուիլ Մխիթարեան Միաբանութեանդ հետ, զոր իմաստուն և յարատեւ գործունէութիւն մը գերագոյն կերպով երախտաւոր ըրած է հանդէպ Կրօնքին և Հայրենեաց: Յօժարութեամբ կ'օգտուիմ բարեպատեհ առիթէն հաւաստելու զիս Ձեզի իմ անկեղծ համակրութեան զգացումներովս,*

*Ձերդ Վեր. Հայրութեան սիրող ի Տէր*
*Տոմենիքոյ Թարտինի*

*Lwów, Pologne, le* 10 VIII. 1936

A. S. E. P. Serapion Dr. Oulouhodjian
Abbé Général des PP. Méchitaristes – Venise

Je remercie Votre Excellence de sa lettre si aimable m'annoçant un jubilée aussi beau et rare qu'est le centenaire de Votre Collège.

Je remercie spécialement Votre Excellence de m'avoir donné occasion à exprimer ces sentiments si vifs et si ardents qui remplissent mon cœur dans ce jour si solennel pour vous.

L'immense travail créateur entrepris par les pioniers du christianisme en Arménie aux premiers siècles de notre ère, après une longue entremise, fut repris à nouveau par les deux Congrégations, qu'avait fondées un Saint éminent, un Homme de trempe extraordinaire: l'Abbé Méchitar.

Et voici que refleurit la culture arménienne dans les livres édités par vous et dans vos précieux écrits – et voici que suscita le siècle d'or de la renaissance arménienne.

Ce n'est pas le moment d'exalter ici les riches acquisitions intellectuelles et culturelles qui finirent par couronner vos dures efforts. Il suffit de constater qu'elles furent immenses.

Ce passé si vivant et splendide vous soit donc un guide et assaut à de nouveaux travaux et conquêtes. C'est ce que je vous souhaite aujourd'hui et c'est à quoi tendent toutes mes prières faites à votre intention dans ce jour mémorable.

Veuille le Tout–Puissant vous accorder la grâce de demeurer vainqueurs des difficultés, qui ne manqueront pas à surgir afin que toujours et partout vous suiviez les traces de Vos grands Fondateurs, vos exquis poètes, historiens et missionaires.

J'ai toujours poursuivis avec le plus grand intérêt les progrès de votre Institut à diverses époques lors de mes rencontres nombreuses avec lui durant mes voyages à Venise et Rome. Les souvenirs que j'en garde se sont gravés dans mon âme à jamais. J'envoie à votre solennité en caractère de Délégué mon Chanoine l'Abbe Paul Kirmizian.

A mes vœux les plus sincères et mes ardentes prières je joins ma bénédiction pour la Congrégation toute entière et specialement pour la jeunesse.

Votre serviteur tout dévoué en Notre-Seigneur,

† J. Téodorowicz Archevêque

digitised by A.R.A.R.@

Լըվով, Լեհաստան - 10 Օգոստոս 1936

Գերպ. Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան, Ընդհ. Աբբահայր Մխիթ. Միաբ. եւն.

Գերապայծառ Տէր

Շնորհակալ եմ Ձերդ Գերապայծառութեան, իր յոյժ սիրելի նամակին համար, որով ինծի կը ծանուցէր Ձեր Վարժարանին այնքան չքնաղ և հազուադէպ հարիւրամեակը:

Յատկապէս շնորհակալ եմ Գերապայծառութեանդ որ ինծ տուաւ առիթը արտայայտելու այն կենդանի և եռանդուն զգացումները՝ որոնք սիրտս կը լեցնեն Ձեզի համար այնքան հանդիսաւոր օրուան մէջ:

Մտեղծող անսահման աշխատութիւնը քրիստոնէութեան ռահվիրաներէ ձեռնարկուած Հայաստանի մէջ, մեր թուականին առաջին դարերուն, յետ երկար դադարի մը՝ կրկին սկսաւ երկու Միաբանութիւններու ձեռքով, զորս հիմնած էր գերազանց Սուրբ մը, արտակարգ նկարագրով Մարդ մը, Մխիթար Աբբահայր:

Եւ ահա Հայկական մշակոյթը որ վերստին կը ծաղկի Ձեր տպագրեալ գրքերուն և թանկագին գրուածքներուն մէջ, ահա ոսկեդարը որ կը վերազարթնու Հայկական վերանորոգութեան:

Այժմ ժամանակը չէ հոս ներբողելու, մտաւորական ու մշակութային ճոխ նուաճումները, որոնք հուսկ պսակեցին Ձեր բուռն ջանքերը: Բաւէ հաստատել որ՝ անոնք անհունապէս մեծ եղան:

Այնքան կենդանի և փառահեղ անցեալը ուրեմն թող ըլլայ Ձեզի համար իբրեւ առաջնորդ և խոյանք մը դէպ ի նորանոր աշխատութիւններու նուաճումներ: Այս է որ այսօր կը մաղթեմ Ձեզի, և ասոր կը ձգտին իմ բոլոր աղօթքներս զորս մատուցի Ձեր դիտաւորութեան, պատմական օրուան մէջ:

Ամենակարողն Աստուած բարեհաճի պարգեւել Ձեզի իր շնորհքը յաղթանակելու դժուարութեանց, որոնք անշուշտ պակաս պիտի չըլլան, որպէսզի միշտ և ամէնուրեք դուք հետեւիք Ձեր մեծանուն հիմնադիրներու շաւղին, ընտիր բանաստեղծներուն, պատմաբաններուն և քարոզիչներուն:

Ես միշտ մեծ հետաքրքրութեամբ հետեւած եմ Ձեր հաստատութեան յառաջադիմութեան զանազան շրջաններուն՝ Ձեզի հետ ունեցած յաճախակի հանդիպումներուս միջոց, Վենետիկ և Հռոմ ճամբորդութիւններուս առթիւ:

Այդ հաստատութենէն ունեցած յիշատակներս առ յաւէտ քանդակուած են հոգւոյս մէջ:

Կը ղրկեմ Ձեր հանդիսաւոր տօնախմբութեան իբր պատգամաւոր իմ կանոնիկոսս՝ Տէր Պօղոս Գրիգեան Վարդապետը:

Ամենակեդծ մաղթանքներուս և եռանդուն աղօթիցս կը միացնեմ օրհնութիւնս բովանդակ Միաբանութեան և մասնաւորապէս երիտասարդութեան համար:

Ձերդ անձնուէր ծառայ ի Տէր

† Յ. Թէոդորովիչ Արքեպս.

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Պէյրութ, 4 Յուլիս 1936

Գերապայծառ Տէր
Տէր Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան
Ընդհանուր Աբբայ Մխիթ. Ուխտին - Վենետիկ

Գերապայծառ Տէր,

Նուիրական պարտականութիւն մը կը համարիմ և ցնծալից սրտով կը փութամ միացնելու սրտագին բարեմաղթութիւններս այն բազմաթիւ անձանց կաթոգին իղձերուն հետ, որոնք Մ. Ռաֆայէլեան Վարժարանի հարիւրամեակի առթիւ պիտի արձագանգեն նոյն վարժարանի նուիրական յարկերուն տակ:

Ստուգիւ Մ. Ռափայէլեան այդ աշխարհահռչակ վարժարանը լուսարձակ փարոս մ'եղաւ մերս Հայաստանի: Այդ հոյակապ յարկին ծոցէն ծագեցան մեր ազգին փառք ու պարծանք այնպիսի անձինք, որոնք իրենց ստացած գիտութեանց շնորհիւ արթնցուցին ազգասիրութեան հոգին. վսեմ քերթուածներով և գրութեամբ ոչ միայն մերազնէից այլ նոյն իսկ Եւրոպայի քաջահմուտ անձնաւորութեանց հիացման առարկայ եղան: Ասոնք եղան ատեն մը Օսմ. Կայսրութեան ղեկը սքանչելի կերպով դարձնողը. և նոյն իսկ Եւրոպական տէրութեանց մօտ ալ բարձր պաշտօններու արժանացան: Այս ամէնն ալ շնորհիւ պանծալի և բազմարդիւն Միաբանութեանդ մեղուաջան և քրտնաթոր ջանութեանց:

Արդ դժխեմ բախտին արկածներէն ի սփիւռս ազգաց և ամենայն ուրեք գտնուող բովանդակ հայկազնեան որդւոց երախտագիտական ծափաձայն աղաղակներուն հետ կը միացնեմ նաեւ իմին սրտագին և ջերմագին բարեմաղթութիւններս գոչելով «կեցցէ՛ Մ. Ռափայէլեան վարժարանը»,



կեցցէ՛ պանծալի Մխիթարեան միաբանութիւնդ, կեցջիք ցորքան Արածանի և Դկլաթ կը շարունակեն իրենց քայլամոլոր ընթացքը: Ահա այս իղձերով է որ կու գամ շնորհաւորելու Մ. Ռափ. Վարժարանի հարիւրամեակը:

Այս առթիւ ի սերտ սրտէ կը շնորհեմ Յիսուսեանդ օրհնութիւնը թէ Ձեզի, Գերապայծառ տէր, և թէ Մ. Ռափայէլեան վարժարանի բովանդակ աշակերտաց: Եւ եմ լի համակրանօք և մեծարանօք

Գերապայծառ Տէրութեանդ
Աղօթարար
† Պետրոս Արքեպիսկոպոս Գօյունեան

Հաարուն (Լիբանան), 19 Օգոստոս 1936

Գերապայծառ Սրապիոն Ուլուհոճեան
Ընդհանուր Աբբայ Մխիթարեան Ուխտին ի Վենետիկ

Գերապայծառ Տէր,

Մեծ հաճոյքով կարդացի Գերպ. Տէրութեանդ պատուական գրութիւնը, որով բարեհաճեցաք զիս հրաւիրել Վենետիկ, մասնակցելու համար զանազան հանդէսներու և տօնախմբութիւններու, որոնք տեղի ունեցան արդէն ամսոյս 16-ին, առթիւ Մուրատ-Ռափայէլեան Վարժարաններու հարիւրամեակին:

Խորին շնորհակալութեամբ ընդունեցայ Ձեր հրաւիրագիրը որ ձեռքս հասաւ Հասրուն, ամսոյս 17-ին:

Թէպէտ և արդէն որոշուած հանդէսներու ժամանակը անցած է, սակայն կրնաք ապահով ըլլալ թէ հոգւով սրտով կը մասնակցիմ Ձեր ուրախութիւններուն, և կ'օրհնեմ ի բոլոր սրտէ Ձեր արդիւնաւոր աշխատութիւնները, որոնք այնքան քաղցր պտուղներ յառաջ բերին:

Կարելի չէ, Գերապայծառ Տէր, աչքէ անցնել Ձեր այնքան վաստակները, քրտնաթոր աշխատութիւնները և հսկայ ջանքերը, զոր Ձեր արդիւնաշատ Միաբանութիւնը սիրայօժար յանձն առաւ զանազան մեծ զոհողութիւններով, ի փառս Մեծին Աստուծոյ, ի պայծառութիւն կաթողիկէ Եկեղեցւոյ և յօգուտ ազգիս, և չզարմանալ ու չսքանչանալ, և չհրճուիլ ու չզուարճանալ, տեսնալով այնքան բազմադիմի արդիւնքներ և արժանիքներ, որոնք փառք ու պարծանք են ոչ միայն Մխիթարեան Ուխտին, այլ նաեւ Հայ Կաթողիկէ Համայնքութեան և բովանդակ Հայ Ազգին: Բաւէ այնքան աշակերտութիւն, որ հարիւրամեայ երկար միջոցին մէջ, աշխարհքիս ամէն կողմը սփռուած պարծանք կը բերեն Մուրատ-Ռափայէլեան Վարժարաններուն և Մխիթարեան Միաբանութեան, իրենց բարձր կրթութեամբը, առողջ դաստիարակութեամբը և Ձեզմէ առած վսեմ գաղափարներով:

Կը մաղթեմ Ձեզի կրկին Հարիւրամեայ մըն ալ աւելի մեծ յաջողութիւններով, որպէս զի Ձեր բազմաբեղուն Գործունէութիւնը աւելի մեծ արդիւնքներ տայ Եկեղեցւոյ և Ազգիս:

Այսպիսի ջերմ բարեմաղթութիւններով և իղձերով և անկեղծ շնորհաւորութիւններով մնամ

Գերապայծառ Տէրութեանդ Աղօթարար
† Յակոբ Արք. Նեսիմեան
Վիճակաւոր Կ. Հ. Եգիպտոսի

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ
ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ
ԲԵՐԻՈՅ

Հալէպ, 8 Օգոստոս 1936

Գերամեծար և Գերապայծառ Տէր
Տէր Սրապիոն Ծ. Վրդ. Ուլուհոճեան
Ընդհանուր Աբբայ Մխիթարեան Հարց Վենետկոյ - Վենետիկ

Գերապայծառ Տէր՝

Ստացանք ձեր 28 յուլիս թ. 339-11 թուակիր նամակը, որով մեզ կ'իմացընէք Մուրատ-Ռափայէլեան Վարժարաններու հարիւրամեայ յոբելեանը, և կը բարեհաճիք միանգամայն զմեզ հրաւիրելու նոյնին մասնակցութեան:

Այս բարեպատեհ առիթէն օգտուելով կու գանք յանուն Ազգիս մեր ջերմագին երախտագիտութիւնը յայտնել Մխիթարեան Միաբանութեան, որ այդչափ վարժարաններու միջոցաւ, լոյս

digitised by A.R.A.R.@

և գիտութիւն սփռեց հայ ազգին մէջ. այս երկու վարժարաններուն սաներուն անունները լոկ յիշել բաւական է, յայտնելու թէ որքան ազգօգուտ և պտղաբեր եղած է հայրենեաց, հաստատութիւնդ այդ։

Ուստի կու գանք մասնակցիլ այդ փառապանծ հանդէսներուն որ կը կատարուին հոտ, Մեծին Մխիթարայ անունը և միանգամայն հայ ազգին պատիւը բարձր պահելով ընդհանուր քաղաքակիրթ ազգերու առջեւ։

Մեր ջերմագին շնորհաւորութիւնները և սրտագեղ բարեմաղթութիւնները կը մատուցանենք այս առթիւ օրհնելով այդ հաստատութիւններն։

Շատ պիտի փափաքէինք անձամբ ներկայ գտնուիլ այս գեղեցիկ հանդէսներուն, բայց մեր կամքէն անկախ պատճառներէն արգիլուած՝ պիտի չկարենանք մեր բաղձանքը կատարել։ Ուստի սրտով և մտքով Ձեզի հետ միանալով մեր սրտաբուխ աղօթքները կը մատուցանենք Տիրոջ, Ձեր ազգօգուտ Միաբանութեան և Մուրատ–Ռափայէլեան Վարժարաններուն յառաջադիմութեան և բարգաւաճման համար։

Հայրական օրհնութեամբ և եղբայրական ջերմ սիրոյ ողջունիւ

Ձերդ Գերապայծառ Տէրութեան
Աղօթարար
† Գրիգոր Արքեպս. Հինտիէ
Վիճակաւոր Բերիոյ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆ

ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ

Կ. Պոլիս, 12 Օգոստոս 1936

Գերյարգելի Տէր
Հ. Սրապիոն Վ. Ուլուհոճեան
Ընդ Աբբայ Մխիթարեան Միաբանութեան – Ս. Ղազար ի Վենետիկ

Գերյարգելի Տէր

Ժամանակին ստացայ 27 Յուլիս թուակիր և 339–30 թիւ հրաւիրագիրդ Մուրատ–Ռափայէլեան Վարժարաններու Առաջին հարիւրամեակին հանդէսներուն որոնք տեղի պիտի ունենան ամսոյս 16ին կիրակի օր,

Շատ կը փափագէի Վենետիկ և Ս. Ղազար կղզին այցելել մանաւանդ այսպիսի փառաւոր օրերու մէջ և մի քիչ փոխելով մեր առօրեայ մտազբաղումները, հոգեկան մխիթարութիւններով վերանալ սակայն սեւ բախտս արգելք հանդիսացաւ այս պատեհ առիթին։ Թող կամք Տեառն օրհնեալ լիցին։

Մինչ այս կ՚աղօթեմ որ բարին Աստուած յաջողութիւն պարգեւէ Ձեր յոգնայոյզ ջանքերուն և օր ըստ օրէ բարգաւաճէ Միաբանութիւնդ և Մուրատ–Ռափայէլեան հաստատութիւնը օգտակար հանդիսացնելով ինչպէս անցեալոյն և ապագային մէջ։

Հաճեցէք, Գերյարգելի Տէր, ընդունիլ այս մաղթանացս հետ և իմ ջերմ և սիրալիր ողջոյններս, որովք եմ Գերյարգելի Տէրութեանդ աղօթակից։

† Պօղոս Արք. Քիրէճեան
Վիճ. Կ. Պոլսոյ

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ՀԱԼԷՊ

Հալէպ, 10 Օգոստոս 1936

Արհիապատիւ Հայր Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան
Ընդհանուր Աբբայ Մխիթարեան Ուխտին ի Վենետիկ

Արհիապատիւ Տէր,

Պատիւը և ուրախութիւնը միանգամայն ունեցայ ստանալով Ձեր Սրբազան Եղբայրութեան 28 Յուլիս 1936 թուակիր և 340–8 համարաւ սրտագրաւ գրութիւնը, որով կ՚իմացնէիք Մուրատ Ռափայէլեան զոյգ վարժարաններուն առաջին դարադարձի առթիւ տեղի ունենալիք հանդիսութիւնները և այդ առթիւ կը փափաքէիք մեր եւս մասնակցութիւնը տօնական սոյն կրկին ուրախութեանց։

Բերիոյ թեմին Ազգային Վարչութիւնը իր 7 Օգոստ.ի նիստին, ուրախութեամբ կարդաց



Ձեր վերոգրեալ պաշտօնագիրը և պարտականութիւն դրաւ մեր վրայ յայտնել Բերիոյ թեմին կրօնական և Քաղաքական ժողովներու, ինչպէս նաեւ համայն Հայ հասարակութեան, Սրբազան Եղբայր, սրտագին խնդակցութիւնը, լաւագոյն բարեմաղթութիւններով։

Մէկ դարու ընթացքին թափուած ջանքերը, յարգելի ուխտիդ կողմէ, արդիւնաւորելու համար զոյգ հաստատութիւնը, թող ըլլան քաջալեր, նորագոյն ուժերով տօնակերտելու նոր դարադարձներ, յօգուտ մեր Հայ Ազգին և ի պայծառութիւն Հայ հոգեւոր և աշխարհիկ մշակոյթին։

Խնդրելով որ բարեհաճիք ընդունիլ, Արհիապատիւ Տէր, խորին յարգանացս հաւաստին, Եղբայրական սիրոյ անկեղծ ողջոյններով

Մնամ Խ. Աղօթակից
Առաջնորդ Հայոց Բերիոյ
Արտաւազդ Արքեպիսկոպոս Սիւրմէեան

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻ

ԲԱՐԻԶ

Բարիզ, 5 Օգոստոս 1936

Առ Գերապատ. և Գերապայծառ Հայր
Հայր Սրապիոն Վ. Ուլուհոճեան
Ընդհ. Աբբայ Մխիթ. Միաբանութեան – Վենետիկ

Գերապատուելի և Գերապայծառ Հայր

Ո՛րքան պիտի բաղձայի անձամբ ներկայ գտնուիլ հանդիսաւոր յոբելինական տօներուն, որոնք պսակը պիտի կազմեն այն դարաւոր գործունէութեան, զոր անդադար կատարեց Միաբանութիւնդ Մուրատ – Ռափայէլեան Վարժարաններուն մէջ՝ կրթելով և դաստիարակելով հոն հազարաւոր պատանիները Ազգին։ Ձեր շնորհիւը՝ անոնցմէ շատերը ամենամեծ պաշտօններու հասան և ամէնքն ալ առ հասարակ պատուաբեր դիրք մը ունեցան ընկերային և ազգային այլեւայլ մարզերուն մէջ։ Հայ ազգը շատ բան կը պարտի Ձեզ։

Որքան ալ բացակայ մարմնով՝ այլ սրտով և հոգւով Ձեր մէջը պիտի ըլլամ, Ձեզի հետ ի միասին գոհաբանական աղօթք պիտի մատուցանեմ Աստուծոյ, խնդրելով միեւնոյն ժամանակ իրմէ որ, միշտ աւելի բարգաւաճ կացուցանէ Միաբանութիւնդ, յօգուտ Եկեղեցւոյ և Ազգիս։

Հրաւիրելով Բարձրելոյն օրհնութիւնը Ձեր և Միաբանութեանդ ամէն մի Անդամոցը վրայ մնամ,

Գերապ. և Գերապայծառ Հօրդ, աղօթակից
Գրիգոր Եպս. Պահապանեան
Վիճակաւոր Գաղատիոյ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻ

ՄԱՐՍԻԼԻԱ

Էքս, 14 Օգոստոս 1936

Գերապատիւ Հ. Սրապիոն Վ. Ուլուհոճեան
Ընդհ. Աբբայ Մխիթ. Միաբանութեան – ի Վենետիկ Ս. Ղազար

Մեծապէս շնորհակալ եմ որ զիս ալ հրաւիրեր էք ազնուաբար Մխիթարեան Ուխտիդ Հաստատութեանց Մուրատ–Ռափայէլի Ա. Հարիւրամեակի տօնախմբութեանց ի Վենետիկ։

Ամենամեծ ուրախութեամբ սրտի կ՚ուզէի Ձեր անզուգական տօնից և խրախճանութեանց մասնակցիլ՝ եթէ հնարաւոր ըլլար այն. բայց տեղւոյս հեռաւորութիւնն և առողջական վիճակս կը զրկեն զիս այս նուիրական ներկայութենէս և զՁեզ տեսնելու և շնորհաւորելու մեծ հաճոյքէն. գոնէ ներուի ինձ ըսելու որ հեռու մարմնով սակայն ոգւով և սրտով ձեզի հետ պիտի ըլլամ ի 16 ամսոյս՝ պիտի մասնակցիմ այն շքեղ և փառաւոր հանդէսներուն, պիտի միանամ աղօթից և շնորհաւորութեանց, պիտի ձայնակցիմ այն «կեցցէ»ներուն որոնք պիտի բարձրացնեն մինչեւ երկինք Ձեր արդիւնաւոր և ազգային յաջողութիւնները՝ ի փառս Աստուծոյ և Ազգիս, որոնց արժանացաք հարիւր տարիներէ ի վեր ձեր անձնուէր, աստուածասէր և ազգանուէր ամենամեծ ջանքերովն և քրտինքովը։

Բարերարն Աստուած շնորհէ միշտ աւելի բեղմնաւոր յաջողութիւններ Ձեր Հաստատութեանց և Ուխտին, երկայն և երջանիկ տարիներ անոր անդամներուն՝ վեր. Հարց և իրենց Աբբային, որուն առաքինութիւններն և կարող գործունէութիւնը Ազգին և Կրօնից պատիւ կը բերեն։

Այս մաղթանքներով և շնորհաւորութիւններով ու հաւաստեօք յարգանացս Գեր. Հօրդ և բոլոր Միաբաններուն կը մնամ

Գեր. և Վեր. Հօրդ, աղօթակից
Անտոն Եպս. Պահապանեան
Վիճակաւոր Կեսարիոյ



digitised by A.R.A.R.@

Հռովմ, 4 Օգոստոս 1936

Առ Վերապատուելի և Գեր. Հայր,
Հայր Սրապիոն Վ. Ուլուհոճեան
Ընդհ Աբբայ Մխիթարեան Միաբանութեան – Վենետիկ

Վերապատուելի և Գեր. Հայր.

Ձեր 28 Յուլիս ամսոյ պատուական և յարգելի նամակն այսօր առի գիւղէն ի Հռովմ իջած պահուս: Շնորհապարտ եմ և ի սրտէ գոհ Ձեր գերազնիւ ուշադրութեան որով զիս կը հրաւիրէիք Օգոստոս ամսոյ 16ին Մուրատ – Ռափայէլեան Վարժարաններու առաջին հարիւրամեակը տօնելու փառապանծ հանդիսին ներկայ գտնուելու:

Դարու մը կրթական գործունէութիւնը՝ Տերամբ պտղաբերած և նուիրական դեր կատարած է մեր Ազգին մշակութային վերածնութեան մէջ, գհեա շաւղաց ընթանալով Երանաշնորհ Մեծին Մխիթարայ: Այո, ամէն մէկ հայազգի անհատին սիրտն և հոգին ցնծութեամբ լեցնելու է: Այս ուրախութիւնը նուաստիս սիրտը գեր ի վերոյ կը լեցնէ և բոլորով սրտիւ կը գոչէ. Կեցցէ բազմարդիւն Ուխտն Մխիթարեան. կեցցէ ի յաւիտեան: Բերկրալից ուրախութեամբ, կու գամ ներկայիս շնորհաւորելու բարենշան Յոբելեանը. կը մաղթեմ որ դարուց ի դարս յարատեւէ Մխիթարեան վեհապանծ Ուխտին շուքն և հովանին՝ Մուրատ – Ռափայէլեան Վարժարաններու վրայ, որ Հայ սերունդի բարոյական և ազգային դաստիարակութիւնը առաւել քան զառաւել պայծառացնէ Ուխտ, ի պայծառութիւն Քրիստոսի սուրբ Եկեղեցւոյն և յօգուտ մեր բազմաչարչար և սիրելի Ազգին:

Որչափ ալ սրտիս մօտ է այդ պանծալի Յոբելեանը, որչափ ալ դուք սիրելի էք ինձ և բաղձալի էր որ անձամբ շնորհաւորէի այդ դարադարձը. սակայն կը խոստովանիմ, որ այդպիսի մեծահանդէս տօներէ խոյս կու տամ բնածին մղմամբ մը:... Ուստի կը խնդրեմ, կալարուք զիս հրաժարեալ, եւ՝ սրտովս և աղօթքովս նոյն օրը՝ Ձեզի հետ եմ, և Ձեր մէջն եմ, ուքան ալ որ մարմնով Հռովմայ շուրջ գտնուող գիւղի մը մէջ գտնուիմ:

Կրկնելով շնորհաւորութիւններս և մաղթանքներս, և հայցելով երկնից օրհնութիւնը զոյգ Վարժարաններու, իր նախկին և այժմեան Սաներու և ողջոյն Միաբանութեանդ վրայ,

կը մնամ Ձերդ Աղօթարար
† Սարգիս Եպիսկոպոս Տէր – Աբրահամեան
Տիտղոսաւոր Կոկիսոնի
Ձեռնադրիչ Հայ ծիսին

EVÊCHÉ
DE VERSAILLES

*Versailles, le* 11 *Août* 1936

Très Rév. Père S. Oulouhodjian
Abbé Général des PP. Mékhitaristes - Venise

Je vous prie d'agréer, Révérendissime Père, mes remerciments, mes félicitations et mes vœux cordiaux, en union d'actions de grâces.

† Benjamin Octave
Evêque de Versailles.

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆ
ՎԵՐՍԱՅԼԻ

Վերսայլ, 11 Օգոստ. 1936

Գեր. Հ. Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան
Ընդհ. Աբբայ Մխիթ. Միաբանութեան – Վենետիկ

Կը խնդրեմ որ հաճիք ընդունիլ, Գեր. Հայր, իմ շնորհակալութիւններս, շնորհաւորութիւններս և իմ սրտագին մաղթանքներս, առ Աստուած գոհութեան խղճերով միացած Ձեզի հետ:

† Բենիամին Օկտաւ
Եպիսկոպոս Վերսայլի



IL VESCOVO DI PADOVA
AMMINISTRATORE APOSTOLICO DI TREVISO

*Treviso,* 14 *Agosto* 1936

Ill.mo e Rev.mo Padre Serapione Uluhogian
Abate Generale della Congr. Mechitarista - Venezia

Mi è giunta quanto mai gradita la comunicazione della celebrazione del I° Centenario della Fondazione dei Collegi Moorat-Raphaël che tanto bene hanno apportato alla nobile Nazione Armena nel campo religioso morale, come in quello civile e culturale.

Mentre esprimo le mie congratulazioni più vive per la solenne e lieta ricorrenza, faccio voti che i celesti favori concessi in larga copia continuino e fecondino sempre più tutte le attività svolte in passato e che codesta benemerita Congregazione ha in animo di svolgere per il bene delle anime.

Con tali auguri e con tali sentimenti invoco, a Lei, Rev.mo Padre, ai Ven. Confratelli, a tutti i Superiori e alunni dei Collegi sunnominati la benedizione del Signore e porgo i più distinti ossequi.

Dev.mo † Carlo Agostini-Vescovo
Amm. Apostolico

ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓԱՏՈՒԱՅԻ
ԵՒ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԹՐԵՒԻԶՈՅԻ

Թրեւիզոյ, 14 Օգոստոս 1936

Գերապայծառ և Գերապատիւ Հ. Սրապիոն Ուլուհոճեան
Ընդհ. Աբբահայր Մխիթարեան Միաբանութեան – Վենետիկ

Հասաւ ինծի մեծապէս հաճելի հաղորդագիրը տօնախմբութեան Ա. հարիւրամեայ հիմնարկութեան Մուրատ-Ռափայէլեան Վարժարաններուն՝ որ այդքան բարիք ըրած են Հայ ազնիւ ազգին կրօնա – բարոյական ինչպէս նաեւ քաղաքական ու մշակութային մարզերուն մէջ:

Մինչ կ'արտայայտեմ իմ ջերմ շնորհաւորութիւններս հանդիսաւոր ու բերկրաւիթ տօնախմբութեան համար, կը մաղթեմ որ շնորհուած երկնային առատագեղ նպաստները շարունակեն և բեղնաւորեն միշտ աւելի անցեալոյն գործունէութիւնները և ինչ որ այդ արդիւնաւոր միաբանութիւնը սրտին մէջ ունի հոգւոց օգտին համար:

Այսպիսի մաղթանքներով և այսպիսի զգացումներով կը հայցեմ Աստուծոյ օրհնութիւնը Ձեր վրայ, Գերյարգելի Հայր, Վերապատուեալ Եղբայրակիցներուդ, և վերոյիշեալ վարժարաններուն բոլոր մեծաւորներուն ու աշակերտներուն վրայ, ու կը մատուցանեմ իմ խորին յարգանքներս:

Անձնանուէր † Կարոլոս Ակոստինի
Առաքելական Կառավարիչ

VESCOVO DI VICENZA

*Vicenza,* 12 *Agosto* 1936

Al Rev.mo Signore P. Serapione Uluhogian
Abate Generale Congr. Mechitarista - S. Lazzaro, Venezia

*Reverendissimo Signore*

Mi associo di cuore all'esultanza di cotesta illustre e benemerita Congregazione Mechitarista che il 16 corrente festeggierà il I° Centenario della fondazione dei due Collegi Moorat-Raphaël con il nobile scopo di dare una educazione religiosa, letteraria e nazionale alla gioventù Armena.

Mi compiaccio vivamente del gran bene che la benefica e patriottica istituzione ha compiuto nei suoi primi cent'anni di vita alla nazione Armena attraverso le schiere numerose degli allievi, educati in Italia, centro della Religione e della civiltà.

digitised by A.R.A.R.@

Faccio voti per la vita e la prosperità dei Collegi Armeni e sulla provvidenziale missione loro affidata invoco l'abbondanza delle grazie e benedizioni divine.
Ringrazio pertanto la P. V. Rev.ma della cortese comunicazione e, lieto dell'incontro, porgo distinti ossequi professandomi di V. P. devotissimo

Ferdinando Rodolfi vesc.

ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԻՉԵՆՑԱՅԻ

Վիչենցա, 12 Օգոստոս 1936

Գերյարգելի Տէր, Հ. Սրապիոն Ուլուհօճեան
Ընդհ. Աբբայ Մխիթարեան Միաբանութեան Ս. Ղազար - Վենետիկ

Սրտով կը միանամ այդ անուանի ու արդիւնաւոր Մխիթարեան Միաբանութեան ուրախութեան որ ամսուս 16ին պիտի տօնէ առաջին հարիւրամեակը, հիմնարկութեան Մուրատ–Ռափայէլեան Վարժարաններու որոնց նպատակն է Հայ պատանեաց կրօնական, գրական ու ազգային դաստիարակութիւնը:

Ուրախ եմ այն մեծ օգտին համար զոր բարեգործ և հայրենասէր հաստատութիւնը կատարած է Հայ ազգին համար իր կեանքի առաջին հարիւրամեակի տարիներուն մէջ, այն աշակերտաց բազմաթիւ խումբերուն որ կրթուեցան Իտալիոյ մէջ՝ կեդրոն կրօնքի և քաղաքակրթութեան:
Մաղթանքներով Հայ վարժարաններուն կենաց ու յառաջդիմութեան համար, կ'աղերսեմ Ձեզի Նախախնամութենէ յանձնուած առաքելութեան վրայ շնորհաց զեղումն ու Աստուածային Օրհնութիւնները:

Շնորհակալ եմ Ձեր գերյարգելիութեան ազնիւ հաղորդագրին համար, և ուրախ այս հանդիպման համար, կը մատուցանեմ իմ խորին յարգանքներս, հաւաստելով զիս

Ձերդ Հայրութեան անձնուէր
Ֆերտինանտ Ռոտոլֆի

IL VESCOVO DI CHIOGGIA

*Chioggia, li* 8 *Agosto* 1936

A. S. Ecc. P. Serapione Uluhogian
Abate Generale della Congr. Mechitarista – Venezia

*Rev.mo P. Abate*

Partecipo vivamente alla gioia di cotesta Congregazione nella ricorrenza del I° Centenario della fondazione dei due Istituti «Moorat» e «Raphaël» ed invoco su di esse le benedizioni del Signore, a sempre maggior incremento di opere sante.

Dev.mo nel Signore — Domenico M. Mezzadri
Vescovo di Chioggia

ԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆ
ՔԻՈՃՃԻԱՅԻ

Քիոճճիա, 8 Օգոստ. 1936

Գերպ. Հ. Սրապիոն Վրդ. Ուլուհօճեան
Ընդհ. Աբբահայր Մխիթ. Միաբանութեան – Վենետիկ

Ջերմապէս կը մասնակցիմ Ձեր Միաբանութեան ուրախութեան Մուրատ և Ռափայէլեան երկու վարժարաններու հարիւրամեայ հիմնարկութեան բարեբաստիկ տօնախմբութեանց և կը հայցեմ անոր վրայ Աստուծոյ օրհնութիւնները միշտ յառաւելագոյն զարգացումն սրբանուէր գործերու:

Անձնուէր ի Տէր — Դոմինիկոս Մ. Մեծծատրի
Եպս. Քիոճճիայի



ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ
ՓԱՐԻԶ

փարիզ, 16 Օգոստոս 1936

Արհիապատիւ Աբբահայր Մխիթարեան Ուխտին Ս. Ղազարու
Հ. Սրապիոն Ծ. Վարդապետ Ուլուհօճեան – Վենետիկ

Լուսոյ Մեծապանծ Տանդ Ա. Դարադարձն ունիք կատարել խնամօքն Ամենակալին և Ես 81ամենի ալեւոր արկածեալս և անուամբս եւեթ իբր Եպիսկոպոս Հայոց փարիզի և Պելճիքայի ընկալայ զ'Հրաւէրն Ձերդ Գերաշնորհ Սրբութեան, որոյ վասն յայտնեմ խոր շնորհակալիսն ցաւագնեալ հիքոյս:
Արդարեւ արժանահատոյց Յոբելեան ի յիշատակ Սամուէլ – Մուրատ և Եդուարդ – Ռափայէլ Մեծ Բարերարացն Հայ լրութեան, Որոց անմոռաց յիշատակն՝ օրհնեալ լիցի յաւերժաբար:
Իսկ մեծին Մխիթարայ Հոգեհարազատք – Սրբազումար Ուխտդ՝ փառապանծ կացջիք, զի ՀԱՐԻՒՐԱՄԵ՛ԱՑ ՇՐՋԱՆԻ բոլորմամբ զուն գործեցիք և յաջորդաբար ոքնեցայք, ի կրթութիւն և ի լուսաւորութիւն Հայ սերնդոց և ընծայեցիք բազմաթիւ սանունս յայլ եայլ, ծառայութիւնս բազմակարօ՛տ Հայ ազգիս:
«Պօղոս՝ տնկեաց, Ապօղոս՝ ջուր ետ և Աստուած աճեցո՛յց»:
Յաստուածուստ օրհնեա՛լ էք Դուք Ամենեքին և մեք վայելողքս ամենայն ՎԱՍՏԱԿՈ՛ՑՆ Ձերոց շնորհապարտ եմք Անձնուէ՛ր Մշակացդ Ամենից:
Յոյժ ցանկալի էր ալեւորիս անձամբ գտանիլ ի ծրագրեալ Հանդիսաւորութիւնդ Դարադարձին և հրճուի՛լ հոգեպէս, բայց քանզի չեղեւ ինձ դիւր բացակայիլ ի պաշտօնավայրէս, վասնորոյ յանձն արարաք ազնուամեծար Տիար Գառնիկ Բարունակեան Մտերմին խմում – Ընդհ. Քարտուղարին Ս. Եկեղեցւոյս և լիազօր Ներկայացուցչին ժողովականացն մերոց՝ ներկայ լինել անձամբ և մատուցանել զ'շնորհաւորութիւնն մեր:
Եւ տրուպս՝ ի բացուստ կամ խնդակից և աղօթարկու ի մշտնջենական պայծառազարդութիւն Լուսոյ Տանդ և Սրբոյ Ուխտիդ:

Հոգ. Հովիւ Հայոց փարիզի և Պելճիքայի՝
Վռամշապուհ Եպիսկոպոս Քիպարեան
ի Տանէն Արջուկենց
(Հինն Սադաղ – Սադալա)
ի Նիկոպոլսոյ Սեբաստեան

7 Օգոստ. 1936 փարիզ

Գերյարգելի Հ. Սրապիոն Վ. Ուլուհօճեան
Ընդհ. Աբբայ Մխիթ. Միաբանութեան – ի Ս. Ղազար, Վենետիկ

Վերապատուելի Հայր

Շնորհակալութեամբ եմ ընդունած Ձեր Յուլիս 28 թ. պաշտօնագիրը՝ որով կը հրաւիրէք զիս մասնակցելու Մուրատ–Ռափայէլեան Վարժարանի առաջին դարադարձի առիթով ի Վենետիկ տեղի ունենալիք տօնական ուրախութեանց: Սրտով ու մտքով ձեզ հետ և ձեր մէջ՝ խոր վիշտ է ինձ՝ հակառակ բուռն բաղձանքիս չկարենալ ներկայ ըլլալս անձամբ, վերապրելու համար՝ 38 տարիներ յետոյ անգամ մ'ալ այն քաղցր յիշատակները՝ որոնք կապ ունին իմ պատանութեանս և ուսանողական կեանքիս հետ:

Հարիւրամեա՛կ մը, իմացական մտաւորապէս 2000 ջահակիր մարզիկներով մշակոյթի և լուսաւորութեան դաշտին մէջ: Սովորական տօն մը չէ զոր կը կատարէ Հայութիւնը Վենետիկի մէջ միասիրտ՝ պանծացնելով զոյգ և անմահ անունները Մուրատի և Ռափայէլի՝ անոնց սրտակերտ և յաւերժայիշատակ կոթողին շուրջ բոլորուած ուխտաւորներու զուարթ պարերով: Բայց ինչպէս այս անուններուն անմահութիւնը ապահովուած է լուսապսակովը Մեծն Մխիթարի՝ որուն հայեցի կենդանի շունչն է արծարծած հրաշագործ կրակը լուսաւորութեան վառարանին՝ ձուլելու համար հայ պատանի սիրտերն ու միտքերը ազգային մաքուր զգացումի մը և առողջ ըմբռնումի մը շնորհալի կաղապարին մէջ:

Այս գրիչը ականատես է եղած այդ ճարտարապետութեան, իբրեւ մէկը, հոգ չէ թէ փոքրիկը, ճարտարապետուած հոգիներէն:

Մթնոլորտը, ուր տեղի է ունեցեր այդ ճարտարապետութիւնը, կրօնաբոյր է՝ ճշմարիտ է: Բայց այդ իսկ է զուցէ գաղտնիքը այն անսպառ կորովին ու յարատեւութեան, այն բոլորամատոյց նուիրումին ու զոհաբերութեան՝ որոնցմով շարժում և կեանք է ստացած իմաստնօրէն յղացած գաղափարը երկու պատուական հայորդիներուն: Վասնզի, Հայաստանեայց օծումով իր սրբա-

digitised by A.R.A.R.@

զան կոչումի օրհնութիւնն ընդունած և օտար այլ հիւրընկալ երկնքի մը տակ իր հարազատ դրոշմը զմայլելի իմաստութեամբ մ'արժեցուցած մեծ եկեղեցականը՝ Մխիթար՝ կարողացեր էր Ս. Ղազարի կղզեակին աւանդել իր ամենաթանկագին ժառանգութիւնը, իր ոգին, թաթաւուած ու լուսապսակուած Սիրոյ Կրօնին ներշնչման ամենէն վճիտ ու թափանցիկ ճառագայթումներով:

Մխիթար գիտէր, և իր հոգեզաւակները գիտցան, թէ ինչ բանի կը կարօտէր Ազգը: Մխիթարեան դաստիարակութիւնը դար մ'ամբողջ Մուրատ-Ռափայէլեան սերունդներով տուաւ ապացոյցը այդ պայծառ գիտակցութեան:

Թերին, որ մարդկային է, չի նուազեցներ մեծ արժէքն ու նշանակութիւնն այդ դաստիարակութեան՝ որուն շարժիչ շունչը առաքինական է եղած միշտ: Լաւագոյնին ձգտումը – յառաջդիմութեան բանալին նաեւ այս դաստիարակութեան – մի՞թէ բաւական չէ այսօրուան թերին դարձնելու աստիճանաբար վաղուան լրացածը կամ կատարեալը: Կուռ ու հաւատաւոր գործունէութեան յաջորդական դարերը՝ շնորհուած Աստուծմէ՝ զայդ կ'երաշխաւորեն:

Ի՞նչ է պատմութիւնը. — Բիւրեղացումը ապրուած արժէքներու և կեանքի վերածուած տեսիլներու: Մուրատ-Ռափայէլեան հաստատութեան հարիւրամեայ պատմութիւնը այսպիսիներէն է: Անոր արեւը գեղեցիկ է դեռ իր արշալոյսին մէջ: Պիտի սիրէի նոյն իսկ ըսել թէ տակաւին այգն է իր լոյսին, որպէսզի հարիւրամեան չտայ պատրանքն ալեւորի մը՝ որ կը հակի իր գերեզմանին: Առոյգ է դեռ ան, և դարերու կարելիութիւններով կենսաւորուած: Հայ Ոգին, Սահակներէն և Մեսրոպներէն փոխանցուած ու վերապրած Մխիթարի մէջ, տուած է այս կենսունակութիւնը Մուրատ-Ռափայէլեան պանծալի հիմնարկութեան: Ո՛ր հայ կուրծք պիտի չուռէր արդար, այլ իր արտայայտութեան մէջ զուսպ հպարտութեամբը այս հրաշակերտին:

Իմացական պաշտամունքի ընծայաբերումով և տարիներու ընթացքին միշտ խօսող երախտագիտութեամբ կը խոնարհիմ ես ալ այդ լուսեղէն կոթողին առջեւ, և կը խնդրեմ ի սրտէ Բարձրեալն Աստուծմէ տալ կարողութիւն վաստակաւորներուդ՝ շարունակելու նորոգուած եռանդով, անխոնջ ու հաւատաւոր հոգիով հարիւրամեայ բազմարդիւն աշխատանքները՝ ի փառս Աստուծոյ և ի շինութիւն մեր բազմակարօտ Ազգին, շնորհելով նաեւ վերջինոյս իմաստութիւն՝ արթնութեամբ, խոհականութեամբ և զոհաբերութեան անշահախնդիր յանձնառութեամբ գուրգուրալու Մխիթարեան Բարի Սիրտին և խնամոտ Ձեռքին յանձնուած Մուրատ-Ռափայէլեան յոբելեար այս մեծ հաստատութեան վրայ:

Անխառն սիրոյ և յարգանքի ողջոյններով

Գերյարգելի հայրութեանդ աղօթակից
Գարեգին Եպսկ. Տրապիզոնի

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ
ՌՈՒՄԱՆԻՈՅ

Պուքրէշ, 7 Օգոստոս. 1936

Գեր. Հ. Սրապիոն Վրդ.

Գերապայծառ Աբբահայր

Զբաղումներս թոյլ չեն տար, որ բաղձանքիս համեմատ անձամբ ներկայ ըլլամ դարադարձի հանդիսութեանց: Հաճեցէք ընդունիլ գիրս իբր թարգման խնդակցութեան:

Ազնիւ էր Ձեր մտածումը՝ ազգին մտադրութիւնը հրաւիրելու երկու բարերարներու վրայ: Բայց կը կարծեմ, որ աւելի արդար է երախտագիտական ցոյց մը Մխիթարեան Մեծ. Հայրերուդ, որոնք աշալուրջ ու փորձ տնտեսութեամբ քանքարը ոչ լոկ հարիւրապատկեցիք, այլ կենդանացուցիք, ոգեւորեցիք հարիւրաւոր հայորդիներու նիւթէն բարձր կեանք մը պարգեւելով:

Ու հոս միտքս չի հանգչիր այն աշակերտներուն վրայ, որոնք ազգին մէջ «նշանաւոր» հանդիսացած են: Կը կարծեմ թէ ազգը ոչ նուազ երախտապարտ է այն բազմաթիւ «աննշան» սաներուն համար, որոնք իբր բարոյականի ու հաւատքի, նկարագրի ու կրթութեան տէր ազգայիններ ազգին բեռը բարձած ու պատիւը բարձր պահած են:

Այսպիսիներով հիւսուած պսակը թող միայ անթառամ Մխիթարեան դաստիարակներու վաստակաւոր ճակատին վրայ:

Ցարգալիր բարեմաղթութիւններով և աղօթից միութեամբ ի Տէր,

Գերպ. Տեառնդ
Խ. Ծ.
Հ. Ս. Կոզեան



# ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ,

# ԱԲԲԱՆԵՐ, ԳԵՐՅԱՐԳԵԼԻՆԵՐ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ
Ի ՎԻԵՆՆԱ

Վիեննա, 12 Օգոստոս 1936

Առ Գերպ. Գերյարգելի Հ. Սրապիոն Վ. Ուլուհոճեան
Ընդհ. Աբբայ Մխիթ. Ուխտին – Վենետիկ

Գերապատիւ Գերյարգելի Տէր և Հայր

Մուրատ-Ռափայէլեան վարժարաններու առաջին դարադարձի յոբելենական հանդէսներուն ներկայ գտնուելու պատուաբեր հրաւէրը հաճած էիք ուղղել նուաստիս Ձեր 29 Յուլիս թուակրով: — Շնորհակալ եմ Ձեր փափկանկատ ուշադրութեան: Կը փափաքէի ընտրանի հանդիսականներու երամին խառնուած՝ հոգեկան անկեղծ բերկրանքով մասնակցիլ այդ արտակարգ տօնակատարութիւններուն և ուրախակցիլ արդիւնաշատ Ուխտիդ: Դժբախտաբար սակայն պարագաներն աններող են. հարկադրուած եմ հեռուստ յայտնել ջերմ խնդակցութիւնս և անվերապահ գնահատանքս դարատեւ անցեալին և մատուցանել սրտաբուխ մաղթանքներս աւելի արդիւնաւոր ապագայի մը համար:

Նախանձելի բախտն ունիք տօնելու կրթական գործունէութեան մը հարիւրամեակը, որ անհամեմատ է մեր ազգին կեանքին մէջ իր հազուադէպ տեւողութեամբ և աննման իր արգասիքներով: Այդ հանդէսները, որոնք բարձրաստիճան անձնաւորութիւններու ներկայութեամբ մասնայատուկ դրոշմ մը պիտի կրեն, արժանի պանծացումն են մեծահոգի ու հեռատես զոյգ ազգասէր կտակարարներու օրհնեալ յիշատակին, բայց նոյնչափ և աւելի գնահատանքի փառապսակը պիտի ըլլան Մխիթարեան Ցարկիդ ու անոր յոգնաջան վաստակաւորներու հաւատարիմ կտակակատարի դարաձիգ դերին:

Դար մը ամբողջ վարժարաններուդ ծածկին տակ Մխիթարեան Հայրերու կողմէ – ի՞նչ հարկ կայ թուել անոնց անուններու շարքը – ջամբուեցաւ հայ մանկութեան հոգւոյ, մտքի ու սրտի առողջ սնունդ մը, որ Կրօնի և Ազգի մշտածոր կրկնահոս կենսանիւթերէն համադրուած է: Սնունդ ու սերունդ համապատասխան եղան: Մուրատ-Ռափայէլեան սաները, համահայր ու հոգեկցորդ երկու Մխիթարեան Միաբանութիւններու կողքին – հայութեան արեւմտեան հատածին մէջ մանաւանդ – ազգային վերածնունդին կարեւոր ազդակներ հանդիսացան:

Մեր ազգային կեանքին վերջին հարիւրամեակին ու ներկայիս մէջ ի զուր պիտի որոնուի մարզ մը, ըլլայ այն գրական, կրթական, գեղարուեստական, քաղաքական եւն, ուր Մուրատ-Ռափայէլեաններն ակնառու և պատուաբեր դիրք մը չգրաւեն: Անոնցմէ մէն մին կոչուած է խօսուն յիշատակարան մը ըլլալու բարերարներու և Ուխտիդ: Իցի՜ւ սաները միշտ գիտակցէին իրենց այս նուիրական դերին:

Անցեալ հարիւրակին սրտապնդիչ և պատկառազդու յաջողութիւնը և առոք հունձքը հիացումով դիտելով՝ կը շնորհաւորեմ Միաբանութիւնդ և կը խնդակցիմ: Անցեալն ապառնոյն երաշխիքը կը կրէ իր մէջը: Կը մաղթեմ ի սրտէ որ Նախախնամութեան օրհնութեամբ և օգնութեամբ կրթական Հաստատութիւնդ շարունակէ իր օրհնութիւնաբեր գործունէութիւնը դարէ դար: Ամրապինդ համոզուած եմ թէ Մխիթարայ անզուգական հոգին ու հաստահիմն սկզբունքներն անմահ և անսայլայլ դարերով պիտի ապրին Ցարկիդ տակ և զայն կենդանացնող Միաբաններու սրտին մէջ և այսու ապահովուած կը տեսնեմ վարժարաններուդ ապագան: Տա՛ր Աստուած որ Կրօն ու Ազգ անխտիր օգտուէին աննման բարերարներու Մուրատի և Ռափայէլի անունները պատուով կրող Հաստատութենէդ. այս մեծագոյն երախտագիտական ցոյցը պիտի ըլլար անոնց յիշատակին:

Գերպ. Գերյ. Աբբահայր, երկրորդ հարիւրակի սեմքին օրհնութեամբ յիշելով բարերարներու և կրթական մշակներու խնկելի յիշատակը, կը մաղթեմ որ մեծ նախնեաց հոգեծնունդ հոգեսնունդ Զաւակները նոյն հոգւով, նոյն եռանդով ու նուիրումով փարին անոնցմէ ժառանգութիւն թողուած գործին և գուրգուրան անոնց աւանդին վրայ – ի յամայր ամս, դարուց ի դարս:

Հաճեցէք ընդունիլ, Գերպ. Գերյ. Աբբահայր, շնորհաւորութիւններուս և խնդակցութիւններուս հետ յարգանացս ջերմ հաւաստիքը և եղբայրական ողջոյններս:

Գերպ. Գերյ. Հայրութեանդ

Աղօթակից
Հ. Մեսրոպ Վ. Հապոզեան
Ընդհր. Աբբայ Մխիթ. Միաբանութեան – Վիեննայ

digitised by A.R.A.R.@

CURIA GENERALIS FF. MINORUM CAPUCCINORUM
VIA BONCOMPAGNI, 71
ROMA (125)

*Roma,* 10 *Agosto* 1936

Rev.mo Padre Serapione Uluhogian
Abate Generale della Congr. Mechitarista - S. Lazzaro - Venezia

*Rev.mo Padre Abate,*

Mi unisco ben volentieri alla P. V. Rev.ma e alla Congregazione Mechitarista nella celebrazione della prima ricorrenza centenaria della fondazione dei due Istituti Armeni «Moorat» e «Raphaël».

L'opera provvidenziale esercitata dai due Istituti ben merita il plauso di quanti hanno a cuore la causa del grande popolo Armeno e la continuata diffusione di quella civiltà che, come Ella, Rev.mo Padre, ben dice, per mezzo dei due Collegi, ha dato «alla Chiesa figli devoti, alla Patria cittadini leali, all'umanità sapienti e valenti scienziati».

Facendo poi voti che il nobile proposito, espresso dalla P. V. Rev.ma, di continuare cioè con lena ognora infaticata l'opera intrapresa, abbia ad avere il più sicuro e lusinghiero successo, prego su di Lei, Rev.mo Padre, sulla Congr. Mechitarista e sui due benemeriti Collegi «Moorat» e «Raphaël», la copia delle divine benedizioni.

Con distinto ossequio, mi raffermo
Della P. V. Rev.ma

dev.mo nel Signore
Fr. Lazzaro de Arbonne
Proc. e Com.rio Genle

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ
ՎԵՂԱՐԱՒՈՐԱՑ ԿԱՐԳԻՆ
ՀՌՈՄ

*Հռոմ*, 10 *Օգոստոս* 1936

Գեր. Հ. Սրապիոն Ուլուհոճեան
Ընդ. Աբբայ Մխիթ. Միաբանութեան - Ս. Ղազար, Վենետիկ

*Գերապատիւ Աբբահայր*

Սիրայօժար կը միանամ Ձեր Գերպ. Հայրութեանը և Մխիթարեան Միաբանութեանդ հետ,
տօնախմբելու համար Մուրատ և Ռափայէլ, երկու հայկական հաստատութեանց առաջին հա-
րիւրամեայ տարեդարձը:

Երկու հաստատութիւններէն կատարուած նախախնամական գործը, մեծապէս արժանի է
դրուատիքին այն ամենուն՝ որոնց սրտին մօտիկ է Հայ մեծ ժողովրդեան դատը և քաղաքա-
կրթութեան այն յարատեւ ծաւալը որ՝ ինչպէս դուք, Գերպ. Հայր, իրաւամբ կ'ըսէք, երկու
դպրոցներուն միջոցաւ տուաւ «Եկեղեցւոյ բարեպաշտ զաւակներ, Հայրենիքին՝ ուղղամիտ քաղա-
քացիներ, մարդկութեան՝ իմաստուն և քաջ գիտնականներ»:

Մաղթելով որ՝ Ձեր Գերպ. Հայրութենէն արտայայտուած ազնուական առաջադրութիւնը,
շարունակելու միշտ անխոնջ կորովով ձեռնարկուած գործը ունենայ ամենապահով և հրապուրիչ
յաջողութիւն, կը հայցեմ Ձեր վրայ, Գերապատիւ Հայր, ինչպէս նաեւ Մխիթարեան Միաբա-
նութեան և «Մուրատ - Ռափայէլ» երկու արդիւնաւոր վաժարաններուն վրայ, Աստուածային օրհ-
նութեանց առատութիւնը:

Խորին յարգանաց հաւաստեօք

Ձերդ Գերապատիւ Հայրութեան
անձնուէր ի Տէր
Եղ. Ղազարոս տէ Արպոն
Գործակալ և Տեղապահ Ընդհ. Մեծաւորի



ՎԱՆՔ ՓՈԽՄԱՆ Ս. ԿՈՒՍԻՆ

20, *Օգոստոս* 1936

Առ Գերյարգելի Տէր, Հայր Սրապիոն Հ. Վ. Ուլուհոճեան
Ընդհանրական Աբբայ Մխիթարեան Միաբանութեան - Վենետիկ

*Գերյարգելի Տէր*

Մեծ հաճոյքով կարդացի Ձեր Գերյ. Տէրութեան պատուական հրաւիրագիրը որով բարե-
հաճեցաք ծանուցանել մեզի Մուրատ - Ռափայէլեան Վարժարաններուն առաջին հարիւրամեակին
ամսոյս 16ին կատարուելիք յոբելինական հանդիսաւոր տօնախմբութիւնը և կը հրաւիրէք զմեզ
մասնակցելու այդ շքեղ նշանաւոր հանդէսին,

Ամէնէն առաջ Ձեր ներողամտութիւնը կը խնդրեմ որ Ձեր պատուականին ուշ հասնելուն
համար՝ ուշ կը պատասխանեմ:

Յետոյ կը խնդրեմ որ բարեհաճիք այս առթիւ ընդունիլ մեր Միաբանութեան և յատկապէս
իմ՝ խորին շնորհակալութիւններս լաւագոյն բարեմաղթանքներով Ձեր յարգելի Ուխտին, Ձեր
բոլոր վարժարաններուն ու շինարար ձեռնարկներուն:

Ինչպէս որ Ձեր գրութեան մէջ կը յիշէք, յիրաւի մեզի քաջածանօթ են ու մեր սրտին շատ մօտիկ՝
դարու մը Ձեր կրթական-կրօնական գնահատելի գործունէութիւնը, համբերատար աշխատանքով
և անհամար զոհողութիւններով: Ուրախ եմ հաւաստելու որ այս Ձեր գործունէութիւնը արդիւ-
նաւոր դեր կատարած է Հայ Եկեղեցւոյ և մեր ազգային կրօնական բարոյական ու կրթական մշա-
կոյթին՝ հաւատարմաբար հետեւելով Երանաշնորհ Հիմնադրին՝ մեծին Մխիթարայ ուղղութեան և
իտէալին:

Այս վերոյիշեալ յաջողութիւնները, Ձեր գեղեցիկ յայտագիրը և Ձեր ու մեր Միաբանու-
թեան միջեւ սերտ ու եղբայրական դարաւոր յարաբերութիւնները՝ մէկ մէկ պատճառներ էին որ
մեր միաբանութենէն ներկայացուցիչ մը ուղղակի մասնակցէր երեւելի հանդէսին. սակայն դըժ-
բաղդաբար Ձեր գրութեան ուշ հասնիլը և ներկայ պարագաներու աննպաստութիւնը չթոյլա-
տրեցին զայն, բայց ապահով եղէք որ միտքով ու սրտով հոն ներկայ էինք մասնակցելով Ձեր
ուրախութեան և մաղթելով Ձեր յարգելի միաբանութեան, միաբաններուն և բոլոր ձեռնարկնե-
րուն պտղաբեր կենսունակութիւն, ամէն յաջողութիւն, աստուածային օրհնութիւն ու երկնային
մխիթարութիւն, յօգուտ հոգեւոր ու ժամանակաւոր՝ տառապեալ Ազգիս, ի պայծառութիւն Հայ
Եկեղեցւոյ և նուիրապետութեան և ի հրճուանս Հոգւոյ Մեծին Մխիթարայ, որուն երանացման
համար լաւագոյն բարեմաղթանքներ կ'ընենք:

Հայցելով Ձեր Ս. աղօթից օժանդակութիւնը, մնամ Եղբայրական սիրոյ և յարգանաց հա-
ւաստեօք,

Գերյարգելի Տէրութեանդ
Խ. Ծ.
Ներսէս Ծ. Վ. Թայրոյեան
Մեծաւոր Վանացն Զմմառու

*Zurigo,* 14 *agosto* 1936

Al Rev.mo ed Illustrissimo Padre Serapione Uluhogian
Abate Generale della Congr. Mechitarista - Venezia

*Rev.mo, Illustrissimo Padre Abate Generale*

Gradisca Vostra Paternità Rev.ma i più sentiti ringraziamenti della pregiatissima lettera in data del 1° Agosto, colla quale Ella ha voluto darmi avviso delle prossime feste centenarie del benemerito doppio Istituto Moorat-Raphaël e mandarmi gentilissimo invito di prendere parte alla solennità. Gratissimo di tanta gentilezza mi rincresce molto che la mia malferma salute non permette di venire a Venezia e che perciò debbo pregarLa di voler benignamente scusarmi.

Sarebbe stato per me un onore ed un vero piacere di festeggiare coi venerati Padri un tanto importante centenario. Apprezzo altamente i grandi meriti dei due Collegi per la Santa Chiesa e per la nobile Nazione Armena. Mi unisco di cuore a tutti, i quali dopo domani ringraziano Iddio di tanta benedizione e supplico il Signore di moltiplicare le sue grazie, affinchè - non ostante le sciagure dei tempi attuali - i due Istituti possano continuare per secoli il loro lavoro tanto

digitised by A.R.A.R.@

benefico per la gloria di Dio ed il continuo progresso della nazione. Questo mio voto sarà deposto con fervida preghiera sull'altare.

Coi sensi di rispettoso ossequio ho l'onore di confermarmi di Vostra Paternità Rev.ma ed Ill.ma dev.mo servitore

† Fedele di Stotzingen
Abate Primate O. S. B.

Ցիւրիխ, 14 Օգոս. 1936

Առ Գերյարգելի և Գերապայծառ Հ. Սրապիոն Ուլուհօճեան
Ընդհ. Աբբայ Մխիթ. Միաբանութեան – Վենետիկ

Թող Ձեր Գերապայծառ հայրութիւնը հաճի ընդունիլ սրտագին շնորհակալութիւններս 1 Օգ. թուակիր թանկագին նամակին համար, որով ուզեցիք ինծի տեղեկացնել Մ. Ռ. զոյգ բազմերախտ հաստատութեանց մերձաւոր տօներուն համար և ղրկեցիք ինծի մասնակցութեան ազնիւ հրաւէրը։ Շնորհակալ իմ Ձեր ազնուութեան. կը ցաւիմ որ առողջութիւնս չի ներեր Վենետիկ գալ, և անոր համար է որ պարտք կը զգամ խնդրել որ բարի ըլլաք ներողամիտ գտնուիլ ինծի հանդէպ։

Ինծի համար պատիւ և մեծ հաճոյք պիտի ըլլար տօնել Պատուական Հայրերուդ հետ այսպիսի կարեւոր հարիւրամեակ մը։ Մեծապէս կը գնահատեմ երկու վարժարաններուն մեծ արժանիքները հանդէպ Ս. Եկեղեցւոյ և հանդէպ ազնիւ Հայ Ազգին։ Սրտով կը միանամ ամէնուն հետ՝ որոնք վաղը չէ միւս օր Աստուծոյ շնորհակալ պիտի ըլլան այնքան օրհնութեանց համար և կը խնդրեմ Աստուծմէ իր շնորհքները բազմապատկել որպէս զի հակառակ ներկայ ժամանակներու աղէտներուն՝ երկու վարժարանները կարենան դարեր շարունակել իրենց այնքան բարերար գործունէութիւնը Աստուծոյ փառաց և Ազգին յարատեւ յառաջդիմութեան համար։ Այս իմ իղձերս ջերմ աղօթքներով պիտի դրուին Ս. Սեղանին վրայ։

Խորին յարգանաց հաւաստեօք պատիւն ունիմ զիս գրելու Գերապատիւ և Գերապայծառ Հայրութեանդ անձնուէր ծառայ

† Ֆետէլէ տը Սդոցինկըն
Գահերէց Աբբայ Բենեդիկտեան կարգին

BENEDETTINI DI MONTOLIVETO

*Roma, 5 agosto* 1936

Eccellentissimo Abate Generale dei PP. Mechitaristi
Abate Serapione Uluhogian ecc.

Mi sento molto onorato di ricevere la sua graditissima lettera e il suo gentilissimo invito di partecipare alle solennità del 16 Agosto, che si celebreranno in occasione del centenario della fondazione dei benemeriti Istituti Moorat-Raphaël. La fausta ricorrenza merita di essere ricordata e celebrata, sia per il grande bene già fatto in questo primo centenario, sia per riconoscenza ai nobili fondatori, sia ancora per dare vita ad un altro centenario di nuove benemerenze. Ed io faccio plauso alle celebrazioni e a tutti i monaci Mechitaristi che sono stati, sono e saranno sempre la più fulgida luce dell'Armenia.

Mi trovo però nella impossibilità di intervenire personalmente, come sarebbe mio vivissimo desiderio, alle feste. La ricorrenza dell'Assunta e poi subito la festa del B. Bernardo Tolomei, nostro fondatore, giorni in qui devo essere quì, me lo impediscono. Ma intendo di essere considerato presente con tutto lo spirito.

Voglia gradire i miei più vivi auguri per V. E. e per tutta la venerata e benemerita Congregazione Mechitarista, mentre godo confermarmi con sincera devozione di V. E.

dev.mo e aff.mo
† Placido Lugano
Ab. proc. Gen. Oliv. O. S. B.



ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆՔ
ՄՈՆԴՕԼԻՒԵԴՈՅԻ

Հռոմ, 5 Օգոս. 1936

Գերապայծառ Ընդհանրական Աբբահայր Մխիթարեանց
Հ. Սրապիոն վրդ. Ուլուհօճեան ևն.

Ինքզինքս շատ պատուուած կը զգամ ընդունելով Ձեր հաճելի նամակն ու ազնիւ հրաւէրը մասնակցելու 16 Օգոստոսի հանդէսներուն, որ պիտի կատարուին հոս «Մուրատ – Ռափայէլեան» բազմարդիւն վարժարաններու հարիւրամեայ հիմնարկութեան առթիւ։ Բարեպատեհ դարադարձը արժանի է յիշուելու և տօնամբուելու՝ ըլլայ այս առաջին հարիւրամեակին մէջ ըրած մեծ բարիքին համար, ըլլայ իբր երախտագիտութիւն ազնուասիրտ հիմնադիրներուն հանդէպ, ըլլայ նաեւ ուրիշ նոր արդիւնաբերութեանց հարիւրամեակի մը ծայր տալու համար։ Եւ ես կը դրուատեմ տօնախմբութիւններն ու բոլոր Մխիթարեան միաբանները՝ որ եղած են, են և միշտ պիտի ըլլան Հայաստանի ամենապայծառ լոյսը։

Սակայն անկարողութեան մէջ կը գտնուիմ՝ հանդէսներուն անձնապէս ներկայ գտնուելու, ինչ որ իմ ջերմ փափագս պիտի ըլլար։ Վերափոխման տօնին հանդէսը և յետոյ մեր Հիմնադրին Եր. Բեռնարդոս Դոլոմէիի տօնը որոնց պէտք եմ հոս ներկայ գտնուիլ՝ զիս կը խափանեն։ Բայց կը ցանկամ նկատուիլ իբրեւ ներկայ բոլոր հոգւովս։

Հաճեցէք ընդունիլ իմ սրտագին մաղթանքներս Գերապայծառութեանդ և բոլոր պատուական ու արդիւնաւոր Մխիթարեան Միաբանութեանդ, մինչ ուրախ եմ զիս հաստատելու

Գեր. Հայրութեանդ Անձնուէր սիրող
Տէր Բլաչիտոս Լուկանոյ
Աբբայ և Ընդհ. Գործ. Ուլիւ. Բենեդ. կարգին

SOCIÉTÉ
des
MISSIONNAIRES D'AFRIQUE
(PÈRES BLANCS)

*Fiuggi – Città,* 15 VIII 1936

Rev.mo P. Serapione Uluhogian
Abate Generale della Congr. Mechitarista – Venezia

*Rev.mo Padre*

La sua onoratissima lettera è venuta trovarmi a Fiuggi dove mi trovo da 10 giorni. Sono venuto riacquistare forze in mezzo ai boschi freschissimi che sono la belleza di questo luogo di cura. Luglio mi aveva molto stancato.

La ringrazio tanto dell'invito tanto delicato che Vostra Reverenza mi fa di venire partecipare alle feste del Collegio. Non posso che unirmi alla cara Comunità che col solo pensiero. Lo faccio di tutto cuore. Meglio di tanti altri ho potuto apprezzare l'opera benefica del suo Istituto e del Collegio trovandomi fra i membri della Comunità Mechitarista come un fratello ricevendo da tutti segni e prove di affetto che non potrò mai dimenticare.

Domando a Nostro Signore alla fine del secolo già passato di benedire ed ampliare l'opera benefica di quel Collegio che ha tanto fatto pel bene della nazione Armena, la nazione martire ma sempre viva e piena di energia.

I giornali mi dicono tutte le personalità che sono venute a Venezia all'occasione di questa solennità. Anche l'E.mo Cardinale Tisserant è venuto portar la benedizione del S. Padre. Dio sia lodato di tutto.

Gradisca, Rev.mo Padre, le mie umilissime ma sincerissime felicitazioni per il successo di queste feste.

Di tutto cuore e con grande affetto ed ossequio rimango sempre di Vostra Paternita Rev.ma l'umile servo in N. S.

A. Delpuch

digitised by A.R.A.R.@

# ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ,
# ՆԱԽԿԻՆ ՍԱՆԵՐ, ԲԱՐԵԿԱՄՆԵՐ, ԵՒՆ.

ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼԵԱՆ
ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ

Բարիզ, 1 Սեպտեմբեր 1936

Գերապատիւ Հայր Սրապիոն Վարդապետ Ուլուհոճեան
Ընդհանրական Աբբայ Մխիթարեան Միաբանութեան – Վենետիկ

Գերապատիւ Տէր,

Բարիզ վերադարձած և տակաւին դիւթական տպաւորութեանը ներքեւ այն փառաւոր և ան-
մոռանալի հանդիսութեանց, որոնց մասնակից ըլլալու բաղդն ունեցանք, մեր միտքերն ու հոգի-
ները բնազդաբար կը սաւառնին դէպ ի Ս. Ղազար, ուր անոնցմէ մաս մը թողուցինք:
Այն հայրախնամ և սիրալիր ընդունելութիւնն ու պատուասիրութիւնը որոնց առարկայ եղաւ
Միութեանս պատուիրակութիւնը Յոբելինական հանդիսութեանց ընթացքին, խորապէս ազդեցին
մեր սրտերուն վրայ և դժուարաւ պիտի գտնենք բառեր արտայայտուելու համար անոնց բարո-
յական մեծ արժէքին վրայ՝ եթէ ոչ ըսելով թէ անոնք իսկապէս Մխիթարեան էին:
Պատուիրակութիւնս կը խնդրէ Ձերդ Գերապատուութենէն և Անոր միջոցաւ Յարգոյ Միա-
բանութեանդ բոլոր Վերապատուելի Հայրերէն որ հաճիք ընդունիլ իր որդիական սիրոյ և յար-
գանաց անկեղծ հաւաստիքը, ինչպէս նաեւ իր ջերմագին շնորհակալութիւնները այն գուրգու-
րալից հոգածութեան համար որով պատուեցիք զինքը:
Հանդիսութեանց ներկայ եղող ազգայիններու շատերուն ուշադրութիւնէն չվրիպեցաւ մեր
երկու մեծ ընտանիքներուն իրարու հանդէպ ունեցած վերաբերումը՝ որուն մէջ անոնք տեսան
բարոյական ոյժ մը և գնահատեցին զայն:
Պէտք է հաւատանք որ Մխիթարի, Մուրատի և Ռափայէլի հոգիները հրճուեցան ի տես իրենց
որդիներուն արտայայտած սիրոյ և երախտագիտութեան զգացումներուն: Զգադրեցնենք հանդիսու-
թեանց հետ այդ զգացումներուն շարունակութիւնը մեր սիրտերուն մէջ, այլ վառ պահենք միշտ
և եռանդով ու հաւատքով անդադար աշխատինք դրական մեծ արդիւնքներ ձեռք բերելու համար:
Մխիթար – Մուրատ – Ռափայէլ անբաժան երրորդութեան՝ կրօնական և աշխարհիկ միացեալ
անբաժան զաւակներ մնանք միշտ. կազմենք ազգին մէջ ո՛չ թէ կուսակցութիւն մը, այլ նահա-
պետական մեծ ընտանիք մը – Մխիթարի, Մուրատի և Ռափայէլի շառաւիղներով շաղկապուած
ընտանիք մը – որ ըլլայ օրինակ և պարծանք համայն հայութեան: Վանենք մեր սիրտերէն ան-
համաձայնութեան և անհասկացողութեան վնասակար ոգին և անոնց տեղ դնենք անկեղծութիւնը. և
նշանաբան առնելով «սէր, միութիւն և անաղմուկ գործունէութիւն» աշխատինք և գործենք միշտ
ձեռք ձեռքի:– Այսպէս միայն իրագործուած կ'ըլլայ հարիւրամեայ հանդիսութեանց բուն նպատակը:
Գործունէութեան դար մը ապրեցանք. անոր ընթացքին ունեցանք երջանիկ ու տխուր օրեր:
Այժմ, նոր դարաշրջանի մը սեմին վրայ կը գտնուինք նիւթական խիստ համեստ բայց պայծառ
դրութեան մը, ինչպէս նաեւ փորձառութեան մեծ պաշարի մը հետ դէմ առ դէմ: Իրաւունք չու-
նինք անզիտակցաբար գործելու:– Առաջ ընթանանք ուրեմն անվեհեր՝ ապագային վրայ յոյս և
հաւատք ունենալով, բայց ուխտելով Մխիթարի, Մուրատի և Ռափայէլի յիշատակներուն առջեւ
որ մեզմէ իւրաքանչիւրը պիտի ստանձնէ իրեն յանձնուած դերին ամբողջ գիտակցութիւնն և պա-
տասխանատուութիւնը:
Մեզմէ ոչ մէկը ներկայ չպիտի ըլլայ բարերարներուն կանգնած հաստատութեանց երկրորդ
հարիւրամեակի հանդէսներուն: Այդ երջանիկ օրուան ներկայ գտնուողները, մեր անմահ բարե-
րարներուն յիշատակին հետ պիտի օրհնեն նաեւ մեր և մեր յաջորդներուն ալ յիշատակները, եթէ
արժանի դառնին զմեզ:
Կը խնդրենք, Գերապատիւ Տէր, որ հաճիք ընդունիլ և հաղորդել Յարգոյ Միաբանութեանդ
բոլոր Վերապատուելի Հայրերուն, պատուիրակութեանս և իմ անձնական կրկին շնորհակալու-
թիւնները, ինչպէս նաեւ մեր որդիական սիրոյ և յարգանաց ամենանկեղծ հաւաստիքը.

Ի դիմաց Միութեանս Պատուիրակութեան
Ա. Ալթունեան



ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼԵԱՆ
ՆԱԽԿԻՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՄԻՈՒԹԻՒՆ

Բարիզ, 3 Սեպտեմբեր 1936

Պատուարժան Կարգադիր Յանձնախումբ Մուրատ-Ռափայէլեան Վարժարաններու
Հարիւրամեայ Տօնախմբութեանց – Վենետիկ

Վերապատուելի Հարք

Շնորհիւ Պատուարժան Յանձնախումբիդ ջանքերուն, զոհողութեանց և տքնաջան աշխատու-
թեան, Մուրատ-Ռափայէլեան հաստատութեանց հարիւրամեակի հանդէսները՝ Վենետկոյ մէջ այն-
քան փառաւոր և արժանավայել կերպով սկսելէ և նոյն կերպով Ասոլոյի մէջ փակուելէ յետոյ,
Միութեանս Պատուիրակութիւնը Օգոստոս 23ի գիշերը հազիւ միջոց մը կրցաւ գտնել Ձեզմէ հրա-
ժեշտ առնելու, առանց սակայն պատշաճօրէն կարենալ արտայայտուելու և իր շնորհակալութիւն-
ները յայտնելու:
Արդէն այդ յաւէտ պատմական գիշերը, Ասոլոյի բարձունքին վրայ իրարմէ բաժնուելու պա-
հուն, այնչափ յուզուած էինք, որ մեր սիրտերը միայն կը խօսէին, Դուք, մեր սիրելի դաստիա-
րակներդ, որ զանոնք կերտած էք մեծ չափով, անշուշտ զգացիք նաեւ անոնց փղձկումները:
Պիտի խնդրենք այժմ Պատուարժան Յանձնախումբիդ վերապատուելի Հայրերէն որ հաճիք
ընդունիլ պատուիրակութեանս ամենախորին և անկեղծ շնորհակալութիւնները և երախտագիտա-
կան զգացումները՝ իրեն հանդէպ ցոյց տրուած բացառիկ պատուասիրութեան և հոգածութեան
համար հանդիսութեանց ընթացքին:
Անմոռանալի յիշատակներով և երախտագիտական զգացումներով բեռնաւորուած վերադար-
ձանք Բարիզ և վստահ ենք որ բնաւ տարակուսելու պատճառ մը չունիք թէ անոնք ապերախտ
սրտերու մէջ չեն քանդակուած:
Սուրբ Ղազարի մէջ կատարուած կրօնական արարողութիւններն և ընդունելութիւնները, Վար-
ժարանին հանդէսները, Վենետկոյ և յատկապէս Ասոլոյի ժողովուրդին Հայոց հանդէպ ցոյց տուած
համակրական վերաբերումը և պաշտօնական ընդունելութիւնը, խոր տպաւորութիւն գործեցին
ներկայ եղող ազգայիններուն վրայ՝ որոնք իրենք զիրենք երջանիկ և հպարտ զգացին այդ տաքուկ
և անկեղծ մթնոլորտին մէջ: Անոնց ամէնուն մէջ կամայ ակամայ ծնունդ առաւ յարգանքի և
երախտագիտութեան զգացում հանդէպ Մխիթարեան Միաբանութեան և Մուրատ-Ռափայէլեան
հաստատութիւններուն:
Մուրատ-Ռափայէլեան Վարժարաններու հարիւրամեայ Յոբելեանը ազգային պատմական և
անմոռանալի հանդէս մը եղաւ, իր տեսակին մէջ միակը և մինչեւ այսօր կատարուածներուն ա-
մէնէն յաջողը և նշանակալիցը, բազմապիսի տեսակէտներով. ի՛նչ փոյթ թէ գտնուին հակառակը
պնդող նախանձորդներ: Պատուիրակութեանս անդամները և իրեն ընկերացող ուխտագնաց ազգային-
ներու բազմութիւնը վկաներ են միաբերան գոչելու. կեցցէ՛ հարիւրամեայ Տօնակատարութեանց
կարգադիր Յանձնախումբը. կեցցե՛ն Վեր. Հայրեր Քերովբէ, Եղիա և Սիմոն Վարդապետները.

Կրկնելով մեր շնորհակալութիւնները և շնորհաւորութիւնները, կը խնդրենք, Վերապատուելի
և Սիրելի Հայրեր, որ հաճիք ընդունիլ պատուիրակութեանս երախտագիտական անկեղծ զգացում-
ներուն հաւաստիքը:

Խորին յարգանօք
Ի դիմաց Միութեանս Պատուիրակութեան
Ա. Ալթունեան

digitised by A.R.A.R.@

Պուքրէշ, 13 Օգոստոս 1936

Գեր. Տէր, Հ. Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան
Ընդհ. Աբբահայր Մխիթ. Ուխտին,
Վերապատուեալ Մխիթարեան Հայրեր, Մեծարգոյ Տեսուչ Վրդ.
Մուրատ-Ռափայէլեան Վարժարանին – Վենետիկ

Այս կիրակի Օգոստոս 16ին կը տօնախմբուի մեր սիրելի և փառապանծ Վարժարանին Հարիւրամեակը: Դա պատմական նշանակութիւն ունեցող մեծ եղելութիւն մ'է բոլոր Հայ ժողովրդեան համար, բաց աստի մեզի համար՝ Ձեր հին ու նոր երախտապարտ սաներուն՝ ամփոփման և խորհրդածութեան հանդիսաւոր ժամ մը. ժամ մը վերյիշելու համար յիսուն տարիէն աւելի հին անցեալ մը՝ զոր ապրեցանք մենք իրարու ետեւէն յաջորդաբար այդ սրբազան որմերուն մէջ. ժամ մը նաեւ զմայլելու համար այն իմաստուն, ամրապինդ և գերազանց գործին վրայ զոր Դուք, ո՜վ սիրեցեալ և անմրցելի ներկայ ու բացակայ մեր դաստիարակ վարդապետներ, ամբողջ դար մը գերազանց բարութեամբ և անձնուրացութեամբ, կատարեալ անշահախնդրութեամբ և բազմատեսակ զոհողութիւններով կատարեցիք այդ Հաւատքի և Լոյսի տաճարին մէջ:

Ստոյգ է, այդ երկայն ու դժուարին ճամբուն վրայ միշտ չհանդիպեցաք երախտագիտական խօսքերու, սրտապնդիչ և քաջալերական գործերու, այլ ընդհակառակն և շատ անգամ նեղութեանց և յուսախաբութիւններու, բայց ոչ մէկ բան զձեզ չվհատեցուց, ու դուք շարունակեցիք մեծագոյն խանդով և եռանդով ձեր կրկնակի սրբազան առաքելութիւնը՝ ծառայելու Աստուծոյ և մարտիրոս Հայ հայրենիքին, ճառագայթելով մեր միջոցով Ձեր սրբազան պատուէրները հաւատքի և լոյսը արեւմտեան բարձր և ազնուական քաղաքակրթութեան, հանդերձ սրբազան հուրովը և անթառամ սիրովը գեղեցիկն Իտալիոյ:

Մեծապէս ցաւելով որ այս հանդիսաւոր օրերուն ձեր քովը չենք՝ լսելու համար ձեզի բարձրաձայն այս բոլորը և արտայայտելու համար ձեզի բոլոր մեր սէրն ու նուիրումը՝ զոր կը տածենք Ձեզի հանդէպ, ո՜վ երախտաւոր և սիրեցեալ Հայրեր, ձեզի կը ղրկենք այս քոյր երկրէն՝ Ռումանիայէն՝ մեր կենդանի յաւերժ երախտագիտութեան և անթառամ յարգանքի տուրքը, առ Բարձրեալն Աստուած ուղղելով ամենաջերմ խնդրուածք մը սիրելի հոգիներուն համար հանգուցեալ մեր Բարերարներուն և մեր դաստիարակ Մխիթարեան վարդապետներուն և բոլոր Ուսուցիչներուն՝ դիւցազն զաւակներ սիրելի և սրբազան իտալական երկրին և մարտիրոս Հայաստանի:

Հանգիստ ձեզի, ո՜վ ցանկալի հոգիներ:

Ձեզի կը մաղթենք, դարձեալ, սիրեցեալ վերապատուելի Հայրեր, որ այս տօնախմբութեան յիշատակը դառնայ ձեզի համար անսպառ աղբիւր մը ուրախութեան, խրախոյսի և ամենամեծ ուրախութեան. ու կը խնդրենք Աստուծմէ որ իր ողորմութեամբ բարեհաճի դեռ դարեր ու դարեր պահպանել և միշտ աւելի զուարթածաղիկ՝ մեծին Մխիթարայ գործը՝ Մխիթարեան Միաբանութիւնը՝ մեր սիրելի ու փառապանծ Մուրատ-Ռափայէլեան Վարժարաններուն հետ միասին:

Երախտապարտ Նախկին Սաներ Մուրատ-Ռափայէլեան և Մուրատեան Վարժարաններու

| | | | |
|---|---|---|---|
| Կ. Ա. Գալճի Սիրունեան | Կարպիս Ն. Առաքելեան | Նուրհան Աղլամիշեան | Արշաւիր Կլորիկեան |
| | Յակոբ Ադամեան | Հրայր Ասլանեան | Հ. Կանաչեան |
| | Թադէոս Կապուտիկեան | Գուրգէն Ներսէսեան | Պերճ Ցոփանեան |

ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

29 Մայիս 1936

Գերպ. Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան
Ընդհ. Աբբահայր Մխիթ. Միաբանութեան – Վենետիկ

Արժիապատիւ Գերապայծառ Տէր

Մուրատ-Ռափայէլեան Վարժարաններու հարիւրամեայ Յոբելեանին առթիւ, սիրոյ և երախտագիտութեան ջերմ զգացումներով տոգորուած, փափաքեցանք մեր գործօն մասնակցութիւնը բերել կազմակերպելով թատերական համեստ ցերեկոյթ մը, մեր ծնողներու և բարեկամներու մտերիմ շրջանակին մէջ, ումէ գոյացած շուրջ հազարհինգհարիւր ֆրանքի գումարը, իբրեւ մեր չնչին լուման՝ կը նուիրենք լի երախտագիտական զգացումներով, պանծացնելու հարիւր տարուան քրտնաջան և բեղուն աշխատանքը մեր անմահ բարերարներուն Մխիթարայ, Մուրատի և Ռափայէլի, որոնց շնորհիւ այնքան մեծ մտաւորականներ ու սերունդներ դարբնուեցան ազգային հոգիով ու նկարագրով:

Գերապայծառ Տէր, Մուրատեան Վարժարանի աշակերտութիւնը այս փոքրիկ նուէրին հետ այժմէն կը մասնակցի այն օրուան խանդավառութեան, որուն Դուք իբրեւ Գլուխ և Նախագահ պիտի բազմիք, Դուք որ այնքան մօտէն ծանօթ էք մեր երիտասարդ սրտերու զգացումներուն,



կը խնդրենք որ հաճիք ընդունիլ մեր ջերմագին երախտագիտութեան և որդիական սիրոյ զգացումները Ձեզ և բովանդակ Մխիթարեան Միաբանութեան Հայրերուն որոնք այնքան վեհանձնութեամբ ինքզինքնին ու իրենց հոգեկան անգին կարողութիւնները կը զոհեն Հայ ազգին պատրաստելու համար գիտակից և մտաւորական սերունդներ:

Որդիական խորին յարգանօք համբուրելով Ձեր սուրբ Աջը և խնդրելով Ձեր հայրական օրհնութիւնը ամենուս վրայ,

ի դիմաց Սամուէլ Մուրատեան
Վարժարանի Աշակերտութեան
Արամ Շէխիկեան

ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ
(ՌՈՒՄԱՆԻՈՅ)

Պուքրէշ, 12 Օգոստոս 1936

Մուրատ-Ռափայէլեան Հարիւրամեակի Տօներու Կարգադիր Յանձնախումբին

Գերաշնորհ Հայրեր,

Հայ Մշակութային հիմնարկութիւնը իր մեծարանքի տուրքը կը բերէ այսօր դարադարձի մը առթիւ, որ կը խորհրդանշէ ինքն իսկ ամբողջ դարու մը հայ մտքի ճիգը, Մուրատ-Ռափայէլեան զոյգ կրթարանները հանդիսացած ըլլալով, ամբողջ դար մը, զոյգ մը վառարան, ուր Մխիթարի օճախէն անընդհատ եկան կայծերը թափիլ և ուրկէ հաղորդուելու եկան յաջորդական այնքան սերունդներ հայ շունչով թրծուելու և երթալ թթխմոր դառնալու համար հայ կեանքին մէջ:

Արդար են ուրեմն մեծարանքի ցոյցերը, զորս հայ ժողովուրդը ինքնաբուխ յուզումով մը կը բերէ այսօրուան տօնին, անոր մէջ գտնելով առիթը երախտագիտութեան խորունկ զգացումի մը ոչ միայն դէպի երկու բարերարները, որոնք իրենց անկորնչելի փառքը կերտած են վաղուց հայ ժողովուրդի հոգիին մէջ, այլ նաեւ դէպի այն փարոսը զոր ստեղծեց Մխիթար, որպէսզի ճամբան ցուցնէ ուղեկորոյս ժողովուրդի մը:

Հայ Մշակութային Հիմնարկութիւնը, հիմնուած ռումէն հողի վրայ, իր համեստ ուժերը ընծայելու համար հայ մշակոյթի ծաղկման, չէր կրնար չմասնակցիլ մեծարանքի այս ցոյցերուն, մանաւանդ այն հոգեկան կապին համար որ մեր գաղութը կը միացնէ Մխիթարայ Տան ու անոր գործունէութեան ամէնէն համակրելի արտայայտութիւններէն մէկուն որ Մուրատ-Ռափայէլեան կրթական յարկն է:

Անոր համար այս հոգեկան կապը, որովհետեւ Ռումանահայ Գաղութը, – այս բառը ըմբռնելով Ռումանիոյ ներկայ սահմաններուն մէջ ամփոփուած Հայութեան իմաստով –, առաջին իսկ օրերէն շփում ունեցած է Մխիթարայ Տան հետ, ըլլա՛յ դպրոցներուն այն ցանցով, զոր տարածեցին Մխիթարեանք ԺԸ դարուն Արտէալի մէջ, ըլլա՛յ այն կարկառուն դէմքերով զոր այս գաղութը ինքն իսկ հայթայթած է Մխիթարեան զոյգ յարկերուն իբր աբբահայր ու միաբան, ըլլայ այն տքնաջան երկերով զորս Մխիթարեան Հայրեր նուիրեցին այս գաղութին անցեալը լուսաբանելու և ըլլայ այն բերքով զոր քաղած է ռումանահայութիւնը Մուրատ-Ռափայէլեան զոյգ կրթարաններէն, և որուն մէջ կաղնիի պէս կը ցցուի ազնուական դէմքը Գրիգոր Պըլըզլուի, այն մեծ ռումանահայուն, որուն հոգին՝ Մխիթարեանց շունչին տակ թրծուած՝ անխախտ մնաց մինչեւ իսկ վճռաբեկ ատեանի աթոռին վրայ:

Մաղթելով որ դեռ երկար ապրի Մխիթարի կտակած շունչը ու դեռ երկար վարակէ հայ մատաղ սերունդը իր կրակով, կը ներկայացնենք յանուն մեր մէջն ու շուրջը համախմբուած հայ մշակոյթի բարեկամներու, մեր ամէնէն անկեղծ և ամէնէն տաք բարեւները:

Ի դիմաց Հայ Մշակութային Հիմնարկութեան
Յ. Ճ. Սիրունի   Գ. Հաճի Արթին
(կնիք)

Յ. Գ. Կը խնդրենք որ Հայր Եղիա փէշիկեան ներկայացնէ մեզ հանդիսութեան մէջ:

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ
ԸՆԴՀ. ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ
ԲԱՐԻԶ

Բարիզ, 11 Օգոստոս 1936

Արհ. Հ. Սրապիոն Վարդ. Ուլուհոճեան
Ընդհ. Աբբայ Մխիթարեան Միաբանութեան – Վենետիկ

Արժիապատիւ Հայր,

Պատիւ ունեցանք ստանալու Ձեր 3 ամսաթիւ նամակը, և կը փութանք կեդր. Վարչութեան սրտագին խնդակցութիւնը յայտնել Մուրատ-Ռափայէլեան զոյգ Հաստատութեանց Հարիւրամեակին առթիւ, որ հայ Մշակոյթի փառապանծ Տօնը պիտի ըլլայ ամբողջ Ազգին համար:

Այդ դարադարձի տօնախմբութեան պիտի փափաքէինք անձամբ մասնակցիլ, եթէ կարելի ըլլար: Իմ մասին գիտէք որ դեռ նոր վերադարձայ Մերձաւոր Արեւելք կատարած մեծ ուղեւորութենէ մը, եւ կը ցաւիմ որ գործերը թոյլ չեն տար ինծի կրկին բացակայելու գործատեղիէս:

Բայց հեռուէն ալ մեր մասնակցութիւնը պիտի ըլլայ սրտագին, որովհետեւ միշտ բարձրօրէն գնահատած ենք լոյսի այն մեծ վառարանը որ Ս. Ղազարի վանքն է և այն սխրալի ցոլարձակումները զոր անիկա ունեցած է, կարեւոր կեդրոններու մէջ պատրաստելով պանծալի սերունդ մը, օժտուած ազգային բարձր դաստիարակութեամբ:

Խորին յարգանքով

Վարիչ-Պատուիրակ
Վ. Մալէզեան

ՆՈՒՊԱՐԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ

Փարիզ, 22 Սեպտեմբեր 1936

Գերյարգելի Հ. Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան
Ընդհ. Աբբայ Մխիթարեան Միաբանութեան - Վենետիկ

Ուշ մնացի շնորհակալութիւն յայտնելու Ձեր Օգոստոս 3 թուակիրին համար որով բարեհաճեր էիք զիս եւս հրաւիրել Մուրատ-Ռափայէլեան Ձեր կրթական երախտաւոր հաստատութեանց հարիւրամեակի հանդէսներուն:

Ամերիկա ճամբորդութեան մէջ էի այդ օրերուն, և այսօր միայն կը ստանամ Ձեր այդ նամակը: Շատ պիտի ուզէի Ձեր մօտ գտնուիլ այդ ուրախութեան պահերուն, և անձամբ Ձեզ յայտնել այն խորին յարգանքն ու անսայլայլ սէրը զորս միշտ տածեր եմ Ձեր բազմերախտ Միաբանութեան համար:

Խնդրեմ, հաճեցէք ընդունիլ, ակամայ յապաղած իմ շնորհաւորութեանցս հետ, լաւագոյն զգացումներուս և ամենախորին յարգանքներուս հաւաստիքը

Լ. Կ. Կերտան

ANI - «ԱՆԻ»
ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ

Պուքրէշ, 10 Օգոստոս 1936

Մուրատ-Ռափայէլեան
Դարադարձի յարգելի Յանձնախումբին - Վենետիկ

«Արազ» հայաթերթի, «Ani» ռումաներէն պարբերականի ու իմ կողմէ անձնապէս, կու գամ հոգեկան հրճուանքս խառնել ձեր տօնական ցնծութեանց, ողջունելով հարիւր բեղուն տարիները՝ որոնք բողբոջեցան Մուրատ-Ռափայէլեան զոյգ երդիքին տակ, Մխիթարի ոգին հովանի առած:

Թոյլ տուէք ինձ ալ որպէսզի, հայ մտքի համեստ մշակ, իմ ակնածանքս բերեմ այս առթիւ բոլոր անոնց որոնք ստեղծեցին ու բեղմնաւորեցին այդ հարիւր տարիները մեծ Մխիթարին շունչովը, ու նաեւ այն փառաւոր սերունդին՝ որ Մուրատ-Ռափայէլեան յարկին տակ ծլաւ ու իր ճիգերը գնաց խառնել հայ մտքի վերածնունդին, - զոյգ Սրապիոններուն՝ Հէքիմեանին ու Թղլեանին՝ որոնք ռահվիրան եղան հայ մանուկ բեմին անոր առաջին խարխափումներուն մէջ, Մկրտիչ Պէշիքթաշլեանին՝ որ հայ քերթողութիւնը պճնեց իր անթառամ երգերով, ու Թէրզեանին և Ալէմեանին՝ որոնց քնարին լարերը նոյնպէս Ս. Ղազարու ոգիները լարեցին, Մատթէոս Մամուրեանին ու Արփիար Արփիարեանին՝ որոնք զարդն եղան հայ հրապարակագրութեան և ածու բացին, Միքայէլ Փորթուգալ և Յովհաննէս Սազըզ ելեւմտագէտներուն՝ որոնք իրենց խորթ պաշտօնին մէջ իսկ իրենց սիրտը անեղծ պահեցին, հայ բեմի մեծ աստղին որ Պետրոս Ադամեանը եղաւ, ու շատերուն...

Ու թոյլ տուէք որ այս հանդիսաւոր ժամուն՝ երբ իրենց գերեզմանէն կ'ելլեն հարիւր տարիները մարդոց պատմելու համար դարու մը ամբողջ յուզումները Մխիթարի յարկին տակ, սրբազան քրտինքը որ հեղեղի պէս հոսեցաւ անոր չեմէն ներս, ու ցորեանն ոսկի՝ որ ազգը տարուէ տարի քաղեց Մխիթարի արտերէն, թոյլ տուէք որ մեռելներուն արթնցած այս խորհրդաւոր ժամուն՝ ոգեկոչեմ յիշատակը գրչի և պայքարի հարազատ եղբայրներու եւս, որոնք կայծը ձեր յարկերէն ծծեցին և զորս տրորեց գարշապարը գազանին, Դանիէլ Վարուժանին՝ որուն հոգիին մէջ Մխիթարէն կայծ մը, Բագրատունիին շունչն ու Ալիշանէն հեւք մը ապրեցաւ և որ անթառամ դափնի մը հիւսեց իրեն ու Մխիթարայ Տան համար՝ չմեռնող քերթուածներու մէջ ցեղին սիրտը պատ-



մելով, ու ստուերին մէջ մնացած երկու ուրիշ եղբայրներու՝ Բարսեղ Շահպազին և Իսրայէլ Տըրփունիին՝ որոնց մտաւոր և յեղափոխական պայքարի թափը թշնամին խեղդեց իր փթթումին մէջ:

Հին ու նոր մեռելները կանչելով այսպէս իրենց գերեզմաններէն, կու գամ խոնարհիլ աճիւնին առջեւ սերմնացաններուն՝ որոնք հունտը բուռ բուռ նետեցին մատղաշ սրտին մէջ, և որոնք, մեծ ուխտը գրկած, քալեցին հարիւր տարի՝ ջահը տալով ձեռքէ ձեռք:

Յ. Ճ. Սիրունի

Յ. Գ. Թող իմ վաղեմի բարեկամ հայր Սիմոն Երեմեանը բարի ըլլայ ներկայացնելու «Արազ»ն ու «Ani»ն տօնական հանդիսութեանց մէջ:

Փարիզ, 7 Օգոստոս. 1936

Գերապատիւ Հ. Ս. Ուլուհոճեան
Աբբահայր Մխիթարեան Միաբանութեան - Ս. Ղազար

Մեծարգոյ և սիրելի Աբբահայր

Կը ցաւիմ որ կամքէս անկախ պատճառներ ինծի թոյլ պիտի չտան անձամբ մասնակցիլ Մուրատ-Ռափայէլեան Վարժարաններու Հարիւրամեակի հանդէսներուն որ ի մօտոյ տեղի պիտի ունենան Վենետիկի մէջ:

Սիրոյ և յարգանքի ջերմ զգացումները որ զիս շատոնց ի վեր կը կապեն Ս. Ղազարու Հայ մտաւորական մեծ Տան և անոր լրացուցիչն եղած Մուրատ-Ռափայէլեան Վարժարաններուն, յայտնի են: Եւ այս առթիւ ուրիշ բան չունիմ ընելու բայց եթէ այդ նոյն զգացմանց արտայայտութիւնը կրկնել աւելի քան երբեք ուժգնութեամբ:

Ս. Ղազարու Տունը և Մուրատ-Ռափայէլեան Վարժարանները մեծ միջնորդներ եղան ընդմէջ Արեւմտեան հին ու նոր մեծագոյն մշակոյթներուն և հայ մտքին, ու եղան նաեւ վառարան հայրենասիրութեան, գեղասիրութեան, ուսումնասիրութեան:

Ս. Ղազարու Միաբանութիւնը մեզի տուաւ քերթութեան և հմտութեան քանի մը հսկաներ, և գործը զոր կատարեց ու դեռ կը կատարէ ի նպաստ մեր ազգային մշակոյթին՝ բազմաձեւ է ու մեծարժէք. իսկ Մուրատ-Ռափայէլեան Վարժարաններու մէջ, Մխիթարեան ուսուցիչներուն շունչին տակ, և իտալական կամ ֆրանսական ճոխ ու վեհ մշակոյթներուն ազդեցութեան ներքեւ կազմուեցան բազմաթիւ հայ անձնաւորութիւններ որոնք մտաւոր գործունէութեան այս կամ այն ճիւղին մէջ նշանաւոր դէմքեր հանդիսացան, հայ ժամանակակից հանրային կեանքին մէջ կարեւոր դեր կատարեցին, հայ մշակոյթի վերածնութեան ու զարգացման ընդհանուր աշխատանքին մէջ լայն բաժին մը ունեցան:

Պատիւ ուրեմն Մխիթարեան հայրենասէր ու բազմավաստակ Միաբանութեան. կեցցէ Ս. Ղազարու հայկական պանծալի Տունը, կեցցեն Մուրատ-Ռափայէլեան ազգօգուտ վարժարանները, օրհնեալ ըլլայ յիշատակը երկու բարերարներուն որ այդ վարժարաններու հաստատման պատճառ եղան, կեցցէ հիւրընկալ ու խրախուսող Հայրենիքի պաշտամունքի և Գեղեցիկ սիրոյ մեծ առաջնորդ ազնիւ ու սիրելի Իտալիան:

Ա. Չօպանեան

Նիս, 15 Օգոստոս 1936 թ:

Գերպ. Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան
Ընդհ. Աբբայ Մխիթ. Միաբանութեան - Վենետիկ

Գերյարգելի Տէր,

Կինս ու ես շնորհաւորում ենք Ձեզ, ու պատուական Վենետիկի Մխիթարեան Միաբնութիւնը նրա հարիւրամեայ ազգօգուտ կրթական գործունէութեան առիթով Մուրատ-Ռափայէլեան կոլլէժում:

Մենք ի սրտէ մաղթում ենք, որ Դուք պահելով Ձեր հիմիկուայ պատուական կոլլէժներ, կարողանայիք բազմացնել նրանց, մեծ թւով հասցնելու համար նոր ու նոր սերունդներ ազգային ոգւով կրթուած երիտասարդների, որոնց պակասը այդքան զգալի է մեր Ազգի մէջ, և որոնց կարող են մեզ տալ միայն Ձեր կոլլէժների նման կրթական հաստատութիւններ:

Խնդրելով Ձեզ, Գերյարգելի Տէր, և Ձեր վանքի պատուական Միաբանութեան ընդունել մեր ամենաջերմ մաղթանքներ Ձեր Անձի, և Միաբանութեանդ համար, ու հաւատալ մեր անկեղծ յարգանացն:

Մնամ Ձերդ Գերյարգելութեան
Խ. Տ.
Իշխան Բորիս Երկայնաբազուկ - Արղութեան

digitised by A.R.A.R.@

Սեպտեմբեր 10, 1936

Պատուարժան Տնօրինութիւն Մուրատ-Ռափայէլեան Վարժարանի
Ս. Ղազար, Վենետիկ

Սրտի անհուն ուրախութեամբ էր որ, հաստատութեանդ հարիւրամեակի առթիւ տօնակատարութեանց մասնակցելու հրճուանքով, ուղարկեցի Օգոստոս 27 թուակիր շնորհաւորական հեռագիրս։

Արդարեւ, հաստատութեանդ լման դար մը մատուցած գնահատելի ծառայութիւնները բազմաչարչար ազգիս տարածելու գիտութեան և զարգացումի լուսաշող արեւի կենսատու ճառագայթները հազարաւոր լոյս փնտռող Հայ հոգիներու, նուիրական և ազգովին գնահատութեան արժանի մեծ գործ մըն է, որուն համար թէ՛ հայութիւնը և թէ հաստատութեանդ Հիմնադիրները գոհունակ և հպարտ զգալու իրաւունք ունին, և ես ալ կրկնակ բերկրութեամբ խոնարհաբար կու գամ միանալ հարիւրամեակի այս տօնակատարութեանց ցնծութեան, պատկանելով Հիմնադիրներու գերդաստանին և ըլլալով անոնց շառաւիղներէն մին։

Բեղմնալից դար մը, որուն հպարտութեամբ կրնան նայիլ Մխիթարեան Ուխտի կրթական մշակները, և համայն հայութիւնը սրտանց կը բաժնէ Ձեր արդարօրէն շահուած հպարտութիւնն ու հրճուանքը, որովհետեւ Մուրատ-Ռափայէլեան հաստատութիւնը սերունդներ տուած է հայութեան, որոնց մէջ կան հռչակաւոր փայլուն աստղեր մեր գրականութեան, բանաստեղծութեան, բանասիրութեան և գեղարուեստի մարզերուն մէջ։

Եւ երբ այսօր, նոր դար մը կը թեւակոխէ հաստատութիւնդ, համակրանքի անխառն հաւատքով կու գամ մաղթել որ, այս նոր դարու սեմին, Տէրը պարգեւէ Ձեզ ոյժ և կարողութիւն նոյն նուիրումով շարունակելու ազգանուէր Ձեր բարձր գործը և միշտ վառ մնայ Հայ Մշակոյթի վառարան Մուրատ-Ռափայէլեան Վարժարանը և Հայկական Վենետիկը։

Սրտագին շնորհաւորութիւններով
Ձերդ
Հրանդ Աղամալեան

Բարիզ 10 Օգոստոս 1936

Գերայարգելի Հ. Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան
Ընդհ. Աբբահայր Մխիթարեան Միաբանութեան – Վենետիկ

Պատիւ ունեցայ ստանալ Ձեր Գերայարգելիութեան 3 օգոստոսի պատուականը, որով հրաւէր կը կարդայիք և ինձ՝ գալ ներկայ գտնուիլ, Մուրատ-Ռափայէլեան վարժարանին հարիւրամեակի հանդէսներուն։

Տեղն է ըսել, թէ՛ հոգիս յօժար է, բայց մարմինս տկար։ Մեծ փափաք էր գալ, այո՛, և որոշած իսկ էի, բայց շատ մը պատճառներ կը զրկեն զիս այդ փափաքէս, մանաւանդ սգաւոր վիճակս։

Ուստի՝ ներկայ անշունչ տառերովս շնորհաւորելով Մուրատ-Ռափայէլեան Վարժարանին փառաւոր Դարադարձը, կը մաղթեմ՝ որ անի չկասի (ինչպէս ցարդ), իւր ընթացքին մէջ, ինչպէս երկրագնտիս հոլովումը, և ունենայ իւր ազգօգուտ և ազգաշէն արդիւնաւորութիւնը, որով իրաւամբ և ճակատաբաց կը պանծայ այսօր, իւր ծնած ու Հայ ազգին ընծայած բազմերամ գիտուն զաւակներովը։

Զիս ձեր հանդէսին ներկայ համարելովիդ խնդրելով, մնամ Ձերդ Գերայարգելիութեան անձնուէր,

Տօքթ. Վահրամ Թորգոմեան

Բարիզ, 9 Օգոստոս 1936

Գերպ. Տէր Հ. Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան
Ընդհ. Աբբահայր Մխիթ. Միաբանութեան - Վենետիկ

Չեմ ուզեր ուշ մնալ յայտնելու համար իմ կարգիս ուրախութիւնս և ջերմագին շնորհաւորութիւններս Յոբելինական հանդէսներու առթիւ՝ որ տեղի կ'ունենան Վենետիկ՝ Մխիթարայ դարաստանին մէջ։

Եւ այնքան աւելի մեծ խանդավառութեամբ է որ կ'ընեմ՝ որքան որ հանդէսները կը նկատեմ իբրեւ արժանաւոր պսակը դարու մը աշխատանքին, տքնութեանց և հոգերու, պայքարի և վերջապէս Մխիթարայ Որդւոց յաղթանակին։



Վասնզի շատ աւելի կարեւոր բարեգործական կտակներ փճացած են, նոյնպէս մեծ գումարներ վատնուած են մեր ազգայիններու քով առանց գնահատելի պտուղներ արտադրելու, մինչդեռ Ձեր գործը, համեստ իր սկզբնաւորութեան մէջ՝ կը յարատեւէ փառքով՝ հակառակ և ընդդէմ ամենուն։ Մի՞թէ ատոր մէջ չէ՞ փայլուն ապացոյցը Երկնքի օրհնութեան՝ «Մատն Աստուծոյ է աստ», և միեւնոյն միջոց վարձատրութիւնը Մխիթարայ Որդւոց արժանիքներուն։

Կը միանամ ուրեմն Ձեր ուրախութեանց և կ'աղօթեմ որ Աստուած շարունակէ պաշտպանել և օրհնել Մխիթարայ Գործը և իր արժանաւոր Զաւակները։

Մնամ Ձեզ ամենուդ սրտագին և միացած աղօթքով, Ալ. Վրդ. Սիրունեան

Նիս, 18 Օգոստոս 1936

Գերպ. Հ. Սրապիոն Վ. Ուլուհոճեան
Ընդհ. Աբբայ Մխիթարեան Միաբանութեան – Վենետիկ

Պատուարժան Միաբանութեանդ ազգանուէր գործունէութեան հարիւրամեակի յոբելինական հանդէսներուն անձամբ չի կարենալ մասնակցիլս ինձ համար խոր վիշտ կը պատճառէ զի չեմ դադրած համեստ գնահատող և սքանչացող մը ըլլալէ Պատ. Միաբանութեանդ անցեալ ու ներկայ անխոնջ, անձնուէր և արգասաբեր գործունէութեան, և իբր այդ ինքզինքս ամօթահար կը զգամ, տիրող տնտեսական աննախընթաց տագնապին բերմամբ, ի վիճակի չըլլալով դրական ձեւով արտայայտել իմ այդ սքանչացումի զգացումներս։

Իմ խիստ տկար գրիչս բացարձակապէս անկարող է հիւսել անգին արժանիքը Պատ. Միաբանութեանդ՝ որ հայ ազգին անխտիր ամէն խաւերուն, դասակարգին և հոսանքներուն յաւէտ երախտագիտութեան արժանացած է, հայ լեզուին, հայ պատմութեան, հայ գրականութեան, յաչս օտարին հայ ազգի արժանապատւութեան եւն. եւն. ձեր մատուցած անգին ծառայութիւններով – բոլորովին անձնուիրաբար։

Գերապատիւ Աբբահայր, խնդրեմ հաճիք պատուարժան Միաբանութեանդ ամբողջական կազմին հետ բաժնել իմ անկեղծ շնորհաւորութիւններս ու ջերմագին մաղթանքներս որ յաւէտ չդադրի ապագային մէջ ալ ունենալ նոյնչափ կարող և անձնուէր հետեւորդներ յաւերժացնելով Մխիթարայ անմահ անունը։

Ձերդ խորին յարգանօք Մ. Մատթէոսեան

Սբա, 11 Օգոստոս 1936

Գերապատիւ Հայր Սրապիոն Ծ. Վարդապետ Ուլուհոճեան
Ընդհ. Աբբայ Մխիթարեան Միաբանութեան – Վենետիկ

Գերապատիւ Տէր, Մեծայարգ բարեկամ

Այսօր ստացայ այստեղ Ձեր 3 օգոստ, թուակիր պատուական նամակը։ Մեծապէս շնորհակալ եմ Ձեր սիրալիր հրաւէրին համար։ Մուրատ-Ռափայէլեան Վարժարաններն այնքան բազմադիմի կրթական դեր են կատարած յօգուտ մեր ամբողջ Ազգի, ու այնքան սիրուած ու յարգուած են, որ անոնց հիմնարկութեան հարիւրամեակի հանդէսին ներկայ գտնուիլն և անձամբ շնորհաւորութիւններս մատուցանելն ամենամեծ հաճոյք պիտի պատճառէր ինձ։ Դժբախտաբար առողջական վիճակիս պատճառով եկած եմ այստեղ... Ուստի և մեծ ցաւ սրտիս՝ ստիպուած եմ հեռուէն կատարել իմ նուիրական պարտականութիւնս, միացնելով իմ ձայնն այն բազմաթիւ բարեմաղթութեանց շարքին, որոնք պիտի ուղղուին օգոստոս 16ին։ Իբրեւ մէկը Մխիթարեան Միաբանութեան ջերմ և իսկական բարեացակամ համակիրներէն, կ'ըղձամ որ Վենետիկի անժխտելիօրէն բազմարդիւն մեծարոյ Միաբանութիւնդ այսուհետեւ եւս, ինչպէս մինչեւ հիմայ, կատարէ այն անգնահատելի ազգանուէր դերը, որ յատուկ է իրեն, և որ յանձնուած է իր մեծանուն Հիմնադիր Մխիթար Աբբայէն իբրեւ ուղղագիծ և նպատակ։

Կ'ըղձամ նմանապէս որ մեր ազգային այլեւայլ հաստատութիւններն և ընդհանրապէս Հայ ժողովուրդը աւելի փութով և մանաւանդ աւելի գործնականօրէն գնահատեն և քաջալերեն թէ Մուրատ-Ռափայէլեան վարժարանները և թէ Միաբանութեանդ միւս կրթական թանկագին հաստատութիւնները։

Կրկնելով իմ այս իղձերը և ցանկալով Ձեզ անձնականապէս լիուլի յաջողութիւն և կատարեալ առողջութիւն, մնամ միշտ խորին յարգանօք

Ձերդ Գերապատիւ Տէրութեան — Ամենախոնարհ և անկեղծ բարեացակամ
Ա. Սարուխան

digitised by A.R.A.R.@

Մխիթարեան Միաբանութեան իրական արժանիքը ի յայտ բերող գլխաւոր ապացոյցներէն մին Մ–Ռափայէլեան վարժարանի հարիւր տարուան գոյութիւնն է։ Ժամանակին յարուցած բազմաթիւ դժուարութիւններուն մէջ գովելի խոհականութեամբ հարիւր տարուան կեանք տալ այդ հաստատութեան հազիւ բաւող նուիրատուութեամբ մը և մանաւանդ բազմապատկել այդ նուիրատուութիւնը խոհեմ մատակարարութեամբ, բաւական գործ է որպէսզի բովանդակ ազգութիւնը Ձեր բոլորին հանդէպ համակրանք և յարգանք ունենայ։ Ո՛րքան համակրանք և յարգանք ունենալու են Ձեզի հանդէպ անոնք որոնք այդ բարիքներէն ուղղակի օգտուողներէն եղած են։ Ահա թէ ինչու, յարգելի բարեկամ, Մ–Ռափայէլեան վարժարանի հարիւրամեակին առթիւ իմ երախտագիտութեան, համակրանքի և յարգանքի զգացումներուս հաւաստիքը կու տամ Ձեզի։ Ոգեւորութեամբ աջակից եմ այդ շքեղ հանդիսութեանց և կը գնահատեմ Մխիթարեան Միաբանութեան անթերի գործունէութիւնը։

Հաճեցէք ընդունիլ բարեկամական սրտի մը բովանդակ զգացումները։ Յ. Գաւիթեան

Փարիզ, 24 Յուլիս 1936

Մեծարգոյ Յանձնախումբ Մուրատ-Ռափայէլեան Վարժարաններու
Հարիւրամեայ յոբելինական հանդէսներուն – Վենետիկ

Անձամբ չկարենալով ներկայ ըլլալ Ձեր կազմակերպած փառաշուք հանդէսներուն, ընդունեցէք իմ ջերմ մասնակցութիւնս «Մարտիրոսուրբիւն» նկարովը, զոր այստեղ Հ. Խաչատուր Վրդ. Վրթանէսեանին յանձնեցի Ձեզի փոխանցելու համար։ Կը փափաքիմ որ այս նկարս պատկանի վանքի Թանգարանին՝ հանդէսներէն վերջ։

Նաեւ սոյն կերպով Ձեզ կը ղրկեմ «Հայաստանի փառք»ին և Գերպ. Հ. Սրապիոն Վրդ. Ուլուհոճեան Աբբահօր կենդանագրին լուսանկարները՝ «Բազմավէպ»ի բացառիկ թիւին մէջ հրատարակելու համար։

Սրտանց կը մաղթեմ՝ Ձեր ձեռնարկին յաջողութեամբ պսակումը, ի փառս Միաբանութեանդ և Բարերարներուն։

Մնամ միշտ երախտապարտ Նախկին Սան
ՅՍ Արիէլ Աճէմեան

Թաւրիզ, 20 Մայիս 1936

Մեծարգոյ Կարգադիր Յանձնախումբ
Մուրատ – Ռափայէլեան Վարժարաններու Հարիւրամեայ տօնախմբութեան – Վենետիկ

Ի պատասխան Ձեր Բ. Շրջաբերականին, սրտի խորին բերկրանքով կու գամ հեռուից իմ մասնակցութիւնը բերել այն ընդհանուր խրախճանքին և մեծագոյն գոհունակութեան, որ հայ սիրտ կրող իւրաքանչիւր անհատ անկեղծօրէն զգում է մեր ամենասիրելի երկու վարժարաններու 100–ամեայ յոբելեանին առթիւ։

Հպարտ եմ և երջանիկ, երբ ամէն անգամ մտաբերում եմ այն մի քանի բաղդաւոր տարիների կեանքս, որը ապրեցայ այդ 100–ամեայ երիտասարդ վարժարանում, և գերերջանիկ, նորա համար, որ բարեբաստիկ կարելիութիւնը ունեցել եմ Մխիթարեան ամենագիւ Վարդապետների հայրական հոգածութիւնը վայելելու և իրանց սաներին շռայլած դաստիարակութիւնից և բարձր կրթութիւնից մի փոքր բաժին էլ իբրեւ ինձ հասանելիք բաժինը ստանալու։

Կեանքիս մէջ իբեւ պատուաւոր անհատ այս 55ամեայ տարիքին հասնելուս և ազնիւ հայ զաւակներ հասցնելուս բոլոր բաղդաւորութիւնը և պարծանքը ամբողջովին պարտական եմ այդ զոյգ տաճարներին և նրանց կեանք ու կենդանութիւն տւող Մխիթարեան Հայրերին։

Նիւթական ոչինչ չունենալով առայժմ նուիրելու այն մեծ 100–եակի առթիւ, խնդրում եմ ընդունել ի փոխարէն, իմ սրտաբուղխ զգացումներս յոբելեարների գերզարգացման և յաւէտ կենսունակութեան համար, առլի բարեմաղթութիւններով և աղօթքներով։

Յարգանքներով Յոբելեար վարժարանների 1901–ի սաներից՝ Ձերդ ամենախոնարհ
Յովհաննէս Տէր Թովմասեան



Սէն Քլու, 28 Օգոստոս 1936

Գերյարգելի Հայր Սրապիոն Վարդապետ Ուլուհոճեան
Ընդհանրական Աբբայ Մխիթարեան Միաբանութեան – Վենետիկ

Գերյարգելի և սիրելի Աբբահայր

Որչափ ցաւեցայ, հիւանդագին վիճակիս բերումով, մաս չկազմելուս համար Մուրատ-Ռափայէլեան Վարժարաններու հարիւրամեայ յոբելեանին հանդիսութեան գացող եռանդաշատ ընկերներուս և նախկին աշակերտներու Ֆրանսայէն մեկնող կարաւանին, որպէսզի անձամբ ներկայացնէի շնորհաւորութիւններս և ընէի սրտէս բխող այնքան ջերմ և հաւատաւոր մաղթանքներ՝ կրկնակ յաղթանակներու և ապագայ յոբելեաններու համար։

Հաստատութիւն մը, որ Մխիթարեան Ուխտիդ ցեղանուէր շունչին տակ դաստիարակեց բազմաթիւ սերունդներ, ազգին տուաւ մտաւորականներու, քերթողներու և կեանքի այլազան ասպարէզներուն մէջ փայլող ընտիր հայկազուններու ստուար հոյլ մը, որով ո և է ժողովուրդ պիտի կրնար պարծիլ ու փառաւորուիլ իրաւամբ, արժանի է բովանդակ հայութեան երախտագիտութեան ու մեծարանքին։

Նորագոյն հայ պատմութեան մեծագոյն զաւկին՝ անմահն Մխիթար Աբբահօր և անոր վերածնունդի սրբազան գործին ու առաքելութեան նեցուկ Մուրատի և Ռափայէլի, այլ սակայն ամբողջ Մխիթարեան Ուխտին տօնախմբութիւնն է այս հարիւրամեակը։

Կեցցէ՛ Մխիթարայ և Բարերարաց յիշատակը։ Կեցցեն Մխիթարեան բազմավաստակ Հայրերը։

Կեցցեն Մուրատ-Ռափայէլեան բոլոր նախկին աշակերտները։

Հաճեցէք ընդունիլ, սիրելի Աբբահայր, սիրալիր ողջոյններս և անձնուիրութեանս հաւաստիքը։

Անկեղծօրէն և երախտագիտութեամբ
Հայ Գնդունի

*Venezia*, 17 *Agosto* 1936 *XIV*

A S. Ecc. Rev.ma P. Serapione Dr. Uluhogian
Abate Generale della Congr. Mechitarista – Venezia

*Eccelenza*!

Assente da Venezia da alcuni giorni ho trovato stamane il gentile invito a presenziare alla Festa Centenaria della fondazione del Collegio Moorat-Raphaël. Sono perciò assai dolente di non aver potuto presenziare alla solenne Commemorazione e di non aver potuto unirmi di persona all'omaggio che autorità, estimatori e conoscitori dell'opera che da secoli svolgono i Rev.di dotti e benemeriti Padri Armeni per la divulgazione della cultura italiana in oriente, hanno loro presentato.

Ma non voglio tardare a rivolgere alla E. V. la preghiera perchè Ella mi voglia noverare fra i conoscitori e quindi fra gli estimatori della Ven. Congregazione... per gradire il mio saluto e l'augurio che io rivolgo con sincerità perchè la benemerita opera abbia ad incrementarsi ognor più a vantaggio dell'Armenia lontana ed a consolidamento di quei rapporti che coltura e stima possono rendere veramente tenaci fra le due Patrie.

Voglia la E. V. accogliere i sensi della mia devozione.

Avv. Giuseppe Tessier

Վենետիկ, 17 Օգոստոս 1936–XIV

Առ Գեր. Հ. Սրապիոն Ուլուհոճեան
Ընդհ. Աբբահայր Մխիթարեան Միաբանութեան – Վենետիկ

Գերապայծառ Տէր,

Քանի մ'օրէ ի վեր բացակայ ըլլալով Վենետիկէն, այս առտու գտայ ազնիւ հրաւէրը ներկայ ըլլալու Մուրատ-Ռափայէլեան Վարժարանի Հիմնարկութեան հարիւրամեայ տօնախմբութեան։ Հետեւաբար մեծապէս կը ցաւիմ որ չկրցայ անձամբ ներկայ ըլլալ հանդիսաւոր տօնախմբու-

digitised by A.R.A.R.@

թեան և միացնել իմս ալ այն յարգանքին զոր ընծայեցին Ձեզի իշխանութիւններ, գնահատողներ և ծանօթներ այն գործունէութեան համար զոր դարերէ ի վեր կը կատարեն մեծարգոյ գիտնական և արդիւնաւոր Հայ վարդապետները իտալական մշակոյթն արեւելքի մէջ տարածելու համար։

Բայց չեմ ուզեր ուշանալ ուղղելու Ձեր Գերապայծառութեան իմ աղաչանքս որպէս զի զիս ալ հաճիք թուել Ձեր ծանօթներուն և հետեւաբար Ձեր յարգելի Միաբանութիւնը գնահատողներու կարգին... ընդունելու համար իմ ողջոյնս և մաղթանքս զոր կ'ուղղեմ անկեղծութեամբ, որպէս զի արդիւնաւոր Հաստատութիւնը միշտ աւելի զարգանայ յօգուտ հեռաւոր Հայաստանի և ի հաստատութիւն այն յարաբերութեանց զոր մշակոյթն և յարգանքը կարենան ամրապնդել երկու Հայրենեաց միջեւ։

Հաճեցէք ընդունիլ, Գերապայծառ Տէր, անձնուէր զգացումներս։

փաստ. Յովսէփ Թեսսիէ

Անիեր, 27 Ապրիլ 1936

Ամենասիրելի մեծաւոր վարդապետ
Հայր Քերոբէ Վ. Ձրաքեան – ի Վենետիկ

Դեռ թարմ են այն յիշատակները՝ զոր ունեցայ՝ դժբախտաբար կարճ ժամանակի մը համար աշակերտելով Ձեր հովանիին ներքեւ, և Ձեր հայրական շունչովը զարդարուած դաստիարակութիւնս է որ, կը մղէ զիս, փութալ մասնակցիլ, ունեցած փոքրիկ գումարովս, սրբավայր վարժարանիս հարիւրամեակի առթիւ եղած հանգանակութեան։ Թէպէտեւ շատ ոչինչ բան մըն է ունեցածս, բայց յօժար սրտիս զգացումներուն չեմ կարող անտարբեր մնալ, ցաւալին այն է թէ, անկէ աւելին չունիմ, և այս գումարն ալ, անուանս տօնին առթիւ բարեկամներէ ինծի եղած նուէրներէն է, ուստի յարգելի վերապատուելիս, բարի եղէք ընդունիլ այս փոքրիկ գումարս, ի նշան սիրոյ վարժարանիս և Ձեզ։

Համբուրելով Ձեր սուրբ աջը, մնամ միշտ խոնարհ

Սան մը
Յարութիւն Էմինեան

Շնորհակալութեամբ կը յիշենք հոս անունները կարգ մը նախկին Սաներու և Բարեկամներու որոնք մեզի հասուցած են ժամանակին իրենց բարեմաղթութիւնները։

Նախկին Սաներ. — Գալճեան Ա. կարապետ, Կիւրեղեան ճրտ. Լեւոն, Ինճիճեան Արամ, Թէրզեան ճրտ. Եդուարդ, Փիլոսեան բժ. Շապուհ, Փիլիպպոսեան բժ. Պետրոս, Խանպէկեան բժ. Մանուկ, Ուլուհոճեան բժ. Լեւոն, Ուլուհոճեան Յովսէփ, Սիմոնեան ճրտ. Պետրոս, Քիւչիւկեան բժ. Իգնատիոս, Մարտիրոսեան բժ. Վիկտոր, Գազանճեան ճրտ. Յարութիւն, Տոպաճեան Առեւտր. Յակոբ, Քէօրողլեան քիմ. Սարգիս, Քէօրողլեան ճրտ. Ուս. Գասպար, Թազճեան բժ. Ուս. Պետրոս, Մութաֆեան նկարիչ Զարեհ, Յովհաննէսեան Ատամ. Ուս. Տօնապետ, Գազէզեան բժ. Ուս. Ստեփան, Մանուկեան Եղբարք Հրանդ, Գառնիկ և Pietro Fabris (Իտալացի)

Բարեկամներ. — Փրոֆ. Ն. Եօրկա, Accademia Naz. di Musica Antica (Lamon) (Ակադեմիա հին Երաժշտութեան), D. Scarpa Քղքպտկն. քարտուղար Վենետկոյ. Elti di Rodeano Giandanieli, հրամանատար Guerrini G. գնդապետ, Նաւահանգստի վերատեսուչը, Ronchi Prof. Vittorio, Zanolli Prof. Almo, Dusi Prof. Ricardo, Gavagnin Prof. Roberto, Sartori Lino, Հ. Կիւրեղ Զօհրապեան Առաջնորդ Կաթ. Հայոց Ցունաստանի, Նալպանտեան Յովհաննէս Վրդ. (Պրիւքսէլ), Զուհաճեան Յովհաննէս Վրդ. (Մարսէյլ), Սիրունեան բժ. Արմենակ, Tallon P. Maurice S. J. (Հայագէտ Յիսուսեան), Աշրաֆեան Տիկին Զապէլ (Թիֆլիս), Արփիարեան Օր. Մ. (Բատում), Յ. Մանուկեան (Հռոմ)։

# ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Բնագիր՝ հանդերձ հայերէն թարգմանութեամբ)

1936 Օգոստոս 10–16

Santanna Valdieri

**Rev. Abate Generale Istituto Mechitarista - Venezia**

Augusto Sovrano m'affida l'incarico di ringraziare del gentile pensiero.

**Generale Asinari di Bernezzo**

Ս. Աննա Ուալտիերի

Գեր. Ընդհ. Աբբահայր Մխիթ. Հաստատութեան – Վենետիկ

Օգոստափառ Թագաւորը պաշտօն կու տայ ինձ շնորհակալ ըլլալու ազնիւ մտածութեան համար։

Զօրավար Ազինարի տի Պերնէծծոյ

Napoli

**Rev. Abate Generale Mechitarista - Venezia**

S. A. R. Principe Piemonte ringrazia sentitamente pel gentile pensiero formulando i migliori auguri.

**Generale Aimonino**

Նափոլի

Գեր. Ընդհ. Աբբահայր Մխիթարեանց – Վենետիկ

Ն. Ա. Բ. Փիէմոնթէի (գահաժառանգ) իշխանը խորապէս շնորհակալ է ազնիւ մտածման համար, լաւագոյն մաղթանքներ հիւսելով։

Զօրավար Այմոնինոյ

Roma

**Rev. Uluhogian Abate Generale Mechitaristi - Venezia**

Ringraziando per cortese pensiero auguro sempre maggiore prosperità e sviluppo codesti Istituti.

**Galeazzo Ciano**

Հռոմ

Գեր. Ուլուհոճեան Ընդհ. Աբբահայր Մխիթարեանց – Վենետիկ

Շնորհակալ ըլլալով Ձեր ազնիւ մտածութեան համար, կը մաղթեմ միշտ մեծագոյն յաջողութիւն և զարգացում Ձեր այդ Հաստատութեանց։

(Նախարար Արտ. Գործ.) Կալէածծոյ Չանոյ

Dolo

**Comitato Collegio Armeno palazzo Zenobio Carmini - Venezia**

Presidenza Accademia Italia incaricami esprimere l'alto elogio per questo insigne Collegio il voto augurale per commemorazione centenaria. Impossibilitato intervenire cerimonia prego vengami scusata assenza.

**Ettore Tito**

Տոլոյ

Յանձնաժողով Հայ Վարժարանի, Զենոբեան պալատ, Քարմինի – Վենետիկ

Իտալիոյ Ակադեմիայի Նախագահութիւնը պաշտօն կու տայ ինծի յայտնելու իր բարձր գնահատանքը այս պանծալի Վարժարանին և իր շնորհաւորական մաղթանքը հարիւրամեայ տօնադրութեան համար։ Անհնար ըլլալով ներկայութիւնս տօնակատարութեան, կը խնդրեմ որ ներէք ինձ բացակայութեանս համար։

(Նկարիչ-Ակադեմական) Հէկտոր Թիթոյ

Beyrouth

**Rev. Abbé Général Mékhitharistes - Saint Lazare, Venise**

Félicitations occasion jubilé centenaire écoles Mourad-Raphaëlian bénédictions voeux sincères pour prosperité.

**Catholicos Sahag**

Պէյրութ

Գեր. Ընդհ. Աբբահայր Միխիթարեանց – Ս. Ղազար, Վենետիկ

Շնորհաւորութիւններ առթիւ Մուրատ-Ռափայէլեան Վարժարաններու հարիւրամեայ յոբելինին, օրհնութիւններ և անկեղծ մաղթանքներ յաջողութեան։

Սահակ Կաթողիկոս

digitised by A.R.A.R.@

**Comitato Collegio Armeno - Venezia** Venezia

Rincrescemi non poter presenziare solenne commemorazione centenario Collegio Armeno. Invio mio fervido saluto formulando voti migliori per la prosperità avvenire della nobile istituzione.

**Garioni Preside Provincia**

Յանձնաժողով Հայ Վարժարանին - Վենետիկ — Վենետիկ

Կը ցաւիմ որ չեմ կրնար ներկայ գտնուիլ Հայ Վարժարանի հարիւրամեայ հանդիսաւոր տօնախմբութեան։ Ջերմագին ողջոյնս կը ղրկեմ լաւագոյն մաղթանքներս ընելով ազնուական Հաստատութեան ապագային յաջողութեան համար։

Կարիոնի, Գաւառակալ Նախագահ

**Mons. Oulouhodjian Abbé Général Congrégation Méchitaristes, St. Lazare - Venise** Paris

Occasion centenaire collèges Moorat-Raphaël présente felicitations vœux.

**Evêque Vramchabouh**

Գերպ. Ուլուհօճեան, Ընդհ. Աբբահայր Մխիթ. Միաբանութեան – Ս. Ղազար, Վենետիկ – Փարիզ

Առթիւ Հարիւրամեակին Մուրատ-Ռափայէլեան վարժարաններուն՝ կը ներկայացնեմ շնորհաւորութիւններ և մաղթանքներ։

Վռամշապուհ Եպս.

**Comitato Direttivo Centenario Collegio Armeno Moorat-Raphaël - Venezia** Alessandria

Occasione Centenario Moorat-Raphaël ex alunni Moorat-Raphaël riuniti intellettuali concittadini simpatizzanti inviano calde felicitazioni a tutti ex alunni del collegio ed esprimono riconoscenza ai Padri Mechitaristi augurando che abbiano sempre la sapienza di continuare il loro grande lavoro d'arte e scienza per la prosperità della nazione armena. Per comitato Alessandria d'Egitto,

*Presidente* **Léon Matossian**
*Segretario* **Vahram Chahbaz**
*Tesoriere* **Karnig Klidjian**

Վարիչ Յանձնաժողով Մուրատ-Ռափայէլեան Վարժարանի Հարիւրամեակին - Վենետիկ (15 Օգոստ.) Աղեքսանդրիա

Առթիւ Մուրատ-Ռափայէլեան Վարժարանի Հարիւրամեակին, Մուրատ-Ռափայէլեան Նախկին Սաներ և անոնց հետ հաւաքուած համազգի համակիր մտաւորականներ կը ղրկեն ջերմագին շնորհաւորութիւններ Վարժարանի բոլոր Նախկին Սաներուն և երախտագիտութիւն կը յայտնեն Մխիթարեան Հայրերուն մաղթելով որ յարատեւ իմաստութեամբ շարունակեն իրենց մեծ գործը արուեստի և գիտութեան՝ յօգուտ Հայ Ազգին զարգացման։ Ի դիմաց Եգիպտոսի Աղեքսանդրիոյ Յանձնաժողովին,

Ատենապետ Լեւոն Մատոսեան
Ատենադպիր Վահրամ Շահպազ
Գանձապահ Գառնիկ Քլըճեան

**Couvent Arménien Saint Lazare Venise** Alexandrie

Élite colonie arménienne Alexandrie et anciens élèves Mékhitaristes-Moorat-Raphaëlian réunis au casino Aiglon fêtent centenaire Moorat-Raphaël et envoient à cette occasion leurs gratitude aux Pères Mékhitaristes souhaitant continuer toujours œuvre grandiose grand Méchitar. Pour comité centenaire,

**Matossian - Chahbaz - Klidjian**

Հայկական Վանք, Ս. Ղազար - Վենետիկ (13 Սեպտ.) Աղեքսանդրիա

Աղեքսանդրիոյ Հայ գաղութի ընտրանին և Մխիթարեան-Մուրատ-Ռափայէլեան Նախկին Սաներ՝ հաւաքուած Էկլօն զբօսարանին մէջ՝ կը տօնախմբեն Մուրատ-Ռափայէլեան (Վարժարանի) Հարիւրամեակը և այս առթիւ կը ղրկեն իրենց երախտագիտական զգացումները Մխիթարեան Հայրերուն, մաղթելով որ շարունակեն միշտ մեծին Մխիթարայ հսկայ գործը։ Ի դիմաց Հարիւրամեակի Յանձնախումբին (Աղեքսանդրիոյ),

Մատոսեան - Շահպազ - Քլըճեան



**Collège Moorat-Raphaël - Venezia** Cairo

Présentons vœux fêtes centenaire.

**Comité Caire**

Մուրատ-Ռափայէլեան Վարժարան - Վենետիկ — Գահիրէ

Կը ներկայացնենք մաղթանքներ Հարիւրամեակի տօնախմբութեանց առթիւ։

(Մուրատ-Ռափ. Նախկին Սաներու) Գահիրէի Յանձնաժողով

**Ill. Direttore Collegio Armeno Moorat-Raphaël ai Carmini - Venezia** Milano

Comitato Armeno d'Italia nel centenario fondazione codesta istituzione esprime deferente riconoscenza alla imperitura memoria Benefattori ed invia fervidissimi auguri Prosecutori opera eminentemente nazionale.

Տնօրէն Մուրատ-Ռափայէլեան Հայ Վարժարանին - Քարմինի, Վենետիկ — Միլան

Իտալիոյ Հայ գաղութի ժողովը այդ վարժարանի հիմնադրութեան Հարիւրամեակին առթիւ կը յայտնէ յարգալիր երախտագիտութիւն Բարերարներու անմահ յիշատակին և կը ղրկէ ամենաջերմ մաղթանքներ այդ գերազանցօրէն ազգային գործը Շարունակողներուն։

Յանձնաժողով Իտալիոյ Հայ Գաղութին

**Ecc.mo Abate Generale Mechitaristi - Venezia** Vittorio Veneto

Presente spirito celebrazione quale delegato Associazione Oriente Cristiano umilio ossequi bene augurando avvenire Armenia.

**Mons. Pancera**

Գերպ. Ընդհ. Աբբահայր Մխիթարեանց - Վենետիկ — Վիթթորիոյ Վենեթոյ

Հոգեպէս ներկայ տօնախմբութեան՝ իբրեւ նուիրակ Քրիստոնեայ Արեւելքի Ընկերութեան՝ խոնարհ մեծարանքներով բարեմաղթութիւններ կ'ընեմ Հայաստանի ապագային համար

Գերպ. Փանչերա

**Mékhitaristes - Venise** Alep

Felicitazioni glorioso giubileo auguri prosperità avvenire.

**Khanbéghian - Khatchadourian**

Մխիթարեանք - Վենետիկ — Հալէպ

Շնորհաւորութիւններ փառապանծ յոբելեանին և մաղթանքներ ապագային յաջողութեանց։

Հ. Վրթանէս Վ. Խանպէկեան (Տնօրէն Մխիթ. Վրժրնի. Հալէպ)
Բժ. Անդրանիկ Խաչատուրեան (Նախկին սան)

**Oulouhodjian - Venezia** Tiflis

Partecipo cuore feste centenarie.

**Hovhannessian**

Ուլուհօճեան - Վենետիկ — Թիֆլիս

Կը մասնակցիմ սրտով հարիւրամեայ տօնախմբութեանց։

Հ. Վահան Վ. Յովհաննէսեան
(Ուսումնապետ Մուրատեան Վրժ. Սեւր)

**Collège Arménien Carmini - Venise** Paris

Suis avec cœur parmi vous.

**Docteur Handjian**

Հայ Վարժարան - Քարմինի, Վենետիկ — Փարիզ

Սրտովս ձեզի հետ եմ։

Տոքթ. Խանճեան
(Նախագահ Մ. Ռ. Ն. Աշ. Միութեան)

digitised by A.R.A.R.@

**Collège Arménien - Venise** Nicosia

Quoique loin suis avec vous en ce jour mémorable.

**Alemshah**

Հայ Վարժարան – Վենետիկ Նիկոսիա

Թէեւ հեռու՝ սակայն ձեզի հետ եմ այս պատմական օրուան մէջ։

(Նախկին սան) Մ. Ալէմշահ

**Ill.mo Direttore Collegio Armeno Moorat-Raphaël ai Carmini - Venezia** Viserba

Benedico la memoria dei benefattori e coloro che con zelo la mantengono viva sostenendo la pia opera armena generatrice di bene coi miei fervidi voti per una continuazione sempre più degna dell'alto ideale.

Padre spirituale degli armeni dItalia. **Eghiscé Derbarsamian**

Վեր. Տեսուչ Մուրատ-Ռափայէլեան Վարժարանին – Վենետիկ Վիզերպա

Կ'օրհնեմ յիշատակը բարերարներուն և անոնց որ եռանդով կենդանի կը պահեն և կ'ապրեցնեն սրբազան հաստատութիւնը աղբիւր բարեաց. Ջերմագին մաղթանքներս շարունակութեանը համար միշտ աւելի արժանաւոր բարձր գաղափարականին։

Հոգեւոր Հովիւ Իտալիոյ Հայոց Եղիշէ քհնյ..Պարսամեան

**Direzione Collegio Armeno Moorat-Raphaël ai Carmini - Venezia** Milano

Amministrazione Chiesa Armena esultante gioia per centenario collegio esprime voti perenni prosperità e continuazione.

**Rettorato Chiesa Armena**

Տեսչութիւն Մուրատ-Ռափայէլեան Վարժարանի Քարմինի – Վենետիկ Միլան

Հայ. Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը կը բերկրի ուրախութեամբ վարժարանի հարիւրամեակին առթիւ և մաղթանքներ կ'ընէ անոր յաւերժական բարօրութեան և շարունակութեան համար։

Հոգաբարձութիւն Հայ. Եկեղեցւոյ

**Commission Organisation Centenaire Collège Moorat-Raphaël - Venise** Budapest

Anciens élèves Moorat-Raphaël de Budapest unissent voix d'allegresse et voeux sincères occasion centenaire écoles Moorat-Raphaël.

**Dr. Kambourian - Agob Tarian - Léon Pichmichian**

Յանձնաժողով Մ. - Ռափ. Վրժրնի. Հարիւրամեակին – Վենետիկ Պուտափեշտ

Պուտափեշտ բնակող Մուրատ – Ռափայէլեան Նախկին Սաները կը միացնեն իրենց ուրախութեան ձայնն և իրենց անկեղծ մաղթանքները առթիւ Հարիւրամեակին Մուրատ – Ռափայէլեան Վարժարաններուն։

Բժ. Գամպուրեան, Յակոբ Թարեան, Լեւոն Փիշմիշեան

**Collegio Armeno - Venezia** Viareggio

Immensamente addolorato non essere presente mando sentimenti profonda riconoscenza verso glorioso istituto dove ebbi fortuna essere educato esprimo voto che nell'Italia ospitale oggi grande ed imperiale per opera genio Mussolini nostro collegio abbia maggiore prosperità continuando educare figli nostra infelice adorata Armenia che nel vicino oriente difondono anche coltura italiana.

**Gizmegian**

Հայ Վարժարան – Վենետիկ Վիարեճիօ

Խորապէս ցաւելով ներկայ չըլլալուս համար, կը ներկայացնեմ խորին երախտագիտութեան զգացումներս հանդէպ այն փառապանծ Վարժարանին ուր բախտն ունեցայ կրթուելու։ Կը մաղթեմ որ, հիւրընկալ Իտալիոյ մէջ՝ որ այսօր մեծ է և կայսերական Մուսոլինիի հանճարին շնորհիւ, մեր Վարժարանը մեծագոյն բարօրութիւնն ունենայ շարունակելով կրթել մեր տարաբախտ պաշտելի Հայաստանին զաւակները՝ որ Մերձաւոր Արեւելքի մէջ կը ծաւալեն նաեւ իտալական մշակոյթը։

(Նախկին սան) Ճիզմէճեան



**Collegio Mechitaristi - Carmini, Venezia** Genève

Con sentimenti patriottici associomi festeggiamenti giubileo benemerito istituto Moorat-Raphaël

**Pilossian**

Վարժարան Մխիթարեանց – Քարմինի, Վենետիկ Ժընեւ

Հայրենասիրական զգացումներով կը միանամ Մուրատ – Ռափայէլեան արդիւնաւոր Հաստատութեան Հարիւրամեակին։

(Նախկին սան) Բժ. Շաւարշ Փիլոսեան

**Institut Moorat-Raphaël, Saint Lazare - Venise** New York

Occasion jubilé centenaire de votre magnifique institution présente sincères felicitations. C'est un insigne honneur et occasion rejuissant pour peuple arménien constater tout le bien qu'ont fait mes encètres en rependant longues années la lumière pour ceux qui la cherchaient. Meilleurs voeux de prosperité et longue vie.

**Hrant Aghamalian**

Մուրատ – Ռափայէլեան Վարժարան – Ս. Ղազար, Վենետիկ Նիւ Եորք

Առթիւ Ձեր պանծալի Վարժարանին Հարիւրամեայ յոբելեանին՝ կը ներկայացնեմ անկեղծ շնորհաւորութիւններս։ Հայ ժողովրդեան համար մեծ պատիւ է և պատճառ ուրախութեան՝ երբ կը նկատէ այն ամբողջ բարիքը զոր կատարեցին իմ Նախնիքս, երկար տարիներ լոյս սփռելով անոնց՝ որ զայն կը փնտռէին։ Լաւագոյն մաղթանքներս բարօրութեան ու արեւշատութեան։

(Սամուէլ Մուրատ բարերարի գերդաստանէն) Հրանդ Աղամալեան

**Collegio Armeno - Venezia** Neuchatel

Ricorrenza centenario fervidi auguri. Viva Armenia, Italia!

**Allievo - Dottor Minassian**

Հայ Վարժարան – Վենետիկ Նեօշաթէլ

Առթիւ Հարիւրամեակին ջերմագին մաղթանքներ։ Կեցցէ՛ Հայաստան և Իտալիա։

Նախկին Սան՝ Տոքթ. Մինասեան

**Comitato Festeggiamenti Centenario Collegio Armeno - Venezia** Roma

Dispiacentissimo non poter partecipare manifestazioni celebrative, prego ricevere migliori auguri pieno successo centenario.

**Hovsep Cambourian**

Յանձնաժողով տօնախմբութեանց Հայ Վարժարանին – Վենետիկ Հռոմ

Մեծապէս ցաւելով որ չեմ կրնար անձամբ մասնակցիլ հանդիսաւոր տօնախմբութեան ցոյցերուն, կը խնդրեմ որ ընդունիք լաւագոյն մաղթանքներս Հարիւրամեակի լիուլի յաջողութեան։

(Նախկին Սան)Յովսէփ Գամպուրեան

**Comunità Armena Carmini - Venezia** Camponogara

Partecipando feste commemorative desidero che cotesta insigne comunità monastica perseveri irradiare splendori fecondi sull'infelice nazione per la cui sospirata indipendenza prego con fervore.

**Dottor Menin Papas**

Հայ Հասարակութիւն – Քարմինի, Վենետիկ Քամփոնոկարա

Մասնակցելով տօնախմբութեան հանդէսներուն՝ կը ցանկամ որ այդ անուանի վանական Հասարակութիւնը յարատեւէ ճառագայթելու բեղուն պայծառութիւն տարաբախտ ազգին վրայ, որուն տենչալի անկախութեան համար ջերմագին կ'աղօթեմ։

Տոքթ. Մենին Քահանայ.



digitised by A.R.A.R.@

**Collegio Armeno - Venezia** S. Stefanocadore

Assente aderisco solenni cerimonie centenario.

**Avvocato Grego**

*Հայ Վարժարան – Վենետիկ* Ս. Ստեփանոս Քառորէ

*Բացակայ՝ կը միանամ Հարիւրամեակի հանդիսաւոր տօնակատարութեանց։*

*Փաստաբան Կրեկոյ*

**Collegio Armeno Moorat-Raphaël - Venezia** Bucarest

Auguro per inizio del secondo centenario tutte le Benedizioni celesti.

**Krikor Karakascian**

*Մուրատ – Ռափայէլեան Հայ Վարժարան – Վենետիկ* Պուքրէշ

*Կը մաղթեմ երկրորդ հարիւրամեակի սկզբնաւորութեան երկնային բոլոր օրհնութիւնները։*

*Գրիգոր Գարագաշեան*

**Collège Arménien Moorat-Raphaël - Venise** Nice

Navre absence forcée m'associe tout cœur allegresse centenarie et prie mes maîtres agréer sentiments gratitude.

**Papken Cavézian**

*Մուրատ – Ռափայէլեան Հայ Վարժարան – Վենետիկ, Իտալիա* Նիս

*Ստիպուելով բացակայիլ, կը միանամ բոլոր սրտով Հարիւրամեակի ուրախութեան և կը խնդրեմ իմ դաստիարակներէն որ հաճին ընդունիլ երախտագիտական զգացումներս։*

*(Նախկին Սան) Բաբգէն Գավէզեան*

**Collegio Armeno ai Carmini - Venezia** Wien

Congratulazioni auguri sentiti occasione centenario. Sempre riconoscente

**Taschdjian**

*Հայ Վարժարան – Քարմինի, Վենետիկ* Վիեննա

*Ուրախակցութիւններս և ջերմագին մաղթանքներս առթիւ Հարիւրամեակին։ Միշտ երախտա-պարտ*

*(Նախկին Սան) Թաշճեան*

**Reverendo Padre Cherubino Cerakian-Collegio Armeno Moorat-Raphaël - Venezia**

Santacristina Gardena

Esultante di fierezza rivolgo il mio devoto pensiero alla gloriosa triade immortale Moorat-Raphaël-Mechitar che furono quando la speranza si alimentava col sacrificio. Possa la loro memoria accendere i cuori e ravvivare il fuoco che per cento anni ha forgiato menti eccelse e anime di eroi per la patria lontana. Giungano i miei sentimenti di riconoscenza ai Padri Mechitaristi ed il mio fervido e cordiale saluto agli allievi ed ex-allievi del glorioso collegio.

**Simon Bayan**

*Մեծ. Հ. Քերոբէ Չրաքեան. Մուրատ – Ռափ. Հայ Վարժարան – Վենետիկ*

Սանքրիստինա Կարտենա

*Ցնծալից հպարտութեամբ կ'ուղղեմ իմ յարգալիր մտածումներս փառապանծ անմահ երրեակին՝ Մուրատի – Ռափայէլի – Մխիթարի որ գոյացան այն ատեն երբ յոյսը զոհերով կը սնանէր։ Թող իրենց յիշատակը վառէ սրտերը և բորբոքէ այն հուրը որ հարիւր տարուան ընթացքին դարբնած է մեծամեծ մտքեր և դիւցազներու հոգիներ մեր հեռաւոր հայրենիքին համար։ Թող հասնին իմ երախտագիտութեանս զգացումները Մխիթարեան Հայրերուն և իմ սրտագին ողջոյնս փառապանծ վարժարանին Աշակերտաց և Նախկին Սաներուն։*

*(Նախկին Սան Ճարտ.) Սիմոն Պայեան*



**Ecc. Abate Generale Cong. Mechitarista Collegio Armeno Carmini - Venezia** Padova

Anche a nome mio Padre assente per convalescenza inviamo fervida partecipazione all'Inaugurazione feste centenarie con animo commosso e memore della grande patria Armena.

**Khayel Arslan**

*Գերպ. Ընդհ. Աբբահայր Մխիթ. Միաբանութեան – Հայ Վարժարան – Քարմինի, Վենետիկ*

Փատուա

*Նաեւ յանուն հօրս՝ բացակայ ապաքինման պատճառաւ, կը ղրկենք ջերմագին մասնակցութիւն Հարիւրամեայ տօնախմբութեանց նաւակատիքին յուզուած հոգւով և յիշելով Հայ մեծապանծ Հայրենիքը։*

*Քայէլ Արսլան*

Bucaresti

**San Lazzaro - Venezia**

De ma part qu'on verse des lys.

**Glorighian**

Պուքրէշ

*Ս. Ղազար, – Վենետիկ*

*իմ կողմէս շուշաններ թող սփռեն։*

*(Նախկին Սան) Արշաւիր Կլորիկեան*

Detroit Mich.

**Congregation Mechitariste - Isola San Lazzaro - Venezia**

Hearty congratulations for centennial.

**Lachinian Family**

*Մխիթարեան Միաբանութիւն – Ս. Ղազար կղզի, Վենետիկ* Տիթրոյթ (Միչիկան)

*Սրտագին ուրախակցութիւններ Հարիւրամեակին համար։*

*Լաչինեան Ընտանիք*

Tripoli

**Collegio Armeno - Venezia**

Ricorrenza feste centenarie inviamo fervidi auguri benemerito collegio al quale siamo particolarmente grati per insegnamenti impartiti Gabriele. Auguriamo pure prospero avvenire Congregazione Mechitarista.

**Dev. Famiglia Zarmanian**

Թրիփոլի (Ափրիկէ)

*Հայ Վարժարան – Վենետիկ*

*Կը ղրկենք մեր ջերմագին մաղթանքները արդիւ-*
*Հարիւրամեակի տօնախմբութեանց յիշատակով երախտապարտ ենք մեր Գաբրիէլին տրուած դաս-*
*նալից վարժարանին՝ որուն հանդէպ յաւէտ յաջող ապագայ Մխիթարեան Միաբանութեան։*
*տիարակութեան համար։ Կը մաղթենք նաեւ*

*Ակնածուէր Ծառմանեան Ընտանիք*

digitised by A.R.A.R.@

# ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԻ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

**Ente Italiano Audizioni Radiofoniche – Torino**

VENEZIA 22/4/36. Nel prossimo agosto il collegio armeno Moorat-Raphaël di Venezia celebra il primo centenario della fondazione. Questo istituto raccoglie ed educa giovani armeni di tutte le parti del mondo istruendoli in varie lingue e facendo loro apprendere la cultura nazionale armena innestata nella bimillenaria civiltà romana. Da esso sono usciti giovani che sparsi nelle principali nazioni del mondo divennero illustri nelle arti, nelle scienze, nella letteratura, nella diplomazia, nel teatro e nel giornalismo. Il collegio Moorat-Raphaël ha professori di diverse nazioni per l'insegnamento delle varie lingue, ma fa amare sopratutto ai suoi alunni l'Italia, che gli armeni considerano loro seconda Patria. È diretto dai Padri Mechitaristi, ordine istituito da quell'abate Mechitar che nel 1717 ebbe in dono dalla Serenissima Repubblica Veneta l'Isola di S. Lazzaro, che con decoro occupano tuttora mantenendovi il faro sempre acceso di scienza e di arte a vantaggio dell'Armenia e gloria dell'Italia.

Questi dotti monaci durante la guerra europea per atto di solidarietà verso l'Italia protettrice accolsero buon numero di ragazzi della città di Venezia completandone gratuitamente gli studi presso il glorioso collegio.

STEFANI

**ԻՏԱԼԱԿԱՆ ՁԱՅՆԱՍՓԻՒՌԻ ԿԱՅԱՆ – ԹՈՐԻՆՈՅ**

ՎԵՆԵՏԻԿ, 1936 Յունիս 22։ Առաջիկայ Օգոստոսին՝ Վենետիկի Մուրատ–Ռափայէլեան Հայ վարժարանը կը տօնէ իր Հիմնադրութեան Առաջին Հարիւրամեակը։ Այս հաստատութիւնը կը հաւաքէ և կը դաստիարակէ հայազգի պատանիներ աշխարհիս ամէն կողմէ, կրթելով զանոնք զանազան լեզուներով և սորվեցնելով անոնց հայկական ազգային մշակոյթը՝ պատուաստուած Հռոմէական երկհազարամեայ քաղաքակրթութեան վրայ։ Անկէ ելած են պատանիներ՝ որոնք սփռուած աշխարհիս գլխաւոր ազգերուն մէջ, փայլեցան Արուեստներու, Գիտութեանց, Գրականութեան, Դիւանագիտութեան, Թատրոնի և Լրագրութեան մէջ։ Մուրատ–Ռափայէլեան վարժարանը ունի զանազան ազգերէ ուսուցիչներ զանազան լեզուներու ուսուցման համար, բայց ամէն բանէ վեր իր աշակերտներուն սիրելի կ'ընէ Իտալիան, զոր հայերը իբրև իրենց երկրորդ հայրենիքը կը նկատեն։ Զայն կը վարեն Մխիթարեան Հայրերը, որոնց կարգը հաստատած է Մխիթար Աբբահայր, որ 1717ին Վենետկեան Պերճափայլ Հասարակապետութենէն նուէր ընդունեցաւ Ս. Ղազարու կղզին, զոր ցարդ վայելչապէս կը գրաւեն միշտ վառ պահելով այնտեղ գիտութեան փարոսը յօգուտ Հայաստանի և ի փառս Իտալիոյ։

Այս գիտնական կրօնաւորները եւրոպական պատերազմի ատեն՝ ինչպէս բարեկամութեան հանդէպ պաշտպան Իտալիոյ՝ հիւրընկալեցին Վենետիկ քաղաքէն բաւականաթիւ տղաք՝ ձրիաբար լրացնելով անոնց ուսումը պանծալի վարժարանին մէջ։ (Թրգմ.)

ՍԹԵՖԱՆԻ (գործակալութիւն)

ԾԱՆ. — Այս ԾԱՆՈՒՑՈՒՄԸ եօթէն աւելի լեզուներով տրուեցաւ Թորինոյի վերոյիշեալ E. I. A. R. ձայնասփիւռ կայանէն, ինչպէս նաև Իտալական Մամուլի և Քարոզութեան Նախարարութեան հրահանգով Սթեֆանի գործակալութիւնը զայն հաղորդեց օտար կայաններու։

# ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

digitised by A.R.A.R.@